



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

6881

ՓՈՒԹԻՒՆ

ԱՄԱՐԿՈՒԹԻՒՆ Յ. ԳԵՂԵԶԵԱՆ ԳՐԱՄ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԿՐՕՆԻ ԴԱՍԵՐ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿԱՐԳԵՐՈՒ ՀԱՄԱՐ

28 (075)
Մ-97

Կ. ՊՈԼԻՍ

1910

ՏՊԱԿՐՈՒԹԻՒՆ
Յ. ՄԱՏԹԵՈՍԻՆ



ԳՐԱԾՈՒՅՆ
Յ. ԳԵՂԵԶԵԱՆ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ

28(075)

1 OCT 2009

ԱՐ-97

ԿՐՈՆԻ ԴԱՍԵՐ

ՔՐԻՍՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿԱՐԳԵՐՈՒ ՀԱՄԱՐ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ

6881

04 JUL 2013

ՏՊԱՐԱՆ, ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ, ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹԴԹԱՎԱՃԱՌԱՆՈՅ
Յ. Մ. Ս. Տ. Է. Շ. Ա. Ն.
Թիւ 27, Ֆիննամենըլար Խօգուտու, Կ. Պոլիս



62185-67

ՊԱՏՐԻԱՐքԱՐԱՆ ՀԱՅՈ

ԿՈՍՏԱՆԴՆԵՈՒՊՈԼԵԱ

ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ԱԶԳ. ԿԵՆ. Վ. Ա. Ր. Հ. Ե. Ա. Ն.

Համար 556

18 Փետրվար, 1940

ԱՐՏՕՆԱԳԻՐ

Գերաշնորհ Տ. Մոշեղ Ս. Եպս. Սերովեանի
կողմէ՝ Ազգային երկրորդական վարժարաններու և
Նախակրաքանութեան Բարձրագործ կարգերուն հա-
մար իբր դասազիրք պատրաստուած «ՔՐԻՍՏՈՆԵԱ-
ԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ» ահ-
ուամբ երկափորիւնը՝ Ազգ. Կեդր. Վարչութեան
Կրօնական Ճողովի վերծանելով ու համաձայն զր-
ևելով Հայ. Առաքելական Ս. Եկեղեցւոյ վարդա-
պետութեանց, կ'բոյլատք անոր կերառութիւնը, եւ
մեմբ լուս այս կ'հրամացեմի ի զործարութիւն:

Մնամ ալօրացար
ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՈԼԽՈՅ
ԵՎԼԻԵԿ Ա. Ր. Բ. Ե. Պ. Դ. Ո. Խ. Ե. Ա. Ն.

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՔՆՆՈՒԹԵԱՆ

Ա. Ա. Ա. Ա. Ա.

Տ. Տ. Տ. Տ. Տ.
Ա. Ա. Ա. Ա. Ա.
Ա. Ա. Ա. Ա. Ա.
Կ. Կ. Կ. Կ. Կ.

Յարձրաշնորհ Սրբազն Հայր

Կեզր. Կրօն. Ժողովիդ որոշումով քննութեան համար ինձ յանձնուած էլին Գեր. Տ. Մուշեղ Ս. Եպիսկ. Սերոբեանի Երկու հասոր ծեռագիրները, «Քրիստոնէական Բարոյականութ» եւ «Քրիստոնէական Եկեղեցւոյ Վարդապետութիւնը»

Առաջին զորձին առաջնորդ եղան A. OTTO^h La morale chrétienne, d'après les enseignements de l'Evangile, զոր մասամբ շատ ինքնախիպ ընդդայնումներով եւ մասամբ ալ հասկանալի թարգմանութիւնով մը հայացուցած է Գեր. հեղինակը, — ինչպէս ինք ալ խոստվանած է իր ծեռագիրի յաւաչաբանին մէջ, — ինձ ծանօթ է արդէն իր նպատակայարմաք եւ հետեւելի ուղղութիւնովը: Երկրորդ ծեռագիրն ալ բոլորվին անժանօթ չէր ինձ:

Գեր. Սրբազնին այս երկու ծեռագիրներու զնահատելի առաւելացիւնները, կամ աւելի ճիշգ՝ մինչեւ հիմսակ այս սեռին մէջ զուտ ինպրուած (Postulat) մնացած ուղամիտ ուղղութիւնը՝ հետեւեալ թուումներով կարելի է բնորոշել.

Ա. — Հոն, այդ երկու հատորներուն մէջ, քարոզուած է ճամշցուած ու ըմբռնուած Քրիստոս եւ անոր աւետարանին իսկական բարոյականը, այսպէս Քրիստոնէական ուսուցումին տալով իրական եւ անհնապատելի արժեք մը:

Բ. — Հոն շահապետած է Գաղափարը, զերծ մարդկային աւանդապաշտ մոլար վարդապետութիւններու ստրկական եւ շահադէտ հետեւողականութենէ, ինչպէս նաեւ զիտնական նախապաշարութիւններու անպատշաճ երգիծանըներէ եւ ժխտումնամլ միտումներէ, այսպէս դարաւոր անսպոտղ սովորամոլութենէ մը ծերբազատելով կրօնի ուսումը:

Ք. — Հոն կայ համոզումի անկեղծ ու համոզիր շեշտը, որ գործին կուտայ արդիւնաւոր եւ հարկադիրէ հեղինակութիւն մը:

Դ. — Հոն կը տիրապետէ՛ ընդհանրապէս Եկեղեցին եւ մասնաւրապէս Հայ Եկեղեցին ոդին, որ թոյլ կուտայ Սրբազնին քննադատել կրօնական կարգ մը կեղծիքներ ու սխալներ, յանուն երկչուութիւնով կամ տգիտութիւնով եւ. կամ շահախմնդրութիւնով քօղարկուած եւ հեղինակին խղմտօրէն անվերապահ անկեղծութիւնովը պարզուած աւետարանական շշմարտութեան. Հիմ բռնելով «Հականն ու «Կարեւոր»ը, անխախտ պահելով սեռն ու պարզ հաւատքի մը կենսական սկիզբը, նա շօշափած է նաեւ վարդապետական (doctrinal) եւ հրամանակարգական (dogmatico) ինտիրնեթ, չսորչելով զիտական լրւաբանութիւններէ՛ երբ հարկ է, այնչափ միայն՝ որչափ հասկանալի եւ կարեւոր է պատանի այն միտքերուն՝ որոնց համար պատրաստուած են այս երկու գործերը:

Ե. — Հոն կը տեսնուի ուսուցամող եւ քելադրոյ հկարագիր մը, որ այդ հաստրներուն կուտայ առաջնորդովի գեր մը ոչ միայն խելահաս ուսանողութեան՝ այլ նաև կարգ մը ինքնակոչ կրօնուսոյցներուն որոնք կրօնը Քրիստոնէականներուն մէջ միայն կը սորվին երբ հարկը կը պահանջէ, աւանդելու համար զայն աշակերտներուն, առանց անոր ոդին եւ եականին ըմբռնումին:

Վեցերորդաբար կարեւոր է յիշել նաեւ լեզուի ուղղութիւնն ու մարդութիւնը, որ աննախընթացօրէն առաւելակշիռ գիրք մը կ'ընծայէն Սրբազնին հեղինակութիւններուն՝ կրօնի ուսուցումին յատկացուած այս կարգի բոլոր աշխատութիւններուն մէջ:

Այս է իմ քննութեան արդիւնքը, զոր հաղորդելով Զեր Բարձր Սրբազնութեան, իրեւ նախազա՞նի Կեդր. Կրօն. Ժողովի, վափարելի եւ անհրաժեշտ կը գտնեմ որ Դեր. Տ. Մուշեղ Սրբազնի երկու հասոր այս գործերը պատուաբեր հեղինակի արժանիքն եւ հայ հոգեւորականութեան, օր առաջ ծառայեն իրենց առաջադրած եւ Ազգ. Կեդր. Կրօն. Ժողովի կողմէ բաշալերութեան եւ զնահասութեան արժանի նուիրական նպատակին:

Մատչելով ի համբոյր Ս. Աջոյն Ամեն. Ս. Պատրիարք Հօրդ Մնամ ամենախոնարհ որդի հրժ. անդամ Կրօն. Ժողովոյ ԳԱՐԵՒԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մեր Ազգային Վարժարաններու Կրթական-Ուսումնական ծրագրին մէջ Քրիստոնէական ուսման մասնաւոր տեղ մը տրուած ըլլալով հանդերձ պէտք է խոստովանիլ, թէ անիկա ցարդ պէտք եղածին պէս չ'աւանդուեցաւ մեր վարժարաններու աշակերտներուն, որոնք Հայ Առաքելական Ս. Եկեղեցւոյ զաւակներ ըլլալով հանդերձ գոնչ որոշ չափով մը չ'կրցին ընտելամսալ անոր բարոյականին եւ վարդապետութեանը Կրօնի ուսուցումը անուանական մնաց, ու գտնուեցան նոյնիսկ վարժարաններ, որոնք յանուն մանկավարժութեան!!! Իրենց ծրագիրէն արտարացնել վիրմանցին կրօնի ուսումին համար դասաստուի եւ դասագիրի ջոյութիւնը պատրաստելուի:

Ստոյդ է, թէ կրօնի ուսուցման համար ոչ դասաստու ունեցանք ցարդ, եւ ոչ ալ դասագիր:

Կարգ մը հեղինակներ մինչեւ հիմա ՎԵՐԻՍՏՈՆԷԿԱԿԱՆԻ, եւ ՈՒ-ԱԿԱՆ ԿՐՈՆԻ անուններու տակ կարգ մը դասագիրքեր նետեցին մէջտեղ, ապահովաբար օգտակար ըլլալով եւ օգտուելու նպաստակաւ: Բայց հակառակ հեղինակներուն առաջապրութեանը, չեմ կարծեր, թէ այդ դասագիրքերը պէտք եղածին չափ կրցին օգտակար ըլլալ մեր ուսմանողութեան: Անոնցմէ ոմանց չոր ու ցամաք հանգամանքը, եւ ուրիշներուն մաեկալարժական անունի տակ պարտկուած խառնակութիւնն ու անկապակցութիւնը, եւ մանաւանդ անոնց մէջ ԷԿԱԿԱՆԻ եւ ԿԱՐԵՎՈՐԻ պակասը, վերցուցած է անոնցմէ օգտակար ըլլալով կոչումը:

Մեր Ազգ. նախակրթարաններուն եւ երկրորդական վարժարաններուն բարձրագոյն կարգերուն կրօնի ուսուցման պէտքին գոհացուս տալու նպատակաւ, ծեռնարկեցինք պատրաստել մեր ՎԵՐԻՍՏՈՆԷԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԿԱՆ, եւ ՎԵՐԻՍՏՈՆԷԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՎՈՅ ՎԱՐԴԱՊԵՏԸՆԹԻՆ, որոնցմէ իւրաքանչւրը պատրաստուած է մէկ տարուամ զարդինացքի համար:

Չենք ըստր, թէ այս երկու հաստրները անթերի եւ ամենակատարեալ գործեր եղած ըլլան: Համարձակութիւնը ունինք, գոնէ, յայտարարելու, թէ բաղդատմաք ցարդ հրատարակուածներուն, ասոնք աւելի նպատակայարմար են Քրիստոնէական Կրօնի, բարյականի եւ

Վարդապետութեան ուսուցումին, եւ Հայ Առաքելական Ս. Եկեղեցւոյ մասնայատուկ վարդապետութեան տեսակէտով, իրենց ընտրած մեթոսովը, պարունակած նիւթերուն զասաւորումովն ու ամփոփումովը, եւ պատմական-բաղդատական ուսումնավրութեան սկզբունքին կրարկումով։

Մեր այս գործին մէջ խտացուցած ենք Քրիստոնէութեան այն Վարդապետութիւնները, որոնց գիտութիւնը անհրաժեշտ է ամէն քրիստոնէի, եւ Խորհուրդները, որոնցմէ մեծ մասը մեր ամենուս կեանքին հետ սերտ յարաքերութիւն ունի։

Վարդապետութիւններու եւ խորձուրդներու բացարութեան մէջ մեզ մեկնակէտ ընտրած ենք Քրիստոնէութեան Աւետարանական եւ Առաքելական աւանդութիւններ, եւ հիմնուած ենք Հայ Ս. Եկեղեցւոյ ըմբռնումներուն վրայ, մատնանշելով օտար եկեղեցիներու տարրերութիւնները խօսուած նիւթերու մասին։

Եւ եթէ կրօնի ուսուցիչները յօժարութիւնը ունենային աւանդուելով Յիւրին հետ վերաբերուիլ այնպէս, ինչպէս պարտաւոր է վերաբերուիլ պարկեցտ եւ հոգեսէր մէկը, այն հաւատքը ունինք, թէ մեր սոյն հատորներուն փրկարար արդիւնքը պիտի կրնանք ստանալ մեր վաղուան սերունդին հոգիներէն։

ՄՈՒՇԵԴ. ԵՊԻՍԿՈՊՈՍ

13/26 Ցումուար 1910, Աղեխանդրիա



ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՑ

ՎԱՐԴԱՊԵՏԾՈՒԹԻՒՆԸ



Ա. Կրօնները՝ որոնք Եկեղեցիով մը կը ներկայացնուին, երեք մասեր կը պարունակեն իրենց մէջ. Ա. Բարոյականները՝ որ նոյն կրօնքին կամ Եկեղեցիին պատկանող մարդերու կամ ժողովուրդի անհատներուն իրարու հետ և երբեմն ալ Աստուծոյ հետ ունենալիք յարաբերութիւնները կը ցուցնէ. Բ. Վարդապետութիւն՝ որ իր ներկայացնուած Եկեղեցիին կամ կրօնքին պատկանող անդամներուն ունենալիք հաւատքը կը սոհմանէ և Գ. Պատմութիւնները՝ որ նոյն կրօնքին կամ Եկեղեցիին հիմադիրին և Եկեղեցւոյ գոյութեան, կազմակերպութեան և վարչութեան յաջորդական ձեւերը կը նկարագրէ ու կը պատմէ. Առանց մանրամասնութեան մտնելու, կրնանք ըսել թէ ամէն կրօն և Եկեղեցի այս երեք տարրերէն միայն կը կազմուին։

Զ. Քրիստոնէական Եկեղեցին ալ միւս Եկեղեցիներու կամ կրօններուն մանց գրեթէ այդ երեք տարրերէն կը կազմուի. Քրիստոնէական Պատմութիւնը մեղի կը

ներկայացնէ իր աստուածային հիմնադիրին, անոր առաքեալներուն, եկեղեցւոյ հայրապետներուն և Քրիստոնէական եկեղեցւոյ իւրաքանչիւր դարու մէջ անցած կեանքին, ունեցած կոփեներուն, և անոր ամբողջ կրօնական կեանքին նկարագրութիւնը կ'ընէ մեզի: Քրիստոնէական վարդապետութիւնը մեզի կը սորվեցնէ այն հաւատքը՝ զոր պէտք է ունենայ Քրիստոնեան իր հոգեւոր փրկութիւնը կարենալ ձեռք բերելու համար: Քրիստոնէական Բարոյականը մեզի կը սորվեցնէ այն կեանքը՝ որուն սրբութիւնովը ու մաքրութիւնովը մենք զմեզ պիտի զանազանենք ոչ-Քրիստոնեայ ժողովուրդներու կեանքին, մեզի կուտայ այն կանոնները՝ որոնցմով պիտի կրնանք զմեզ զերծ պահել մեղքի և ապականութեան մոլորումներէն, և որ մեզի ցոյց կուտայ այն ճամբան՝ ուրկէ Քրիստոս քալեց և ուրկէ ամէն ճշմարիտ քրիստոնեայ պարտաւոր է քալել, աշխարհի խաղաղութիւնը և համերաշխութիւնը կարենալ պահպանելու համար:

Յ. Պէտք է ըսել թէ Քրիստոնէութիւնը տարբեր նկարագրով ազգերու և ժողովուրդներու քարոզուած ըլլալուն պատճառաւ, այդ ազգերը իրենց խորհելու, դատելու և ըմբռնելու կարողութեանը հետեւանքով կամ աւելի ճիշդ իրենց ցեղային նկարագրին ու խառնուածքին արդիւնքով դատապարտուած էին Քրիստոնէական ընդհանուր եկեղեցին ծոցը կազմել մասնաւոր եկեղեցիներ՝ որոնք անոնց անուններովը կոչուիլ սկսան: Ինչպէս առաքեալներու ժամանակ գոյութիւն ունէին Հրեայ-Քրիստոնէական եկեղեցիներ (ինչպէս Երուսաղեմի, Անտիոքի և այլն) և Յունա-Քրիստոնէական եկեղեցիներ (ինչպէս Կորնուսի, Եփեսոսի, Գաղատիոյ և այլն) նմանապէս առաքեալներէն ետքը այդ մանր բաժանումները հետզհետէ ձուլուելով Ե. դարէն սկսեալ սկսան աւելի մեծ հատուածներ ձեւացնել որոնց մէջէն ամենէն նշա-

նաւորներն են Սրեւելքի մէջ Յունական կամ Օրբունիս եկեղեցին և Հայաստանէայց կամ Հայկական Ուղղափառ եկեղեցին և Սրեւմուտքի մէջ Լատին կամ Կարուղիկէ եկեղեցին, որոնցմէ երեքն ալ Առաքելական կը կոչուին առաքեալներուն կողմէն քարոզուած և հաստատուած ըլլալնուն համար:

Դ. Եկեղեցիներու այս բաժանումը տեղի ունեցած է մէկ կողմէն ազգային-քաղաքական նկատումներով և միւս կողմէն եկեղեցւոյ վարդապետութիւններու մասին իրարու մէջ գոյութիւն ունեցող թիւրիմացութիւններու պատճառաւ: Ուրեմն պիտի կրնանք ըսել թէ եկեղեցիներու այս բաժանումը կրօնական տեսակէտով պարզապէս յառաջ եկած է վարդապետութեան մասին կազմուած ներհակ ըմբռնումներէ, որոնք հակառակ ի սկզբան անըշան ըլլալնուն, հետզհետէ անհամեմատ կարեւորութիւններ ստացան և եթէ ոչ բոլորովին անկարելի գոնէ դժուարին ըրին եկեղեցիներու տիեզերական միութիւնը: Քանի որ եկեղեցական այս բաժանումները գոյութիւն ունին, սոյն վարդապետութեան դասը աւանդած միջոցնիս Հայ Սուրբ Եկեղեցւոյ վարդապետական ըմբռնումը կամ հաւատաքը հիմ ունենալով պիտի ջանանք միեւնոյն ժամանակ ամփոփ կերպով ցոյց տալ այն տարբերութիւնները՝ որոնք գոյութիւն ունին այսօր այդ բաժանեալ եկեղեցիներուն մէջ:

Ե. Քրիստոնէական Ուղղափառ Եկեղեցւոյ հիմնական վարդապետութիւնները գրեթէ ամբողջովին ամփոփուած են այն Հաւատոյ Հանգանակին մէջ՝ որ խըմբագրուեցաւ և իր վերջնական ձեւը առաւ երեք տիեզերական ժողովներու մէջ, (այսինքն՝ Նիկիսյ, Կ. Պոլսոյ և Եփեսոսի): Այդ Հանգանակը գիտնալ պարտաւոր է ամէն Քրիստոնեայ որպէս զի կարող ըլլայ իր Քրիստոնէական Հաւատաքին տէրը դառնալ և անոր համեմատ ապրիլ իր

կեանքին մէջ : Այդ պատճառաւ է որ մեր Հայ Եկեղեցին ամէն առաւտեան ժամերգութեան կը կրինէ այդ Հանգանակը հետեւեալ կերպով .

«Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն Ամենակալ, յարարին երկնի և երկրի, երեւելեաց և աներեւութից : «Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս յՈրդին Աստուածոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ, միածին՝ այսինքն յէութենէ Հօր : Աստուած յԱստուծոյ է, լոյս՝ ի լուսոյ, Աստուած ձշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ և ոչ արարած : Նոյն ինքն ի բնութենէ Հօր որով ամենայն ինչ եղեւ յերկինս և ի վերայ երկրի, երեւելիք և աներեւոյթք : Որ յաղագս մօր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս՝ ՚ի Մարեմայ Սրբոյ Կուսէն Հոգւովն Սրբով : Որով էաւ մարմին, հոգի և միտ, և զամենայն որ ինչ է ՚ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք : Զարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն նասաւ ընդ աջմէ Հօր : Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր ՚ի դատել զիկնդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեամնն ոչ դոյ վախճան : Հաւատամք և ՚ի Սուրբ Հոգին յանեղն և ՚ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և ի մարդարէս և յաւետարանս : Որ էջն ՚ի Յորդանան, քարոզեաց յառաջեալմն և բնակեցաւ ՚ի սուրբն :

Հաւատամք և ի մի միայն ընդհանրական և առաջելական Ս. Եկեղեցի . ի մի մլրտութիւն, յապաշխարութիւն, ՚ի քաւութիւն, և ի թողութիւն մեղաց, ի յարութիւն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից, և ՚ի կեանս յաւիտենականս :

ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ

❸. Վերոյիշեալ Հաւատամքէն կը տեսնուի թէ անոր պարունակած վարդապետական առաջին սկզբունքն է Աստուածային Երրորդութեան վարդապետութիւնը : Այս պատճառաւ է որ Քրիստոնէական վարդապետութեան մասին խօսով գիրքերէն շատերը Երրորդութեան մասին խօսելով կը սկսին : Բայց որովհետեւ առանց կանչիաւ աշակերտին հասկցնելու Երրորդութեան երեք անձնաւորութիւններուն առանձին առանձին ունեցած վիճակները, յատկութիւնները, Երրորդութեան մասին խօսմիլը գժուարըմբոնելի պիտի բլլար, անոր համար մինք յարմար տեսանք խօսիլ նախ և առաջ Աստուածային Երրորդութեան երեք անձնաւորութիւններէն մէկուն՝ Քրիստոսի նկատմամբ՝ որ մեզի ամենէն աւելի ծանօթն է . այսպէսով ծանօթէն անծանօթին և որոշէն անորոշին բարձրանալու համար : Հետեւաբար այս գլխուն տակ պիտի խօսինք նախ Քրիստոսի և անոր մարդկութեանը նկատմամբ, որուն նպատակն է մարդկային փրկագործութիւնը և վերածնութիւնը :

❹. Արդէն մենք վերը տեսանք թէ Նիկիոյ հանգանակին երկրորդ և ուրիշ հատուածներ նույիրուած են Քրիստոսի այսինքն Աստուծոյ որդիին, որ մարդ եղաւ կամ մարմնացաւ այսինքն մարմին առաւ, աշխարհը նորոգելու և ամբողջ մարդկութիւնը գնելու իր անձին պատարագովը կամ զոհաբերութեամբը : Մենք հոս Քրիստոսի մարդեղութեան պատմութիւնը չպիտի ընենք, որովհետեւ նոր ուխտի պատմութեան մէջ արդէն աւանդուած է անիկա : Մենք հոս Քրիստոսի նկատմամբ պիտի

իսուինք վարդապետական, այսինքն հաւատքի տեսակէտով միայն :

8. Աւետարաններու և մարդարէութեանց ըմբռունումով խնդիրը քննած ժամանակնիս կը կազմինք սա համոզումը . Ասսուած ունի միաձին Որդի մը՝ որ իր բանն, խօսնէ, իր յաւիտենական նկարագիրը, որ իրմէն ծնած է՝ երբ տակաւին ժամանակ գոյութիւն չունէր և երբ դարեր տակաւին ծագում առած չէին : Որովհետեւ Ասսուած կոչուած է նաև յաւիտենական սկիզբը, հետեւաբար անկէ ծնող կամ աւելի ճշգր ծագող բանը կոչուած է յաւիտենական ծագում :

Անոր համար Հաւատամքին մէջ ըսուած է «Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ և ոչ արարած» Հաւատամքի այս կտորէն որոշ կերպով կը հասկցուի թէ Որդին կամ Բանն Աստուծոյ հաւասար և համագոյ եղած է Աստուծոյ պարզապէս իրմէն ծագած ըլլալոն համար :

9. Որդին կամ Քրիստոս երկինքէն իջաւ, այսինքն անտեսաննելի աշխարհքէն տեսաննելի կամ երկրաւոր աշխարհքը եկաւ, մեղքերով ապականուած մարդկութիւնը վերանորոգելու և փրկելու համար, Եւ եկաւ իր Աստուածային անձնաւորութեամբը բնակիելու մարդկային մարմնոյն մէջ, որով ծառայի կերպարանք հագաւ և իբրև Փրկիչ առաւ Յիսուս անունը (որովհետեւ Յիսուս Փրկիչ կը նշանակէ) և իբրև Աստուծոյ օծեալը Քրիստոս յորջորջուելով (որովհետեւ Քրիստոս օծեալ կը նշանակէ) եկաւ կենակցիլ մարդերու հետ՝ աշխարհի նորոգութեան իր պաշտօնը կատարելու համար: Կատարեալ մարդ և կատարեալ Աստուած՝ իր մէջ գոյութիւն ունեցաղ մարդկային բնութիւնն ու մարդկային կամքը հպատակեցուց իր Աստուածային բնութեան ու կամքին, իր պաշտօնին մէջ ըստ առնենայնի կարենալ յաջողելու հա-

մար : Միւս մարդերէ իր ունեցած տարբերութիւնը սա էր որ մեղքէն զերծ մնաց ինքը, հակառակ իր մարդկային բոլոր տկարութիւններուն :

10. Քրիստոնէութեան առաջին դարերէն սկսեալ գտնուեցան մարդիկ որոնք Քրիստոսի աստուածութիւնը ուրանալով ուզեցին անոր մէջ տեմնել ազնուացած մարդուած ու տիպար մարդը : Արիս ատոնց բոլոր գաղափարները ամփոփեց և յետոյ Քրիստոսի աստուածութիւնը յուրացողներուն պարագլուխը հանդիսացաւ և ասոր համար Ս. Կոյս Մարիամին համար կ'ըսէր Քրիստոսածին և ոչ թէ Աստուածածին : Քրիստոնէական ընդհանուր եկեղեցին թէպէտ նզովքով հերքեց Քրիստոսի աստուածութիւնը ուրացող այդ հերետիկոսութիւնները, բայց տակաւին գտնուեցան մարդիկ՝ որոնք յամառ մնացին իրենց այդ վարդապետութեանը մէջ, և այսօր կան Բողոքական եկեղեցիներ ալ որոնք Արիսուի նոյն վարդապետութիւնը ունին և այնպէս կը հաւատան թէ Քրիստոս Աստուած չէր, այլ պարզապէս մարդ մը՝ որուն բացառիկ յատկութիւններ չնորհած է Աստուած : Հայկական Ս. Եկեղեցին պահած է իր նախնեաց հաւատքը՝ որ աւետարանի հաւատաքն է միեւնոյն ժամանակ : Երբ աւետարանին մէջ որոշ կերպով գորուած է թէ, «ի սկզբանէ էր Բանն, և Բանն էր առ Աստուած և Աստուած էր Բանն... և Բանն մարմին եղեւ և բնակեաց 'ի մնզ» :

(Ցովհ. Ա. 1-14) — Ես և Հայր իմ մի եմք (Ցովհ. Ժ. 30): Որ ետեսն զիս, ետես զՀայրն... ես 'ի Հայր և Հայր յիս է . (Ցովհ. Ժ. 9-11) Այլեւս աւետարանի հաւատացողի մեր հանգամանքով չենք կրնար տարակուսիլ Յիսուսի Աստուածութեան և Հօր Աստուծոյ հետ անոր համագոյութեանը մասին: Քրիստոնէական բոլոր եկեղեցիները միեւնոյն հաւատքը ունին Յիսուսի և անոր Մարդեղութեանը նկատմամբ, բաց ի կարգ մը բողոքա-

կան յարանուանութիւններէ , որոնք հակառակ հին բուզոքականութեան դաւանանքին , Սրիսսեանց ու Սոլինեանց նման կ'ուրանան Քրիստոսի Աստուածութիւնը , ինչպէս վերև ըստնք :

ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

11. Քրիստոս իր նապատակին , այսինքն մարդկացին վերանորոգութեան և հոգեւոր փրկութեան կարենալ համար , ուզեց նախ իր մէջ բնակող մարդկային բնութիւնը սպաննելով մեռցնել իր ՄԱՐԴԸ կամ մարդկութիւնը , յետոյ զանի իրեն հետ յարուցեալ և նոր կեանքով մը կարենալ ապրեցնելու համար : Ահա այս պատճառով անիկա խաչուցաւ , մեռաւ , չարագործներու սահմանուած մահով մը և ինք որ իր վրայ առած էր մարդկային բոլոր մեղքերը զանոնք ալ մեռցուց իրեն հետ և գնեց մարդկութիւնը և զանոնք յաւիտենական կեանքով մը օժտեց : Ահա այս պատճառով Քրիստոս եղաւ մեր միակ Փրկիչը՝ որուն արիւնով մենք գնուեցանք : Որպէս զի այդ հոգեւոր փրկութեան մենք մասնակցինք , պէտք է որ նախ ունենանք ձշմարիտ և անկեղծ հաւատք մը դէպի թիսուսի անձը և անոր փրկագործութիւնը և այդ հաւատքով պէտք է միանանք անոր հետ : Զմել Յիսուսին միացնող հաւատքն է որ զմեղ պիտի արժանացնէ փրկութեան այդ ձրի չնորհին և մեղ պիտի դրդէ կատարելու Աստուծոյ պատուիրանները և զմեղ առաքինութեան ճամբռն մէջ պիտի դնէ :

12. Հսկնք թէ Քրիստոսի աշխարհ բերած հոգեւոր փրկութիւնը ձրի չնորհ մըն է Աստուծոյ . կողմէն մարդկութեան պարգեւուած : Կուզեմ ձեզի հասկցնել

թէ ինչ է ՇՆՈՐՀՅԲԸ : Սովորական խօսակցութեան մէջ շնորհ ըսելով կ'իմանանք որ և իցէ բարերարութիւն որ մէկուն կողմէն առանց ո և է փոխարինութեան տեղի կ'ունենայ : Այսպէս շնորհել ըսելով կ'իմանանք մեր ունեցածէն ո և է բան տրամադրելի ընել ուրիշին , առանց փոխարինութեան սպասելու : Կրօնական լեզուի մէջ , ՇՆՈՐՀՅԲ բառը իր սովորական նշանակութիւնը պահելով հանդերձ աւելի վեհ ու աւելի վսեմ նշանակութիւն մը կ'առնու և ընդհանրապէս կը նշանակէ Աստուծոյ կողմէն մարդուն տրուած ձրի պարգեւները , այս իմաստով ամբողջ տիեզերք շնորհ մըն է Աստուծոյ կողմէն ստեղծուած : Սակայն Քրիստոնէական ըմբունումին մէջ շնորհ բառը աւելի մամնաւոր իմաստ մը կ'առնու ու կը նշանակէ այն գերբնական ու հոգեւոր պարգեւները զոր Աստուծած մարդուն կուտայ առանց անոր անարժանութեանը նայելու , պարզապէս անոր փրկութիւնը և յաւիտենական երանութիւնը ապահովելու համար : Այս պատճառաւ է որ երբ կը տեսնենք Քրիստոնէական առաքինութիւններով զարդարուած մէկը , անոր կուտանք շնորհալի անունը և այդ բառով այն մարդուն մէջ Քրիստոնէական մաքուր կեանքի մը գոյութիւնը հաստատած կ'ըլլանք : Զենք կրնար ըսել թէ ամէն մարդ իր ամբողջ կեանքին մէջ կարող եղած ըլլայ այդ չնորհները պահպանել . քանիներ կան որոնք չեն ճանցած իրենց արուած չնորհներուն արժէքը և զանոնք իրենցմէ հեռացուցած են անկարգ կեանքի մը ապականութիւններով : Այսու հանդերձ չկայ մարդ մը որ իրապէս Քրիստոնեայ եղած ըլլայ և չունենայ վայրկեաններ իր կեանքին մէջ՝ ուր այդ չնորհներու ապաւորութեան տակ ընկճուած ինքնիրեն չհարցունէ թէ ի՞նչ էր ինքը , թէ ի՞նչ էր իր հոգին վիճակը , թէ ի՞նչ պիտի ըլլայ իր վախճանը . խլՃի այդ զարթումին ժամանակն է որ մարդ կ'ըմբռնէ իրեն տըր

ուած չնորհքին քաղցրութիւնը և զանիկա կորմացուցած ըլլալուն դառնութիւնները : Թէ ինչպէս մարդ կրնայ այդ կորմացուցած չնորհքներուն նորէն տիրանալ , այդ մասին ետքը պիտի խօսինք :

13. Բայնք թէ մեղքերու մէջ ապականուած և Աստուծմէն հեռացած մարդկութեան հոգեւոր փրկութիւնը Քրիստոս միայն բերաւ աշխարհք և իբրև ձրի չնորհք զանի պարգեւեց մարդկութեան : Մարդկային ամէն անհատ այնքան ապականուած էր և Աստուծոյ պատկերը այնքան եղծուած էր ամբողջ մարդկութեան վրայէն որ այդ մարդկութենէն և ոչ մէկ անդամ պիտի կրնար իբրև միջնորդ ծառայել այդ ձրի շնորհին , ինչած մարդկութիւնը Աստուծոյ հետ հաշտեցնելու համար : Յանցաւոր մը յանցաւորին ՚ի նպաստ և կամ ոճրագործ մը ոճրագործին համար չի կրնար Աստուծոյ առջև միջնորդել : Այս հաւատքը այնքան հաստատուն տեղ մը բնած էր ամբողջ մարդկութեան մէջ , որ նոյն իսկ հեթանոսներէն մարդիկ սա համոզումը և հաւատքը ունէին թէ երկնային ոգի մը պիտի գար իբրև միջնորդ մարդկութիւնը Աստուծոյ հետ հաշտեցնելու , և զանիկա փըրեկելու համար : Այս հաւատքին իբրև արդիւնք Աթենացիք «ԱՆԾԱՆՈԹԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ» բագին մը կանգնած էին իբրև խորհրդանշան իրենց ապագայ փրկութեան յոյսերուն . և երբ Պօղոս Սուաքեալ Աթէնք գնաց Քրիստոնէութիւնը քարոզելու , տեսնելով իրենց ապագայ փըրկութեան յոյսերուն խորհրդանշանը եղող Անծանօթին Աստուծոյ այդ բագինը , անսնց ըսաւ . «Դուք այդ ԱՆԾԱՆՈԹ ԱՍՏՈՒԾԸ չճանչնալով կը պաշտէք , ես նոյնը ձեզի կը քարոզեմ : (Գործ . Առաք . Ժէ . 23) : Եգիպտացիք նորէն այդ հաւատքին արդիւնքով ունէին «Փրկիչ մարդկան» չաստուածը որուն պաշտօն կը մատուցանէին : Սդանտինաւեան դիցաբանութիւնը նոյն համոզումով կը

հաւատար «ԳԵՐԱԳՈՅՆ ԷՍԿԻ ՄԻԱԾԻՆ ՈՐԴԻԻԻՆ» որ իրենց հաւատքով մարդոց և Աստուծոյ միջնորդը պիտի ըլլար և պիտի ջախջախէր մեծ վիշապին գլուխը : Արդէն գիտենք թէ Մովսիսականութեան մէջ Փրկիչին գալստեան հաւատքը ամենէն զօրաւորը եղած էր և մարդաբէներու թուղթերը անոր գալստեան մասին կատարուած գուշակութիւններով լեցուն են՝ միայն թէ հեթանոսութեան մէջ Փրկչի գալստեան աւանդութիւնները չկրցան իրենց որոշ հանգամանքը պահել և շատ շփոթ կերպով կը ներկայանան մեղի : Աւելորդ կը սեպենք այս մասին պատմութեան մէջ տեսնուած բոլոր վկայութիւնները միառմի թուել : Միայն անոնցմէ հատ մը իբրև օրինակ հոս գնենք . Տակիասու , Հոռվմայեցի պատմիչը , նախկին դարերու քրմական յիշատակարաններուն ակնարկելով կ'ըսէ . «Բուրմերու հին գրուած քններուն ըսածին նայելով նոյն ատենները Սրեւելք նոր զօրութիւն մը պիտի հագնի և թէ Հրէաստանէն մէկը պիտի ելլէ , և աշխարհի պիտի տիրէ :» Նմանապէս Սուէտոն կը գրէ . «Բոլոր Սրեւելքի մէջ հաստատուն կարծիք մը տարածուած կայ : Գուշակները որոշած են թէ նոյն ժամանակները Հրէաստանէն մէկը պիտի ելլէ որ տիեզերական թագաւորութիւն պիտի ունենայ :» Ինչպէս կը տեսնուի հեթանոսական այս ըմբռնումներուն մէջ թէպէտ սա համոզումը կայ թէ Հրէաստանէն պիտի ծնի մէկը , բայց աւանդութիւնները այնքան շփոթուած են որ անոնցմէ և ոչ մէկը կրնայ ըմբռնել թէ Քրիստոսի հիմնելիք «Տիեզերական թագաւորութիւնը» հոգեւոր սահմանի մը մէջ միայն տեղի պիտի ունենար , ինչպէս յետոյ Քրիստոս ինքը յայտարարեց թէ «իմ թագաւորութիւնս այս աշխարհէն չէ :» (Ցոլէ . ԺԲ . 36) :

14. Ինչպէս ըսմինք Հրեաններուն մէջ միայն կարելի եղածին չափ որոշ կերպով պահպանուած էր Փրկիչ

շին գալստեան ակնկալութեան յոյսը և անոր վերաբերեալ վարդապետութիւնները : Այդ մարդարէութիւններուն մէջ որոշ կերպով կը տեսնուի թէ Հրեաները ի՞նչ ընդունելութիւն պիտի ընէին այդ երկնաւոր առաքեաւ վն, թէ ի՞նչ պիտի ըլլար անոր կեանքը երկրի վրայ և թէ ի՞նչ վախճան պիտի ունենայ անիկա : Աւելորդ է ըսել թէ ի՞նչ որ գուշակուած էր մարդարէներուն կողմէն ամէնքն ալ կատարուեցան Քրիստոսի անձին վրայ : Եւ որովհետեւ Քրիստոս եղաւ մարդկութեան հոգեւոր փրկութեան և անոր բարոյական բարձրացման միակ միջնորդը և որովհետև ինքն եղաւ աշխարհի վրայ կրօնական յեղաշրջութեան ազնուացնող գաղափարին ներմուծող՝ իրաւամբ պիտի կրնանք ըսել որ թէ հին հեթանոսական և հրէական ակնկալութիւններու հետեւանքով և թէ իր կատարած մեծ գործին արդիւնքով Քրիստոս եղաւ աշխարհի կրօնական ըմբռնումներուն կեղծրոնը կամ կորիզը : Եւ իբրև այդ, պիտի կրնանք ըսել թէ Քրիստոնէութիւնը իբրեւ Աստուծոյ կողմէն յայտնուած կրօնաք ուրիշ բան չէ եթէ ոչ աշխարհի կրօններու ընդհանրապէս և Մովսիսականութեան մասնաւորապէս լաւ ըմբռնուած, լաւ բացայատուած և աւելի մարդկայնացած ու աստուծայնացած ձեւը :

¶5. Սովորական մահկանացուներու համար գերեզմանը հանգրուան մըն է ուր ընդհանրապէս կանգ կ'առնու մարդկային կեանքը, մարդկային պատմութիւնը, մարդկային գործերը և գերեզմանը մեծ վերջակէտը կ'ըլլայ մարդկային բոլոր գործառնութիւններուն : Հասարակ մահկանացուներու կեանքին սահմանուած այս վերջաւորութիւնը անշուշտ չպիտի կրնար փակել մեր երկնաւոր վարդապետին կամ աստուծային միջնորդին կեանքին ալ պատմութիւնը : Անիկա պէտք էր որ անման մնար այն սկզբունքներուն նման, դորս աշխարհի

քարոզեց և այն հոգիներուն նման, որոնց երջանիկ անմահութիւնը պատրաստեց : Եւ Աստուծած իր միածինին համար սահմանած էր յարութիւն մը որ տեղի պիտի ունենար իր թաղումէն քառասուն ժամ վերջը, կամ սովորական բառով իր մահուանէն երեք օր վերջը : Եւ յարուցեալ Քրիստոսը եղաւ որ կրցաւ կազմակերպել քրիստոնէութիւնը և Եկեղեցին, որոնք առանց յարուցեալ Քրիստոսին ոչ հիմ պիտի ունենային և ոչ կաղմակերպութիւն : Զենք գիտեր թէ Քրիստոս ինչ մարմինով յարութիւն առաւ . որչափ որ այս մասին տարբեր խորհութանք ալ կը գտնուին՝ բայց սա ստոյգ է թէ քանի որ Աւետարանի պատմութեան համաձայն աշակերտները նորէն անոր շուրջը կը հաւաքուին զանիկա ձանչնալով և անոր վիրաւոր մարմինը շօշափելով, Քրիստոս յարութիւն առած էր գրեթէ ձիշտ այն մարմինով որով խաչուած ու թաղուած էր : Իր քառասնօրեայ կեանքէն վերջ յարուցեալ Քրիստոս նորէն թողուց այս տեսանելի աշխարհը և երկինք համբարձաւ մտնելու համար աներեւոյթ աշխարհը՝ ուր մարմնացեալ բանը նստաւ ընդաշմէ Զօր որուն հետ էութեամբ միացած է : Եկեղեցին կը հաւատայ թէ Քրիստոս նորէն պիտի գայ աշխարհ, զատելու մարդերը, վարձարելու բարիները, և չարերը պատմելու համար երբ այլեւս աշխարհ իր վախճանին հասած պիտի ըլլայ :

¶6. Ինչպէս վերը ըսինք Քրիստոսի կատարած փրկագործութիւնը, արդիւնք էր Աստուծային ձրի շնորհին : Այս վարդապետութիւնը որ հին առաքելական եկեղեցւոյ դաւանանքը եղաւ, դժբախտաբար կարգ մը եկեղեցիներու կողմէ տեղի ունեցած վերջամուտ կամայական յաւելումներով խանգարուեցաւ և ընդհանուր եկեղեցւոյ մէջ կարգ մը վիճաբանութիւններու տեղի տուաւ : Հոռվմէական Եկեղեցին որ միշտ սուտ ու

միալ վարդապետութիւններով քրիստոնէութիւնը խճռոցիլու և քմահած տնօրինութիւններով քրիստոնէութեան ուղիղ վարդապետութիւնը կործանելու տեսակ մը ջանք ունեցած է, փրկագործութեան վարդապետութեան մէջ ալ կարդ մը վերջամուտ յաւելումներ ըրաւ, և այսպէս սով հեռացաւ բուն իսկ քրիստոնէական վարդապետութեան։ Այլ պապականներուն համար պապի մը կոնդակը շատ աւելի արժէք ունի քան թէ բուն իսկ Աւետարանը։ Փրկագործութեան վարդապետութեան մէջ Կաթոլիկներու կողմէ մտցուած միալ վարդապետութիւններն են. 1. Առաջին շնորհը մենք մեր արդիւնքով կը վասկիին։ Կաթոլիկներուն այս սկզբունքը բոլորովին կը հակասէ Աստուծոյ կողմէն արուած չնորհքին, երբ մանաւանդ մենք գիտենք թէ անիկա ձրի է և ու իցէ գործի փոխարէն չէ որ մեղի կը արուի։ 2. Կաթոլիկ Եկեղեցին կ'ընդունի թէ մարդկային փրկագործութեան մէջ, սուրբերը լիակատար արդիւնք ունին, թէ այդ արդիւնքներով հոգեւոր գանձ մը կազմուած է, և թէ այդ գանձին մատակարարութիւնը պապին արամագրութեան տակ կը գտնուի և թէ պապը ուղածին պէս կրնայ զանիկա ողջերուն և մեռելներուն չնորհել ներողութիւններուն^(*) (Indulgence) միջոցաւ։ Սուրբերու մամին կազմուած այս վարդապետութիւնը բոլորովին հակաքրիստոնէական վարդապետութիւն մըն է։ Պէտք է գիտնալ թէ մարդ ինչ որ ալ եղած ըլլայ անձնական արդիւնք չունի Աստուծոյ առջև։ Գոյութիւն ունեցող արդիւնքը Քրիստոսին է միայն և Քրիստոսով մեղի եղած ու մեղի արուած այդ արդիւնքին չնորհիւն է որ մենք կրնանք փրկուիլ։ Պապերուն բաշխած ներողութիւնները ինչ գնով որ ալ ըլլան պարզապէս շահա-

խնդրական խարդախութիւններ են կրօնքի անունով գործուած։ Ստոյգ է որ արեւելեան առաքելական եկեղեցին մեր սուրբ եկեղեցին ալ սուրբերու մասնաւոր յարգանքը իրեն սովորական ձեւէն անդին չանցնիր և եկեղեցին պաշտօնապէս անոնց վրայ անձնական արդիւնք չի տեսներ բնաւ։ Զանոնք կը յարգէ ու կը պատուէ միայն անոր համար որ անոնք իրենց կեանքը և իրենց արիւնը տըւած են քրիստոնէական դատին յաջողութեանը համար։ Եւ եթէ երբեք մեր եկեղեցին պաշտօնական դաւանանքէն գուրս մեր ժաղովուրդէն ոմանք իրենց տգէտ միամտութեամբը սուրբերուն վրայ արտակարդ կամ աստուածային զօրութիւն մը տեսնել կ'ուզեն, ատոր պատասխանատուութիւնը մեր Եկեղեցին վրայ չի ծանրանար, այլ պարզապես Կաթոլիկ Եկեղեցին յոռի ազգեցութեանը վրայ։ 3. Կաթոլիկ Եկեղեցին կ'ընդունի թէ Ս. Կոյս Մարիամ անարատ յըութեամբ ծնած է, թէ անիկա Քրիստոսի հետ գործակից եղաւ մեր փրկութեանը համար, թէ միջնորդ եղաւ Աստուծոյ առջե Քրիստոսի նման և թէ Ամենասուրբ Երրորդութեան պատին է։ Այս մասին Կաթոլիկ Եկեղեցին կազմած մոլար վարդապետութիւնը ոչ միայն կը հակասէ Աւետարանի վարդապետութեան, այլ և կը նուազեցնէ Աւետարանով մեղի քարոզուած Քրիստոսի փրկագործութեան կարեւորութիւնը։ Արեւելեան Եկեղեցիները, ինչպէս նաև մեր Ս. Եկեղեցին, Մարիամի անարատ յըութեան այդ պապական ցնորքը կը մերժեն բոլորովին և Քրիստոսի բաղդատամբ Մարիամին Երկրորդական գրեթէ անմշան տեղ մը կուտան քրիստոնէական տնտեսութեան մէջ։ Եւ արդէն ասկէ աւելի քրիստոնէական և արամագանական ընթացք կարելի չէր ունենալ, քանի որ մենք գարերու փորձառութեամբ գիտենք թէ Կա-

(*) Ներողութիւններու մասին, տես 71րդ յօդուածը։

Թողիկ եկեղեցին Մարիամի մասին իր կազմած սխալ վարդապետութիւններու ծայրայեղութիւններով աւելի Մարիամապաշտ եղած է քան Աստուածապաշտ: Եւ եթէ անոնց աղօթագիրքերը բանահնք, պիտի տիսնենք թէ միմիայն Աստուծոյ ուղղուելիք աղօթքները Մարիամին և իրենց գլւաւոր սուրբերուն ուղղուած են: Փրկա-գործութեան վարդապետութեան մասին Անկլիքան և Բողոքական եկեղեցիները մեծ տարբերութիւն մը չունին գրեթէ մեր և արեւելեան եկեղեցիներուն հետ, և եթէ երբեք անոնց աստուածաբաններէն ունահնք հաւատքով արդարանալու վրայ քիչ մը շատ պնդած են, ասոր պատճառն ալ պարզապէս սա է որ Կաթոլիկ եկեղեցին քարոզած գործքով արդարանալու ծայրայեղութիւնը զիրենք հակառակ ծայրայեղութեան մղած է:

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

18. Սուրբ Հոգին քրիստոնէական վարդապետու-թեան մէջ շատ կարեւոր տեղ մը կը բռնէ, ոչ միայն անոր համար որ Երրորդութեան մէկ անձնաւորութիւնն է ինքը, այլ և անոր համար որ ինքն է այն միջոցը՝ որով մեղի շնորհ կը տրուի և ընդհանուր հաւատք մըն է թէ մարդու կեանքը բարիին ու չարին միջև շարու-նակական կուի մըն է, և աշխարհի ընդհանուր փորձա-ռութիւնը անհերքելի կերպով ցոյց տուած է թէ մար-դու բնութիւնը, իր խառնուածքին բնական բերմամբ հակամէտ է գայթելու գէպի չարին կողմը: Այդ պատ-ճառաւ է որ Աստուած իր Ս. Հոգին կը դրկէ մարդուս, իրեւ աստուածային օժանդակ մը անոր, որպէսզի մարդ-

կարող ըլլայ յաղթող հանդիսանալ իր կեանքի կոռուին մէջ և ինքինքը արժանացնէ աստուածային փառքին: Մարդուս մէջ երեւան եկող հոգիին այս աղդեցութիւնն է որ Շնորհի կը կոչուի, որովհետեւ Աստուծոյ կողմէն եղած այդ օգնութիւնը կամ օժանդակութիւնը ձրի պարզե մըն է միայն, որուն արժանանալու համար մարդ-անձնական արդիւնք մը կամ արժանաւորութիւն մը չունի բնաւ: Ահա այս պատճառաւ պիտի կրնանք ըսել թէ Հոգին է մեզ կենդանացնողը և ինքն է որ մեզմով կը յաղթէ աշխարհի փորձութիւններուն:

18. Հոգին Սուրբ իրեւ Շնորհաց աղքիւր և իրեւ պատճառ մեր կենդանութեան, Երրորդութեան մէջ մին է աստուածային երեք անձներէն և Որդիին կամ Քրիստոսի ու Հօր Աստուծոյ հետ կը կազմէ Երրորդու-թիւնը: Քրիստոս կամ Որդին աշխարհ եկաւ ծնունդով, իսկ Հոգին աշխարհ զրկուեցաւ քիումով: Սուրբ Հո-գիին առանձին անձնաւորութիւն մը ըլլալուն բաւական իրական ապացոյցներ կան Աւետարանին մէջ, բուն իսկ Քրիստոսի կողմէն արտասանուած: Օրինակի համար երբ Քրիստոս իր ախուր աշակերտներուն ուղեկով խօսքը կըսէր. «Ես պիտի աղաչեմ Հօրը և անիկա ուրիշ միսի-թարիչ պիտի զրկէ ձեզի որ ձեզի հետ պիտի բնակի. (այսինքն) ձշմարտութեան հոգին զոր Հայրը իմ անու-նովս պիտի զրկէ, Անիկա պիտի սորվեցնէ ձեզի ամէնս բան: Երբ որ միսիթարիչը գայ, անիկա պիտի վկայէ իմ մասիս: Մինչեւ որ ես չերթամ, միսիթարիչ չպիտի գայ ձեզ և եթէ երթամ զանիկա ձեզի պիտի զրկեմ, որ ձեզ պիտի առաջնորդէ ամենայն ձշմարտութեամբ. (Յովհ. Ժ. 15—26, ԺԵ. 26, ԺԶ. 7—13): Քրիստոսի այս և այսպիսի խօսքերը որոշ կերպով կը ցուցնեն թէ Ս. Հո-գին կամ միսիթարիչը (Paraclete) իրմէ զատ ուրիշ անձ-նաւորութիւն մըն է որ կը դրկուի կամ պիտի զրկուի

մարդերը զօրացնելու աշխարհը յանդիմանելու և քրիստոնեաներն ու քրիստոնէութիւն առաջնորդելու համար :

19. Նախորդ հաստուածին մէջ ըսկնք թէ Հոգին աշխարհ զրկուեցաւ Աստուծմէ բխումով կամ թիւելով : Թէ ի՞նչ է ծնունդին և բխումին տարբերութիւնը բաւական դժուար է բացատրել, մանաւանդ աշակերտներու կարենալ հասկցնելու համար : Արդէն մինչև հիմակ տրուած բացատրութիւններն ալ երբեք չեն կրցած գուհացնել մարդկային միտքը որ նիւթին օրէնքէն շրջապատուած աննիւթը ըմբռնելու կարողութենչն զուրկ կը գանուի : Եկեղեցւոյ հայրեն ալ չեն կրցած որոշ բան մը ըսել այս մասին և միշտ խուսափած են իրենց չկրցած ըմբռնածը բացատրելէ : Միայն ծնունդին ու բխումին մէջ եղած տարբերութիւնը աղօտ կերպով բացատրած ըլլալու փորձը ըրած են ցուցնելով մարդուս մէջ գաղափարին ծնունդը և խօսքին արտաբերումը որոնք թէպէտ միեւնոյն խորհուրդը կ'արտայայտեն, բայց իրարմէ տարբեր են բոլորովին : Խորհուրդը կը ծնի, խօսքը կ'արտաբերուի . ինչպէս նաև տարբեր են խօսքի ծնունդը և շունչին փշումը : Եւ այնչափ յոգնեցուց Եկեղեցւոյ հայրերը Հոգւոյն բխման այս խնդիրը՝ որ Երուսաղէմի Հայրապետ Ս. Կիւրեղ իր Կոյրում Ընծայուրեան գրքին մէջ ստիպուեցաւ սապէս գրելու . «Ս. Հոգին Ս. գրոց մէջ խօսեցաւ, իր մասին ըստ այնչափ և ինչպէս որ ուզեց, և ոչ թէ որչափ ուզեց, այլ որչափ որ մենք ըմբռնելու կարող էինք : Հիմակ ես ալ միայն այնչափ ըսփ (Ս. Հոգիին նկատմամբ) որչափ ինքը ըստաւ, որովհետեւ ինչ որ ինք ըստաւ, զանիկա չենք կրնար քննել : Վերջապէս մեր ըսելիքը ան է թէ երբ խնդիրը Քրիստոսի աշխարհ գալուն վրայ է, անոր համար կըսենք «Աստուծմէ ծնած» . իսկ երբ խնդիրը Հոգւոյն վրայ է

կ'ըսենք «Հօրմէն բխած» : Այս է առաքելական ուղղափառ Եկեղեցւոյ դաւանութիւնը :

20. Արեւելեան ուղղափառ եկեղեցին, որուն մէկ մասն է Հայկական Եկեղեցին, կը հաւատայ և կ'ընդունի թէ Ս. Հոգին հաւասար և էակից է Երրորդութեան միւս անձնաւորութիւններուն հետ, այսինքն Հօր և Որդիին հետ և անոնցմէ կը տարբերի միմիայն իր անձնաւորական յատկութիւններովը : Ինքն էր որ ներշնչեց Ս. գրքին հեղինակները Աստուծոյ կողմէն յայտնուած ձմարտութիւնները գրելու, ինքն էր որ Յորդանանու վրայ աղաւնակերպ իջաւ Քրիստոսի մկրտութեան ատեն, անոր Աստուծոյ որդիութիւնը վկայելու : Ինքն էր որ նոյն կերպարամքով իջաւ վերնատունը (Հոգեղալոռոստ) և զօրացուց յուսահատ առաքեալները : Ինքն էր որ սուրբերու մէջ բնակեցաւ, այդ տկար արարածներէն Քրիստոնէութեան նահատակները պատրաստելու համար : Ս. Հոգիին այդ բոլոր երեւումները, յայտնութիւնները և արդիւնքները քարոզելու համար է որ Հաւատոյ հանգանակին մէջ ըստուած է . «Որ էջ ի Յորդանան, քարոզեաց յառաքեալմն և բնակեցաւ ի սուրբան» : Հոս չի վերջանար սակայն Հոգիին ազգեցութիւնը : Անիկա կը շարունակէ իր բարերար ազգեցութիւնը բոլոր անոնց վրայ, որոնք իր ձրի չնորհին պէտք ունենալին կը զգան, և Եկեղեցիին միջոցաւ ամբողջ աշխարհին կը խօսի : Հոգիին այդ ազգեցութիւնն է որ Եկեղեցիին տուած է անխսալութիւն մը՝ զոր դժբախտաբար և անիրաւորէն 1870—71ին Հոգվմի Պապերը ուղեցին իրենց անձնն սեփականել :

21. Կաթոլիկ Եկեղեցին ինչպէս դաւանական շատ մը ինդիրներու մէջ, նմանապէս Հոգւոյն բխման խնդրոյն առթիւ նոր և ինքնահնար յաւելումներ մտցուց Հաւատոյ Հանգանակին մէջ և անգամ մըն ալ պատճառ

եղաւ կրօնական երկպառակութիւններու : Անոնք Նիշիոյ , կ . Պոլսոյ և Եփեսոսի երեք տիեզերական ժողովներու կողմէ բանաձեւուած ու վաւերացուած հաւատոյ Հանգանակին մէջ գտնուող «Ի Հօրէ բխի» բացատրութիւնը այլափոխեցին և գրեցին «Ի Հօրէ և յՈրդւոյ բխի» : Ի սկզբան Կաթոլիկ Եկեղեցին այդ այլափոխութեան հակառակեցաւ , որովհետեւ մենք պատմութենէն զիտենք թէ երբ Զ. ու Ե. դարուն Սպանիոյ և Գաղղիոյ Եկեղեցիները «Եւ յՈրդւոյ» (Filioque) բացատրութիւնը սկսան գործածել , Մեծն Կարոլոս Հռովմայ Լեոն Գ. Պապէն ինչդրեց որ այդ յաւելուածը մտցուի Հաւատոյ Հանգանակին մէջ : Պապը մերժեց այդ նորամուտ վարդապետութիւնը իրեւ այլափոխութիւն և որպէսզի ամնգամ մըն ալ ատանկ սիսալ վարդապետութեան իննդիր չյուզուի և Հաւատոյ Հանգանակը իր պատկառելի հնութեամբը պահպանուի , արծաթէ երկու տախտակներու վրայ Հանգանակը փորագրել տուաւ , միոյն վրայ Յունարէն և միւսին վրայ Լատիներէն , և այդ տախտակները Ս.Պետրոսի գերեզմանին դրան վրայ կախել տուաւ իրը ըսել ուզէր թէ պէտք չէ ասոր վրայ փոփոխութիւն մոցնել : Երբ մոլորութիւնը կը ծնի մըտքերու մէջ , ուշ կամ կանուխ անիկա տեղ մը պիտի գրաւէ : Ճիշտ այսպէս եղաւ նաև «Եւ յՈրդւոյ» սիսալ վարդապետութեան իննդիրը , որովհետեւ ինչ որ Լեւոն Գ. օրով մերժեց Հռովմի աթոռը , մէկ երկու դար վերջ Հենրիկոս կայսեր աղաջանքով ընդունեց «Եւ յՈրդւոյ» բացատրութիւնը պաշտօնապէս ու այդ օրէն ի վեր , Կաթոլիկ Եկեղեցիներու համար «Բխեալ ի Հօրէ և յՈրդւոյ» բացատրութիւնը հաւատքի կարգ անցաւ : Բոլոքական և Անլիլքան եկեղեցիներ երբ Ժ. դարուն Կաթոլիկ Եկեղեցիի ապականութիւններէն զգուած բաժնուեցան Պապական Եկեղեցիէն՝ իրենց հետ տարին նորա-

մուտ յաւելուածով պղտորած այդ Հաւատոյ Հանգանակը և անոր դէմ առարկութիւն մը չյարուցին : Հայ Կաթոլիկ եկեղեցին ալ իրեւ գերի մը պապական Աթոռի քմահաճոյքներուն , մեր Եկեղեցիէն բաժնուելէն վերջ ընդունեց «Եւ յՈրդւոյ» սիսալ բացատրութիւնը և ելաւ մեր ժամագրքին մէջ գտնուած «Առաւոտ Լուսոյ»ի «Բխումն ի Հօրէ» տողին վրայ աւելցուց և «յՈրդւոյ» բացատրութիւնը և տպագրեց «Բխումն ի Հօրէ և յՈրդւոյ» : Եւ այսպէս չարունակեց երկար տարիներ : Բայց քանի մը տարիներ առաջ Վենետիկի միաբանութիւնը՝ որ ժամագրքի տպագրութիւնը ստանձնած էր , ելաւ յայտարարելու թէ իրենք սիսալած են և «յՈրդւոյ» յաւելումն ընկելով ու ժամագրքի նոր տպագրութեան մէջէն բոլորովին վերցուց զանիկա :

Հ Ա Յ Ր

Զ. Ինչպէս հաւատոյ հանգանակին մէջ տեսանք , Ս. Երրորդութեան իրեւ սկզբնապատճառ և տիեզերական ստեղծումին իրեւ հեղինակ արուած է Հայր Աստուած : Ուստի Երրորդութեան վրայ խօսելէ առաջ պէտք է անոր մասին ալ խօսինք : Աստուծոյ արուած Հայր անունը իր արդի նշանակութեամբը բոլորովին քրիստոնէական է , Եւ որպէս զի մենք գիտնանք թէ Երրորդութեան երեք անձնաւորութիւններու մասին խօսած ատեն Հայր ինչ նշանակութեամբ առնուած է , պէտք է նախ և առաջ բացատրենք թէ ընդհանուր առմամբ ինչ կը նշանակէ Հայր յորջոյումը : Բառեր կան մեր ինչպէս նաև բոլոր օտար լեզուներուն մէջ , որոնց իմաստը

նշանակութեան առանց մեծ փոփոխութեան տարբեր առումներով կը գործածուի : Հայր բառը ատոնցմէ մէկն է : Բնական հայրութիւն մը կայ, կայ նաև բարոյական հայրութիւն մը որուն կ'ըսենք նաև հայրագրութիւն : Գիտենք թէ բնական զաւակի մը համար ո՛վ է հայր, բայց մնաք միայն մեր բնական հայրերուն չէ որ հայր անունը կուտանք, մարդ մը իր հօրմէն զատ հայր կը ընայ կոչել նաև մէկը՝ որ իրմէն տարիքով շատ մեծ է և կամ մէկը ուրկէ մեծ բարիք մը կամ երախտիք մը վայելած է : Որբ մը իր ծնողքին մեռնելէն վերջ մէկուն որդեգիր կը տրուի, կրնայ զինքը իբրև որդի ընդունող մարդը հայր կոչել, որովհետեւ այդ մարդն է որ զինքը կը խնամէ և կը հոգայ : Հայր բառին այդ բարոյական իմաստով է որ մնաք Եկեղեցականները հայր կը կոչենք, իբր թէ անոնք ըլլային մեր կրօնական և հոգեկան պէտքերը հոգացողները : Այս բնական և բարոյական առումներէն զատ, հայր բառը ուրիշ առումներ ալ ունի : Օրինակի համար մէկը բոլորովին նոր և աշքի զարնող գաղափար մը կը յլանայ և մէջտեղ կը նետէ, ուրիշները յընդունին զանիկա կամ ոչ, որպէս զի այդ գաղափարին յլացողը չմուցուի կամ չչփոթուի ուրիշներուն հետ, կ'ըսեն «Այս գաղափարին հայրութիւնը այս ինչ մարդուն կը պատկանի» և ատով կը համանաք թէ այս ինչն է որ այդ գաղափարը յլացաւ ու ծնաւ : Ս. Գրոց մէջ հայր ընդհանրապէս կը գործածուի ստեղծող, արարիչ նշանակութեամբ և Աստուած որ գրեթէ մէկ անդամ միայն հայր կոչուած է Հին Կտակարանին մէջ կամ աւելի ճիշտը Եսայի մարդարէին կողմէն (Եսայի 40. 16) պարզապէս այդպէս կոչուած է զինքը ներկայացնելու համար իբրև արարիչ բոլոր տիեզերքին : Սուրբ Գիրքին մէջ հայր գործածուած է հնարիչ նշանակութեամբ, օրինակի համար Ծննդոց գիրքին մէջ (Դ. 20-22) Յոբալ կոչուած է

«Հայր երգերու և քնարներու :» Այս նշանակութեամբ՝ հետեւաբար՝ մենք պիտի կրնանք ըսել թէ անթել հեռագրին հայրն է Մարգօնին և Փօնօկրաֆին հայրն է իտիւն :

23. Հաւատոյ համգանակին մէջ Աստուած Հայր կը կոչուի, ոչ թէ իբրև արարիչ, ոչ իբրև ինամող, ոչ իբրև յլացող և գործադրող տիեզերքի օրէնքներուն և ոչ իբրև հնարիչ տիեզերքի կարգաւորութեան, այլ հայր կը կոչուի միմիայն Քրիստոսի վերաբերմամբ իբրև ծնողք Քրիստոսի : Որպէս ինքն է ուրկէ ծնաւ Քրիստոս քրիստոնէական ըմբռնումով և ևկաւ աշխարհ իբրև Որդի Աստուծոյ փրկագործութիւնը իր ձեռքով կատարելու և հարթելու այն ձամբան, ուրկէ մարդկութիւնը պիտի քալէր դէպի Աստուած երթալու համար : Արդէն նախորդ հատուածներուն մէջ, երբ Քրիստոսի մասին կը խօսէինք ներկայացուցինք Քրիստոսի ծնունդը իր հօրմէն և երբ Ս. Հոգիին մասին կը խօսէինք, ներկայացուցինք Ս. Հոգիին բխումը նոյն այդ Հօրմէն՝ որ ամենակարող նախապատճառն է և ստեղծողը այն ամէն բաներուն՝ որոնք տեսանելի կամ անտեսանելի գոյութիւն ունին բոլոր տիեզերքներուն մէջ :

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

24. Հիմակ որ մեզի ծանօթ են այլևս երրորդութեան երեք անձնաւորութիւնները Հայրը, Որդին և Հոգին և այդ երեք անձնաւորութիւններուն առանձին առանձին յատկութիւնները, այլևս մեզի համար դիւրին է խօսիլ բուն իսկ երրորդութեան մասին : Նախ

և առաջ ըսինք թէ Աւետարամներուն և ամբողջ Նոր կտակարաններուն ու նոյն իսկ ամբողջ Ս. Գիրքին մէջ երբեք երրորդութիւն բառը գոյութիւն չունի : Քրիստոս և իր առաքեալները բաւականացան Հայր, Որդի և Հոգի յորջորջումով միայն, հետեւաբար այդ բառերուն միայն կը հանդիպինք Նոր կտակարանին մէջ : Առաքեալներէն յետոյ Եկեղեցին երբ իմաստափրական ներշնչումներու ներքեւ սկսաւ աւելի զբաղիլ վարդապետական խնդիրներով քան բուն իսկ Աւետարանին բարոյականով, Եկեղեցւոյ հայրերը աւելի գոհացում տալու համար Աղեքսանդրեան կամ նոր Պղատոնական իմաստափրական պրապտոմներուն, պէտքը զգացին նորանոր բառերու և իրենց ըմբռնումին համեմատ շինեցին իրենց պէտք եղած բառերը : Երրորդութիւն բառը այդ նորանար բառերէն մէկն է որուն հայրութիւնը կը պատկանի Եկեղեցւոյ հայրերէն Թէոփիլոս Անտիոքացիի և Տէրտուղիանոսի : Աստուածային Երրորդութիւնը նշանակող և Տէրտուղիանոսի կողմէն գործածուած տրinité բառը Հայերէնի մէջ քերականական բառերու սահմանին մէջ չէ թարգմանուած երբ Երրորդութիւն բառով մը բացարուած է, աւելի լաւ պիտի ըլլար թերեւս փոխանակ դասական ձեւով Երրորդութիւն թարգմանելու ըսել Երրեակութիւնն: Բայց խնդիրը բառին վրայ չէ, այսօր առանց բառաղնական քննութիւններու ենթարկելու այդ տեսակ բառեր, աւելի գաղափարին կը նայինք և կը գործածնք Երրորդութիւն բառը, որ արդէն նուիրագործուած է, գաղերու պատկառելի հնութիւնովը : Մենք այդ բառը գործածած ատեմնիս ոչ դասաւորութիւն կը տեսնենք աստուածային երեք անձերուն մէջ, և ոչ ալ նախապատութիւն, այլ կ'ըմբռնենք ամբողջութիւն մը որ երեք անձերու երբեակութենէն կազմուած է, և որ անբաժանելի է ըստ ինքեան և որ իր

մէջ կը ներկայացնէ աստուածային ամենազօր կարողութիւնը : Եւ երրորդութեան մէջ Հայր, Որդի և Հոգի անջատ անջատ ներկայացնելու համար նորէն Տէրտուղիանոսի կողմէն գործածուած անձնելի կամ անձինչ բառերը չենք կրնար մարդկային ըմբռնումին համաձայն իբր անհիա թարգմանել, քանի որ վերը ըսինք թէ երրորդութեան երեք անձերը իրարմէ անբաժան ամբողջութիւն մը կը կազմին :

Զե . Երրորդութեան վարդապետութիւնը բոլորովին քրիստոնէական է իր արդի ըմբռնումին մէջ : Կրօնական խնդիրներով զբաղող կարգ մը անձկամիտ կղերականներ ուղած են այնպէս ցուցնել թէ Հին կտակարանին մէջ աղօտ կերպով ցոյց տրուած է Երրորդութեան վարդապետութիւնը և թէ անիկա անձանօթ չէր Հրեաներուն : Իրենց այս գաղափարը ապացուցանելու համար իրենց մէջ բերած կարգ մը անտեղի և աննպատակայարմար փաստերուն մէջ ամէնէն աւելի կարեւորը կը ընայ նկատուիլ Սաղմոսին սա կտորը . «Երկիրը լեցուն է Տիրոջը ողորմութիւնովը, Տիրոջը խօսիով երկնեալ ստեղծուեցաւ, և անոր բերնին հոգիովլը անոր բոլոր զօրութիւնները :» (Սաղմ. 1.Բ. 6): Սատոյդ է որ Սաղմոսի այս հատուածին մէջ բացարութեան տեսակ մը ձեւ կայ, որուն վրայ նետուած առաջին ակնարկ մը, կարծես բաւական պիտի ըլլար անոր մէջ տեմնելու Երրորդութեան վարդապետութիւն մը, քանի որ Յովհաննու աւետարանին մէջ Քրիստոս բան կամ խօսի ալ կոչուած է . բայց ապահով կրնանք ըլլալ թէ Սաղմոսերգուն իր այս տողերը գրած միջոցին Երրորդութեան վրայ խորհած անգամ չունէր : Երբ կըսենք թէ Հրեաներու համար Երրորդութեան վարդապետութիւնը անձանօթ էր, միւս կողմէն պիտի կրնանք ըսել թէ քրիստոնէական Երրորդութեան վարդապետութենէն դուրս ընդ-

հանուր Երրորդութեան վարդապետութիւն մը գոյութիւն ունէր հին ազգերուն մէջ : Եգիպտոս, որ հին ազգերու քաղաքակրթութեան մայրը եղաւ, իր ունեցած Երրորդութեան վարդապետութիւնը տարածեց գրեթէ բոլոր հին ազգերուն մէջ, որոնցմէ գրեթէ ամէնքն ալ իրենց դիցական Երրորդութիւնները ունեցան յետոյ : Հետեւաբար պիտի կրնանք ըսել թէ կրօնական հաւատալիքներու մէջ մտած աստուածային Երրորդութեան վարդապետութեան ստեղծիչը եղան Եգիպտացիները : Այսպէս երբ կր նայինք եգիպտական դիցական Պանթէնը զարդարող աստուածներուն վրայ, հոն կը տեսնենք որ կայ գերիշխան աստուածներու Երրորդուրիւն մը զոր կը կազմն Ոսիրիս, Խսիս, և Թօֆ, որ կարծես Նու աստուծոյն ամբողջացուցիչ անձնաւորութիւններն ըլլային : Քաղդէական կրօնին մէջ Երրորդութիւնը կազմող դիցական աստուածային անձնաւորութիւններն են, Անու (նիւթէ կամ նիւթին աստուածը), Բէլ (խօսք կամ խօսքին աստուածը) և Նուահ (նախախնամութիւն կամ նախախնամութեան աստուածը), որոնք իրարու միացած կը կազմն Քաղդէացիներուն դիցաբանութեան գերազդոյն աստուածը իշլու : Զանդիկ կամ հին Պարսիկ կամ հին Փրատիկ կրօնաքին մէջ Երրորդութեան անձնաւորութիւններն են Զըրուան, Որմիզդ և Սրհնի : Յունական դիցաբանութեան մէջ Ուրանոս, կրօնոս և Դիոս : Զայկական դիցաբանութեան մէջ, Սրամազդ, Անահիտ և Վահագն : Հնդկական կրօնքին մէջ Պրահմա, Վիշնու, Ալիլա և Նոր Զելանտական կրօնքին մէջ Զալր, Որդի և Հոգի, ուր այս վերջինը թռչունի ձեւով ներկայացուած է : Խոկ Փիւսիկեան կրօններու մէջ Տիւրոսի Երրորդութիւնը կը կազմեն Բահազ, Մելգարդ և Աստարդէ . Սիդոնի մէջ, Բահազ, Էշմոն, և Աստարդէ : Խոկ Կարգեդոնի մէջ, Բահազ-Ամմոն, Տանիդ և Էշմոն : Հին ազգերու մէջ տես

նուած և ընդհանրացած Երրորդութեան վարդապետութիւնը երբ կը բազդատենք քրիստոնէական Երրորդութեան հետ, կը տեսնենք որ այս վերջինը այսինքն քրիստոնէական Երրորդութիւններ ունի Եգիպտական և Քաղդէական ըմբռնումով մտածուած Երրորդութիւններուն հետ և ուր Գերագոյն Աստուծոյ երեք անձնաւորուած կարողութիւններն են որ կը կազմն այդ գերագոյն Աստուծը : Քրիստոնէական Երրորդութիւնը սա տարբերութիւնը միայն ունի անոնցմէ, որ աւելի լաւ մտածուած, աւելի լաւ ներկայացուած, և աւելի յստակ բացատրուած յատկութիւն մը ունի իբրև հաւատոյ դաւանանք : Այսպէս որ պիտի կրնանք ըսել թէ այսօրուան մեր դաւանած Երրորդութիւնը գրեթէ բոլորովին քրիստոնէական իմացում մըն է միայն, որ ասւածին անգամ կը յայտնուի Յորդանանու վրայ երբ այդ Երրորդութեան անձնաւորութիւններէն մին Քրիստոս կը մկրտուի, երբ երկրորդ անձնաւորութիւնը Հռդին աղաւնակերպ կ'իջներ և երբ երրորդ անձնաւորութիւնը Հայրը 'ի վերուս կը վիայէր : Այսպէս որ մենք ալ պիտի կրնանք ըսել Եկեղեցոյ հայրերուն հետ . «Գնա՛ Յորդանան, և Երրորդութիւնը կը տեսնես : »

26. Ինչպէս տեսանք, Երրորդութեան այդ երեք անձնաւորութիւնները աւելի մէկ Աստուծոյ մը անձնաւորուած յատկութիւններն են քան թէ առանձին անձեր : Եւ իբր երեք անբաժանելի որոշումներ իրարու միացած կը ներկայացնեն յաւիտենական Աստուծութիւնը : Քրիստոնէական ըմբռնումով իմացուած այդ Երրորդութիւնը աւելի մեծ միութիւն մըն է, և երբէք երեք աստուծներու գաղափարը չի տար մեզի ինչպէս ոմանք սիալամամբ կը խորհին : Ինչպէս մարդուն մէջ հոգին, միաքը և բանը իրարու միացած կը կազմն մարդը, ինչպէս լոյս, ճառագայթ և ջերմութիւնը կը ներկայացնեն արեւը,

ինչպէս ակն, աղբիւր և ջուր մեզի կուտան գետակի գաղափարը, նմանապէս Հայր, Որդի, և Հոգի աստուածային անձնաւորուած յատկութիւնները մեզի կուտան միակ Աստուծոյ մը ուղիղ վարդապետութիւնը: Միայն այդ վարդապետութեան մէջ պէտք է ջանալ 1. իրարմէ անջատ չըմբռնել այդ էական յատկութիւնները. 2. իրարու հետ չչփոթել անձնաւորական յատկութիւնները: Որովհետեւ առաջին պարագային մէջ իրարմէ տարբեր յատկութիւններ ըմբռնելը պիտի նշանակէր երեք զատ զատ աստուածներ խոստովանած ըլլալ, ինչ որ պիտի վասսէր անշուշտ Աստուծոյ միութեան վարդապետութեանը. իսկ երկրորդ պարագային Երրորդութեան երեք անձանց առանձին առանձին յատկութիւնները իրարու հետ շփոթելով վեսասած պիտի ըլլայինք Երրորդութեան անձնաւորութեանց անձնաւորական զանազանութեանը և խախտած բուն իսկ Երրորդութեան վարդապետութիւնը:

ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ՅՅ. Աստուծոյ գոյութիւնը իրբե հաւատքի վարդապետութիւն ընդունելնէս վերջը, երբ կը տեմնենք տիեզերքի գոյութիւնը և այն ամէն առարկաներն ու կենդանական մարմիններն, որոնք զմեզ կը շրջապատեն, առանց մեր ուղելուն կըստիպուինք խորհիլ տիեզերքի արարչագործութեան մասին, և այն յարաբերութեանը նկատմամբ, որ գոյութիւն ունի կամ պէտք է գոյութիւն ունեցած ըլլայ Աստուծոյ և տիեզերքին միջէ: Արարչագործութիւնը կամ ուրիշ բառով ստեղծագործութիւնը մէկը եղած է այն կրօնական խորհիներուն, որոնք

զբաղեցուցած են բոլոր ազգերը և տեղի տուած են խոշոր առասպեկներու, և որոնք նիւթը կազմած են անհատնում վիճաբանութիւններու, և կարծիքներու ահագին զանազանութիւն մը յառաջ բերած են պատմաբաններու, կրօնականներու, իմաստասէրներու և տիեզերագէտներու միջէ: Առանց խօսելու այն առասպեկներու մասին՝ որոնցով լեցուն է աշխարհի հին մատենագրութիւնը, սա միայն ըսենք թէ ակեզերքի մասին մարդկութիւնը հազիւ սկսած է բաւական որոշ գաղափարներ կազմել: Ի սկզբան երբ մարդկութեան միտքը գիտութիւններու հետ շփում չունէր, իր ստեղծած բառերէն ինքն ալ խարուելով այնպէս կը հաւատար թէ տիեզերք հակայ չէնք մըն էր, թէ երկինք հաստատուն կամար մըն էր ուկեզէն բեւեռներով գամուած, թէ արեւը ստեղծուած էր պարզապէս մարդուն ուրախութիւն պատճառելու համար և թէ վերջապէս այդ ամէնը ստեղծուած էր պարզապէս մարդկային կեանքին իրեւ հածուած էին պարզապէս մարդկային կամաց հաւատարապէս կը ըլլունին թէ մեր աշխարհը մէկ մասն է այն ընդհանուր տիեզերքին, որ ընդհանուր օրէնքի մը համաձայն հաստատուած է պարզապութեան մէջ, թէ մեր մոլորա կին նման բիւրաւոր մոլորակներ կան՝ որոնք իրենց արեւներուն շուրջը կը գառնան, թէ բիւրաւոր արեւներ կան, որոնք իրմնց շուրջ գարձող մոլորակները կը լուսաւորեն: Մէկ խօսքով այսօրուան մարդկութիւնը շատ աւելի մեծ, շատ աւելի ընդարձակ տիեզերքի մը ծանօթութիւններն ունի քան նախորդ դարերու մարդկութիւնը՝ որուն տեսողութիւնը կանգ կ'առնուր տիեզերքի շատ մօտաւոր սահմաններուն վրայ:

ՅՅ. Որչափ ալ տիեզերքի ընդարձակութեան և անսահմանութեան մասին տարբեր եղած ըլլային հին ու նոր մարդկութեան ըմբռնումները, սա ստոյդ է թէ այդ

ստեղերքին ստեղծումը շատ կանուխ դարերէ 'ի վեր խորհիլ տուած է տգէտ ռամիկէն սկսեալ ամէնէն խմաս- տունին, և տիեզերքի պատճառին հարցը զբաղեցուցած է բոլոր միտքերը: Քրիստոնեաներու համար, ինչպէս նաև սեմական միաստուածեան ժողովուրդներու համար (Հրեայ և Արաբ) հաւատքի տեսակէտով ստեղծագոր- ծութեան հարցը լուծուած է գրեթէ, որովհետեւ երբ Աստուածաշունչի առաջին էջը կը բանանք, հոն առա- ջին անգամ մեր աչքին հանդիպած տողն է սա. «Աս- տուած սկիզբէն երկինքն ու երկիրը ստեղծեց (Ծննդ. Ա. 1): Նիւթին Աստուծոյ կողմէն ստեղծուած ըլլալը որչափ որ իբրև հաւատքի հիմ կ'ընդունինք, բայց որոշ կերպով չպիտի կրնանք ըսել թէ Աստուած ինչպէ՛ս և ինչ կերպով ստեղծեց տիեզերքը: Որչափ որ Եկեղեցւոյ ընդհանուր հաւատքը մեզի կը սորվեցնէ թէ, Աստուած ՈԶԻՆՉԵ ստեղծեց տիեզերքը, բայց Ս. Գրոց մէջ բացէ ի բաց և յայտնի կերպով այդ տեսակ վարդապե- տութեան մը չենք հանդիպիր բնաւ, միայն Աստուծոյ յաւիտենականութիւնը ըմբռնած ժամանակին տիեզե- րական նիւթին փոփոխութիւնները տեսնելով է որ մար- դիկ նիւթին ՈԶԻՆՉԵ ստեղծուած ըլլալը ենթագրած են, և այդ ենթագրութիւնը կարծես անհրաժեշտ էր, քանի որ մենք երկու յաւիտենականութիւններ չպիտի կրնայինք ենթադրել Աստուծոյ և նիւթին մէջ միան- գամայն, վամն զի այդ պարագային կամ պէտք էր Աս- տուած նիւթականացնէնք և կամ նիւթը աստուածա- ցնէնք: Եւ երկու պարագային մէջ ալ Աստուած պիտի դադրէր տիեզերքի ստեղծման գերագոյն պատճառը ըլլալէն:

ՅԹ. Հին ինչպէս նաև նոր փիլիսոփաներու արար- չագործութեան մասին յայտնած կարծիքները ընդհան- րապէս կրնանք երեք տեսակի վերագոյն պատճառը ըլլալէն:

Կ'ուղեն պինդել թէ տիեզերքի արարչագործութիւնը Աս- տուծոյ մը պէտք չունէր բնաւ, որովհետեւ նիւթը ար- դէն յաւիտենական ըլլալով իր մէջ պարունակած զօ- րութեամբը կարող էր ինքզինքը յայտնելու և յայտնեց: Բ. Հին Յոյն փիլիսոփաներէն ոմանք տիեզերքի արար- չագործութեան հարցը լուծել կարծեցին ենթադրելով երկու յաւիտենականներ, մին նիւթը և միւսը Աստուած և յայտարարեցին թէ յաւիտենական նիւթը յաւիտենա- կան Աստուծոյ մը զօրութեանը պէտք ունէր կարենալ կերպաւորուելու համար: Գ. Ուղղափառ Եկեղեցւոյ վարդապետութիւնը՝ որ կ'ընդունի թէ յաւիտենական և ինքնագոյ էութիւն մը միայն կայ որ է Աստուած, և այդ յաւիտենական էակն է որ ՈԶԻՆՉԵ ստեղծեց տիե- զերքը: Մենք առաջին և երկրորդ ձիւղին պատկանող իմաստափրական դրութիւններու վրայ չպիտի խօսինք բնաւ, որովհետեւ ոչ միայն անօգուտ է քրիստոնէական վարդապետութեան գրքի նիւթ ընել զանոնք, այլ և անոր համար որ այդ սկզբունքները պաշտպանող իմաս- տասէրներն անգամ չեն կրցած տակաւին ինքզինքնին որոշ կերպով հասկնալ և հասկցնել: Հետեւաբար կը մնայ մեզի ամփոփ կերպով խօսիլ քրիստոնէական ըմբռնումին վրայ միայն:

ՅՊ. Քրիստոնէական վարդապետութիւնը ընդու- նելով հանդերձ, թէ Աստուած ՈԶԻՆՉԵ ստեղծեց տիե- զերքը, տակաւին, ինչպէս վերը բանք, մեզի որոշ կեր- պով չի պատմեր ստեղծագործութեան ինչպէսը: Մենք Հին կոտակարանի պատմութիւնը կարդացած ատենական կը ատենենք թէ Աստուած վեց օր ստեղծագործութիւն- ներ կ'ընէ տիեզերքի և անոր պարունակութեան գոյու- թիւնները 'ի յայտ բերելու համար ու եօթներորդ օրը կը հանգչի (Ծնն. Բ. 2-3): Այս առողերը գրուած ըլլալով հանդերձ տակաւին հին Եկեղեցւոյ հայրերը վիճաբանու-

թեան ահագին ինդիր մը յարուցին Աստուծոյ հանգիստի
մասին։ Անոնցմէ Որոգինես կը պաշտպանէր սա գաղաւ
փարը թէ, Աստուած առանց հանգիստի պէտք ունենաւ
լու, չարունակ գործունէութեան մէջ կը գտնուի, և կը
ստեղծէ շարունակ այն անհուն տիեզերքները՝ որոնք
աստուածային ստեղծագործութիւններու անսահման մէկ
շղթան կը կազմէն, և այդ շղթային հազիւ թէ մէկ
օղակը կը կազմէնք մէնք։ Որչափ որ Որոգինէսի այս
գաղափարը նոյն իսկ մեր ժամանակներու մէջ պաշտա-
պանողներ գտնուեցան, այսու հանգերձ Եկեղեցւոյ կող-
մէն տակաւին պաշտօնական հաստատութիւն մը չէ
գտած անիկա, որովհետեւ ողջամտաւթեամբ խորհած ա-
տեննիս պէտք է նկատողութեան առնենք պարագայ մը։
ՍՏԵՂԾԵԼ կը նշանակէ ո և իցէ իրի մը գոյութիւն տալ
և ամէն ինչ որ կը ստեղծուի ժամանակի մը պէտք ունի.
ամէն ինչ որ կը ստեղծուի, ժամանակին մէջ շրջափակ-
ուած է, և ուր որ ժամանակի կայ, հոյն յաւիտենակա-
նութիւն գոյութիւն չի կրնար ունենալ։ Միւս կող-
մէն ինչ բան որ ժամանակով կը սկսի, ժամանակով ալ
վերջանալու դատապարտուած է։ «Ուրեմն տիեզերք
քանի որ իր ծագումները ունեցած է, կը նշանակէ թէ»
չի կրնար յաւիտենական ըլլալ։ հետեւաբար ինքնին կը
ջնջուի Աստուծոյ կողմանէ ենթադրուած յաւիտենական
ստեղծագործութեան մը ճրի գաղափարը։ Որչափ որ
Որոգինէս այս գաղափարը կը պաշտպանէր, իր մտա-
ծումը սա էր թէ մի գուցէ զԱստուած անգործութեան
մէջ ենթադրելով մնասած ըլլանք անոր ամենակարո-
ղութեանը և յաւիտենական զօրութեանը։ Այսու հան-
գերձ այդ գաղափարն ալ ինքնին սիսալմունք մըն է ։
որովհետեւ անոնք՝ որոնք ժամանակաւոր ստեղծագոր-
ծութիւն միայն կ'ընդունին, չեն ըսեր թէ Աստուծոյ
ստեղծագործ զօրութիւնը սպառեցաւ, այլ պարզապէտ

տարրերութիւն մը դրած կ'ըլլան «Ընդ մէջ հնարաւու-
րութեան և իրականութեան, ընդ մէջ գաղափարին և
գործին։»

ՅԱ. Ստեղծագործութեան աստուածաշնչական
պատմութեան մէջ նկատողութեան առնուելիք ինդիր-
ներէն մէկն ալ օրերու ինդիրն է, որ բաւական վէճե-
րու նիւթ մատակարարեց Եկեղեցւոյ հայրերուն ինչպէս
նաև գիտնականներուն։ Եկեղեցւոյ հայրերէն ումանք
մինչև իսկ ուղեցին պնդել թէ Աստուածաշունչի մէջ
յիշուած արարչագործութեան օրերը, յար և նման մեր
օրերուն, 24 ժամէ կը բաղկանային, և այդ հաշիւները
նկատողութեան առնելով ու հիմնուելով Աստուածա-
շունչի պատմութեան զանազան անցքերուն վրայ, աշ-
խարհի ստեղծագործութեան թուականը հազիւ թէ վեց
հազար այսչափ տարիներու հասուցած են մինչև մեր
օրերը։ Մէկ կողմէն աշխարհի տրուած այդ կարճ ժա-
մանակամիջնոցը և միւս կողմէն ընապատումներու երեան-
բերած 20-30 հազար տարիներ առաջ ապրող կենդա-
նիներու կմախքները երբ նկատողութեան կ'առնունք,
կը ստիպուինք պահ մը կանգ առնուել Աստուածաշունչի
սեմին վրայ և մնանք ալ կամայ թէ ակամայ կը հարկա-
դրուինք հաւատալու թէ այդ արարչագործութեան վեց
օրերէն իւրաքանչիւրը հաղարաւոր տարիներ կը պար-
ագիւն իրենց օր անունին ներքեւ, և թէ հանգիստի հա-
մար նշանակուած եօթներորդ օրը տակաւին երեկոյ չէ
եղած Աստուծոյ համար։ Առանց այս համոզաւմին կա-
րելի չպիտի ըլլար բնաւ ոչ ստեղծագործութեան գաղա-
նիքը մնկնել և ոչ ալ հաշտուիլ գիտութեան ձեռք բե-
րած բիւրաւոր ապացույներուն հետ։ Սայդ է որ Աստ-
ուած օրերու պէտք չունէր իր ստեղծումները կարենալ
կատարելու համար, քանի որ իրեն համար վայրկեան մը
իսկ բաւական էր իր արարչագործութիւնները կատարե-

լու։ Եւ արդէն Սաղմոսերգուն իր բանաստեղծական ոճով հազիւ վարկեանի մը միջոց կուտայ Աստուծոյ իր ստեղծագործութեանը համար երբ կը գրէ «Ասաց եւ եղեն, հրամայեաց եւ հաստաեցան։» Բայց մենք պէտք է համոզուինք թէ, երբեք աճապարանք չկայ ոչ Աստուծոյ կողմէն և ոչ ալ բնութեան մէջ։ Առաջին անգամ Աստուած ինքն էր որ պատկառ կեցաւ իր գծած բնական օբէնքին, և թողուց որ իր ստեղծումները բնական բարեշրջութիւնով մը հետզհետէ համարն իրենց բաղձացուած վիճակին։ Ասիկա կը հաստատեն տիեզերքի օրէնքը ընդհանրապէս, և օրէ օր գիտութեան ձեռք բերած ապացոյցները մասնաւորապէս։

32. Աստուածաշունչի պատմութեան համաձայն Աստուած արարչագործութեան առաջին օրը լսյաը կը ստեղծէ և գիշերն ու ցորեկը կը զատէ. Երկրորդ օրը՝ Երկինքն ու Երկիրը կ'անշատէ. Երրորդ օրը՝ ծովը ցամաքէն կը բաժնէ և բուսականները կը ստեղծէ. Զորրորդ օրը՝ Երկնքի լուսաւորները. Հինգերորդ օրը՝ ձուկերը, սոլունները և թուչունները. Վեցենորդ օրը մարդկային դոյզը։ Եօթներորդ օրը կը հանգչի։ Ինչպէս կը տեսնուի այս պատմութենէն Ա. Գրոց վեցօրեայ արարչագործութիւնը շատ թերի մասեր ունի իր մէջ և իրեն նիւթ առած է միայն տեսանելի տիեզերքը՝ որ նիւթական էակներու բնավայրը կը նկատուի։ Պէտք չէ մոռնալ սակայն թէ մարդկութիւնը կը հաւասայ նաև հոգեկան աշխարհի մը գոյութեան, որուն բնակիչները համակ հոգելէն էակներ են։ Ա. Գիրք իր ստեղծագործութեան պատմութեան մէջ բան մը չի խօսիր մեզի այդ մասին։ Այդ հոգեկան աշխարհի բնակիչներն են ըստ տիեզերական հաւասալեաց չար ոգիները՝ որոնք սատանայ անունով ծանօթ են, և բարի ոգիները՝ որոնք հրեշտակ կը կոչուին, և որոնք իբրև անձնաւորուած կեանքեր ստեղ-

ծումն են միեւնոյն Աստուծոյ։ Հրեշտակներու գոյութեան մասին Հին Կտակարանի մէջ բազմաթիւ վկայութիւններու կը հանդիպինք, ասոնք մերթ կոչուած են «Որդիք Աստուծոյ» (Յոր. Ա. 6 Բ. 1), մերթ Քերովիկ (Եսայի Զ. 1), մերթ «Երկնային զօրք կամ զօրութիւն» (Եսայի Բ. 26 Յովաէ. Ե. 14) են։ Ասոնք Աստուծոյ հրամանները կը կատարեն և անոր ծառայելն է իրենց գլխաւոր պաշտօնը։ Ինչպէս բոլոր հին գրականութիւններու մէջ, նմանապէս Ա. Գրոց Հին Կտակարանին մէջ, որչափ որ հրեշտակներու գոյութիւնը իբրև իրողութիւններկայացուած է, այսու համուկերձ անոնց մասին տաշկաւին ծզրիտ տեղեկութիւններ կը պակսին։ Նոր Կտակարանը Հինէն փոխ առնելով հրեշտակներու գոյութեան վարդապետութիւնը՝ աւելի ճշգրիտ ձև մը կուտայ հրեշտակներու ըմբռնումին և աւելի կը ճշդէ անոնց կատարած պաշտօնը։ Այսպէս Երբայեցւոց թուղթին մէջ (Ա. 14) առաջին անգամ հրեշտակները իբրև հոգիներ կը ներկայացուին, այսինքն զորկ նիւթական տարրերէ, որոնց պիտի նմանին յարութիւն առնողները (Պուկ. Ի. 36. Ա. Կորնթ. ԺԵ. 42)։ Հրեշտակները նոր Կտակարանին ըմբռնումով աւելի զօրաւոր և աւելի իմաստուն են քան մարդերը և երկինային երանութեան վիճակ մը ունին (Մարկ. ԺԳ. 32. Բ. Թես. Ա. 7), անոնք իրենց ոգեկան գործունէութեան մէջ կը կատարեն Աստուծոյ հրամանները թէ՝ չարերը պատժելու համար և թէ՝ բարիներու օգնութեան համնելու համար։ (Մատթ. ԺԳ. 49. Բ. Թես. Ա. 7 Երբ. Ա. 14. Գործք. ԺԲ. 7)։ Հին հեթանոսական հաւասալիքներու համաձայն, նոր Կտակարանն ալ կարծես կ'ուզէ հաստատել թէ իւրաքանչիւր մարդ իր սեփական հրեշտակն ունի (Գործք. ԺԲ. 15 Մատթ. ԺԲ. 10)։ Հրեշտակներն ալ, ըստ նոր Կտակարանի ըմբռնումին կը գործակցին երկրի վրայ մարդերու

հոգեւոր փրկութեան, և Աստուծոյ թագաւորութեան զարգացումն (Ղուկ. ԺԵ. 10. Ա. Պետ. Ա. 12):

ՅՅ. Հրեշտակներու մասին, այսչափ ծանօթութիւններ միայն ունինք Ս. Գիրքէն. և ինչ որ Ս. Գիրքէն դուրս կը մնայ, անոնցմով չենք ուղեր զբաղիլ ։ Նաև հոս չենք ուղեր զբաղիլ սատանաներով, որովհետեւ հրեշտակներու վրայ տրուած ծանօթութիւնները եթէ շրջենք ան ատեն ինքնին գաղափար կազմած կ'ըլլանք նաև սատանաներու կատարած դերին մասին, և արդէն սատանաներն ալ աստուածաշնչական ըմբռնումով ուրիշ բան չեն եթէ ոչ՝ ասպատամբ հրեշտակներ որոնց երանութիւնը չարութեան մէջ միայն կը կայանայ: Հրեշտակ բառը կը նշանակէ դրկուած, առաքեալ, աւետարեր: Եկեղեցւոյ հայրերէն ոմանք այնքան զբաղեցան հրեշտակներու գոյութեան խնդիրով, որ անոնցմէ մէկը Որոգինէս փորձուեցաւ նոյն իսկ աստղերուն մէջ մէկ հրեշտակներ տեսնել: Ոմանք ալ հրեշտակներու մասին իրենց ունեցած յարգանքն ու պատկառանքը այնքան առաջ տարին, որ մինչև իսկ հրեշտակները առարկայ ըրին իրենց պաշտելութեան: Մեղի համար, մահաւանդ անանկ դարու մը մէջ, երբ այլ ևս ոգեղէն էակներու գոյութիւնը, այսինքն սատանայի և հրեշտակի գոյութիւնը պարզ հաւատալիք մըն է, Աստուած մը բաւական է մեր պաշտամունքին համար, Քրիստոս մը՝ մեր փրկութեան համար և Ս. Հոգի մը մեղ առաջնորդելու համար:

ՅՅ. Արարէութեան խնդրոյն մէջ կը մնայ կէտ մը՝ որուն մասին կ'ուղենք խօսիլ: Ոմանք այնպէս կը խորհին թէ, Աստուած ստեղծելով զաշխարհ անոր օրէնք մը տուաւ ինքզինքը կառավարելու և թէ այլ ևս ինք ո և է յարաբերութիւն չունի աշխարհի հետ: Իսկ ուրիշներ մարդկային բոլոր գործերուն մասնակից ընելով զԱստուած, անոր ներկայութիւնը չեն ուղեր հեռացնել տիե-

զերքէն և զանիկա գրեթէ կը չփոթեն տիեզերքէն հետ: Ասոնք երկու ծայրայեղութիւններ են՝ որոնք և ոչ մէկ բանով կրնան արդարանալ: Անոնք՝ որոնք կը խորհին թէ Աստուած աշխարհին հետ գաղրեցուցած է իր յարաբերութիւնը, կը վնասեն բուն իսկ փրկագործութեան գաղափարին և ոգիին, որովհետեւ եթէ այդպէս եղած ըլլար, ան երբեք չպիտի հոգար ոչ մեր փրկութեան և ոչ ալ այդ փրկութեան կերպերուն վրայ: Իսկ անոնք որոնք կը խորհին թէ Աստուած կը միջամտէ աշխարհի բոլոր գործերուն, անոնք ջնջած կ'ըլլան մարդկային անձնիշնամութիւնը, առանց խորհելու թէ այդ անձնիշնամութիւնը Աստուծոյ կողմէն տրուած է և թէ Աստուած չի ջնջեր ինչ որ ինք պարզեւած է: Հետեւաբար առանց ծայրայեղութիւններու երթալու պէտք է ընդունինք թէ որչափ ալ Աստուած և տիեզերք երկու անջատ գոյութիւններ են, մին հոգեկան և միւսը նիւթեական, այսու համուկը տակաւին տիեզերքի մէջ ապառող մարդկութիւնը գոնէ կախումներ և կապեր ունի Աստուծմէն՝ որոնք չեն կրնար ջնջուիլ, որովհետեւ Աստուած մեր երինաւոր հայրն է Քրիստոսով՝ որուն չնորհիւ մենք ամենքնիս կեանք ստացած ենք, և թէ մեր այդ հոգեկան և բարոյական յարաբերութիւնը տեւական կը մնայ չարունակ այն ձեւով, որով Հօր և Որդի յարաբերութիւնները տեղի կունենան:

ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ ՀՈԳԻՈՅ

ՅՅ. Արարչագործութեան մասին նախորդ գլխուն մէջ խօսած ժամանակնիս արդէն անցողաբար ըստնք թէ այս նիւթական և տեսանելի աշխարհն դուրս կայ նաև հոգեւոր և անտեսանելի աշխարհ՝ զոր հրեշտակաց իրարև բնակարան ցոյց տուինք։ Այդ հոգեւոր աշխարհն գոյութիւնը իր հետ կը բերէ հոգւոյ անմահութեան վարդապետութիւնը, որու մասին պիտի խօսինք։ Հոգւոյ անմահութեան վարդապետութիւնը գրեթէ հին է մարդկութեան չափ։ Պատմութեան մէջ երեւցող բոլոր վայրենի և քաղաքակիրթ ազգերու կրօնները գրեթէ առանց բացառութեան ընդունած են այդ վարդապետութիւնը։ Արիական և սեմական ազգերը մանաւանդ հոգւոյ անմահութեան վարդապետութիւնը հետզհետէ հասունցուցած և մինչև իմաստասիրական հանգամանք մը տուած են անոր։ մինչդեռ վայրենի ժողովուրդներու մէջ չատ կոչտ տեսարաններ կը պարզէ այդ վարդապետութիւնը և անոնց դիցաբանութեան մէջ հոգին յաճախ կը նոյնանայ մարդուն ստուերին հետ որ իրբեւ կինդամի կրկնակ մը (double) չարունակ մարդուս հետ կը շրջի։ Այդ հոգւոյ անմահութեան վարդապետութիւնն էր որ դրդեց Եգիպտացիները այնքան կարեւորութիւն ընծայելու իրենց մեռեալներուն, անոնց մոմիային։ Նմանապէս այս վարդապետութիւնն էր որ դրդեց աշխարհի ըստը ազգերը կատարելու համար մեռելոյթի այնքան արարողութիւններ և այսպէսով ազգերը չուշացան, իրենց կոչտ հաւատալիքներուն բերմամբ, կերակուրներ, զէնքեր, զգեստներ միասին թաղելու իրենց մեռեալներուն հետ, իրբեւ անոնց կենդանի հոգիներուն սովորական պէտքերը։

ՅՅ. Առաջին անգամ հոգւոյ անմահութեան վարդապետութիւնը տակ ձգողներ եղան Աւետարանի վկայութեանը համաձայն Սադուկեցիները, որնայ դէմ ազգուօրէն պաշտպանեց Քրիստոս հոգւոյ անմահութեան հարցը, անանկ ժամանակ մը, ուր երկու կրօնական կամ իմաստասիրական վարդապետութիւններ ազատ ասապարէզ գտած էին քաղաքակիրթ աշխարհն մէջ հոգւոյ անմահութեան մասին։ Սառնցմէ յունական դիցաբանութիւնը Պօրփիւրի գրիշին տակ կ'ընդունէր հոգիի անմահութեան մէջ բաժին չպիտի ունենար մարմինը, որովհետև կ'ըսէր Պօրփիւր թէ. «Որպէս զի հոգին երջանիկ ըլլայ, պէտք չէ որ երբեք կապ մը ունենայ մարմնոյն հետ»։ մինչդեռ հրէական կրօնքը, այդ անմահութեան կցորդ կ'ընէր նաև մարմինը՝ որ չարունակ անբաժանօրէն պիտի ապրէր հոգիին հետ, իրբեւ մարդը ամբողջացնող տարր մը։ Քրիստոնէութիւնը հոգւոյ անմահութեան վարդապետութիւնը ամենակարեւոր գաւանանքներէն մին նկատեց մարդկային փրկութեան համար։ Եւ առանց ասոր արդէն կարևի չէր քրիստոնէութիւնը հիմնել, քանի որ Սատուծոյ թագաւորութեան մէջ արուելիք վարձքերն ու պատուհանները պիտի արուէին մարդոց անտեսաննելի և հոգեկան աշխարհն մէջ։ Սադուկեցիներու դէմ հոգւոյ անմահութիւնը պաշտպանելով խնդիրը բոլորովին փակուած չնկատուեցաւ, որովհետեւ հոգւոյ անմահութեան վարդապետութեան գիտնական ուրացողները լուն խէլ քրիստոնէութեան ծոցէն ծնան և այսօր ծանօթ են նիւթապաշտ, բնապաշտ, և այլն անուններով և որոնք Սադուկեցիներու կրօնական վարդապետութեան աւելի գիտական ու աւելի գրական ձեւ մը տալով իմաստասիրութեան մէջ հիմնեցին իրենց անունով ծանօթ դարոցները։

ՅՅ. Այդ զրութիւնները, որոնք մանաւանդ վերջն քանի մը գարերու մէջ իրենց համար հաստատուն կոռաւն մը ստեղծեցին, կը պնդեն թէ աշխարհի մէջ նիւթին է միայն արբապետողը, և թէ նիւթին դուրս ո՛ և է բան, ըլլայ հոգի նոյն իսկ, գոյութիւն չունի բնաւ, թէ նիւթին մէջ պահուըած ու միայն նիւթին յատուկ եղող զօրութիւնն է որ ոչ միայն շարժում կուտայ մարմինը կազմող նիւթին այլ և զանի կը զրդէ խորհելու, գատելու, ըմլանելու այսինքն մէկ բառով կը շինէ մարդուն միտքք: Այս զպրոցները նիւթին և անոր զօրութեան վարդապետութիւնը միայն տեսնելով ամբողջ տիեզերքի կազմութեան մէջ, նախ կ'ուրանան հոգիին գոյութիւնը և անոր անմահութիւնը և ասոր իբրև անմիջական արդիւնք կ'ուրանան նոյն իսկ Աստուծոյ գոյութիւնը, քանի որ հոգիի անմահութիւն և Աստուծոյ գոյութիւն իրարու հետ սկըտ յարաբերութիւններ ունին և մէկուն գոյութիւնը միւսին գոյութիւնը կը հաստատէ: Յնապաշտ գպրոցին հոգիի գոյութեան և անմահութեան այս գիտական հերքումը պէտք է ըսել թէ բաւականութիւն չկրնար տալ քրիստոնէական մտքին և տենչանքներուն, որչափ ալ ամբողջ իմաստասիրութիւն մը կը ձայնակցի անոր: Եւ բոլոր այն փորձերը՝ որոնք ջանացին պատմական, փիլիսոփայական և բարոյական փաստերով հակազդել հոգւոյ գոյութիւնը ժխտող բնապաշտ վարդապետութեան դէմ, պէտք է խոսութանիլ թէ հակառակ իրենց յառաջ բերած ու շատ բառներոր ու շատ ողջամիտ փաստերուն բնապաշտութիւնը տակաւին իր զիրքէն բան մը չէ կորսնցուցած, և անիկա իր բոլոր ուժովը սկսած է արբապետել խորհող մտքերէն շատերուն վրայ:

ՅՅ. Պէտք է խոստովանիլ թէ մարդկային կեանքը իր բոլոր մտաւորական և բարոյական գործառնութիւն-

ներուն մէջ նիւթով և նիւթին վարդապետութիւնովը չկրնար գոհանալ: Աշխարհի տառապանքը, յուսազրկութիւնները, կրուած անիրաւութիւնները, զլացուած վարձատրութիւնները և ասոնց յաջորդող բնական մահը մարդկութեան կուրծքին մէջ աւելի արդար և աւելի տեւական կեանքի մը գաղափարը արթնցուցած են, ոչ անիրաւ կերպով: Եւ այդ գաղափարը միայն կարող ըրած է մարդկութիւնը, կուրծք տալու բոլոր նեղութիւններուն և տառապանքներուն: Քրիստոնէութիւնը մանաւանդ աւելի որոշ և աւելի հաստատուն կերպով մը շեշտեց մարդուն մէջ գտնուած այդ տենչանքները և անոնց իրականութիւնը արմատացուց մարդկային միտքերուն մէջ: Քրիստոնէութեան առաջ բերած հոգեւոր զարթնումին արդինքները նկատողութեան առած ժամանակների պիտի կրնանք ըսել թէ Քրիստոնէութիւնով միայն կարելի է թումբ կանգնել բնապաշտ գպրոցի հոգեւորք վարդապետութիւններուն դէմ, քանի որ մենք գիտենք թէ հոգիի խնդիրը ոչ գիտական փաստերով կրնայ լուծուիլ և ոչ չափական դրութիւններով, և իբրև նիւթէն անկախ աննիւթ զօրութիւն պէտք ունի հաւատքի: Քրիստոս, իբրև այդ կենդանի հաւատքին աղքիւրը «Մահը խափանեց, և Աւետարանին միջոցով ի ըստ հանեց կեանքը և անմահութիւնը» (Բ. Տիմ. Ա. 10) Եւ ալ Յիսուսի արիւնով փրկուած Քրիստոնէային այս հաւատքը ո՛չ մէկ զօրութիւն կրնայ խափանել:

ՅՅ. Հոգւոյ գոյութեան և անմահութեան Քրիստոնէական վարդապետութիւնը իբրև անհերքելի իրութիւն ընդունելիս վերջ, պէտք է ըսել թէ հոգիներու ապագայ յարութիւնը մարմնաւոր յարութիւն մը պիտի ըլլայ և թէ մարդկային մարմնոյ քայքայուած մասերը նորէն զիրար պիտի վերագտնեն և պիտի միանան իրենց հոգիներուն հետ Աստուծոյ աղդեցութեամբը, և

այնուհետև պիտի սկսին ապրիլ անվերջ ու յաւիտենաւկան կեանքով մը : Չենք գիտեր թէ ե՞րբ տեղի պիտի ունենայ ընդհանուր մարդկային յարութեան և դատաստանի գոծը, միայն սա ստոյգ է, թէ այն ատեն աշխարհս պիտի եղծանի ու մարդիկ յաւիտենաւկս տեւող աշխարհի մը բնակիչները պիտի ըլլայն, քանի որ Առաքեալը կը գրէ թէ «Հիմակուան երկինքն ու երկիրը նոյն խօսքով պահպանուած են մինչեւ դատաստանին և ամբարիչտ մարդոց կորատեան օրը կրակի համար պահուած էն թէ այդ որ մարդկային մարմինները նոր բնութիւն մը պիտի առնուն, ՈԳԵՒՈՐՈՒՄԾ ՈՒ ԱՆԱՊԱԿԱՆ բնութիւն մը, որ անընդունակ պիտի ըլլայ ամէն փոփոխութիւններու . «Այսպէս է մեռելոց յարութիւնը. մարմինը ապականութիւնով կը սերմանուի և անսապականութիւնով յարութիւն կ'առնէ, անսարդութիւնով կը սերմանուի, փառքով կը յառնէ, տկարութիւնով կը սերմանուի, զօրութիւնով կը յառնէ, չնչաւոր մարմին կը սերմանուի և հոգեւոր մարմին կը յառնէ» (Ա. Կորնթ. ԺԵ. 35-58) :

40. Քրիստոնէական Եկեղեցիին մէջ հոգւոյ անսմահութեան և մեռելոց յարութեան վարդապետութիւնը ընդհանրապէս ընդունուելէ վերջ, կարդ մը անհամաձայնութիւններ կը տեսնուին՝ զանազան Եկեղեցիներու միջեւ, քանի մը երկրորդական խնդիրներու մասին: Այդ խնդիրներէն մին է Կաթոլիկ Եկեղեցիին քարոզած ՔԱՀԱԲԱՆԻ սկզբունքը: ՔԱՀԱԲԱՆԼ ըստ Կաթոլիկ վարդապետութեան այնպիսի տեղ մըն է, ուր կ'երթան սրբոց կամ դատապարտելոց կարգէն դուրս նկատուած և սրբուելու կարօտ հոգիները, հոն կրակի ալղեցութեամբ իրենց մեղքերը քաւելու, կրելու իրենց պատիմները և իրենց թողութիւնը գանհետով միանալու փրկուած հոգիներուն: Պէտք է ըսել թէ ՔԱՀԱԲԱՆԼ պատօնական հրատարակութիւնը տեղի ունեցաւ 1439ին Ֆլորանսի ժողովին մէջ:

այս տեսակ ըմբունում մը չկրնար արդարանալ աւետարանական ողջամիտ սկզբունքով և արդիւնք է սխալ մենաւումի: Մենք գիտենք թէ Ա. Գիրքը կրակը նկատած է իրեւ մաքրիչ զօրութիւն. «ամէն մէկուն գործը պիտի յայտնուի, որովհետև օրը երեւան պիտի բերէ, ինչու որ կրակով պիտի յայտնուի և ամէն մէկուն գործին տեսակը կրակը պիտի փորձէ» (Ա. Կորնթ. Դ. 13) Ա. Պետր. Ա. 7): Պէտք է ուշադրութիւն ընել, սակայն, թէ կրակին ընծայուած այս մաքրիչ զօրութիւնը պէտք չէ տառական իմաստով մը հասկնալ Ա. Գրոց մէջ, որովհետև հոգեկան գործողութեան մը համար նիւթական միջնորդի պէտք չ'զգացուիր բնաւ. կրակը իրեւ մաքրիչ զօրութիւն խորհրդանշան կամ պատկեր գործածուած է շարունակ: Կաթոլիկ Եկեղեցին որ փոյթ գտնուած է միշտ, զրին տառական իմաստին կապուած՝ շեղելու լրջամիտ վարդապետութիւններէն, ՔԱՀԱԲԱՆԼ մասին եւս միեւնոյն ընթացքին հետեւած է: Ի սկզբան Որո՛դինէս եղաւ որ կրակին այդ աննիւթական զօրութիւնը սկսաւ տառական իմաստովը մեկնել հակառակ այլարանական մեկնութեան նախահայրը ըլլալուն: Իրմէ յետոյ Օգոստինս եղաւ որ կրակով փորձուելու այդ փրկարար գործողութիւնը դրաւ հաւատացեալներու մահուան և վերջին դատաստանի միջեւ և ասով գրեթէ անորոշ հիվերջին զատաստանի միջեւ հաւատացեալներու, այնպէս որ ինչ ինչ հեղինակներ քաւարանին հիմնադիրը կը նկատեն զինքը. թէպէտ պէտք է ըսել իրաւամբ թէ ՔԱՀԱԲԱՆԼ պատօնական հրատարակութիւնը տեղի ունեցաւ 1439ին Ֆլորանսի ժողովին մէջ:

41. Կաթոլիկ Եկեղեցին յաւարանի վարդապետութիւնը հիմնելով նպատակ ունէր նախ և առաջ Պատ-

պական մնաւուկը հարստացնելու, որովհետեւ միեւնոյն ժամանակ յայտարարեց թէ Պապութիւնը իշխանութիւն ունենալով նոյն խակ մեռեալներուն վրայ, կրնայ վճարուած գումարի մը համաձայն մեղմացնել ՔԱՀԱՐՍՈՒՆԻՆ մէջ ապաշխարող հոգիներուն պատիքը: Ճիշտ այս պատճառաւ էր որ երբ նորածին Բողոքականութիւնը շատ մը այլանդակութիւններու հետ մերժեց նաև Պապական ՔԱՀԱՐՍՈՒՆԻ սկզբունքը, Կաթոլիկ Եկեղեցին պէտք տեսաւ Տքիտենդեան ժողովին մէջ անդամ մըն ալ հաստատելու խախտուած ՔԱՀԱՐՍՈՒՆԻ պաշտամունքը, քանի որ ան գիտէր թէ մեռելոց վրայ իր ազդեցութիւնը ու բացուած միջոցին պակսած պիտի ըլլար նաև իր երկրաւոր իշխանութեան ազդեցութիւնը: «Եթէ կրակով մաքրութեան մը անհեթեթ մտածումը այնքան մշակուեցաւ, պատճառը այն է, որ մեռեալներու վրայ քահանայալնետութեան իշխանութիւնը տարածած միջոցին, այդ հաւատալիքը աւելի եւս կ'ամրապնդէր իր աշխարհական իշխանութիւնը: Եկեղեցին իրեւ բաշխողը Աստուածային չնորհներու և մանաւանդ պատարագին, որ մեղքերու ներումը կ'ապահովէ անոր ազդեցութիւնը իր ուղածին պէս կը գործածէ ՔԱՀԱՐՍՈՒՆԻ տառապանքները մեղմելու համար: Ի՞նչ կախարդանք զգեցաւ անով Եկեղեցին յաչս այն վշտացեալներուն, որոնք իրենց սուգերուն առաջին դառնութեանը մէջ, քարշ բերուած իրենց կորսնցուցածներուն պատկերէն, իրենց ամէն ինչը պիտի տային հարթելու համար ճամբանին դէպի երկնային բնակրանները: Այս է պատճառը որ Բողոքականները միաձայնօրէն հակապղեցին այս յանդուդն վարդապետութեան դէմ, որ Հոռովմի ձեռքին մէջ հարստահարութեան սոսկալի գործիք մը եղած էր: «(Պօվոն):

42. Արեւելեան Եկեղեցին, որուն կը պատկանի նաև հայկականը, ՔԱՀԱՐՍՈՒՆԻ սկզբունքը մերժելու

միեւնոյն ժամանակ հերքած կ'ըլլայ Պապին կարծեցեալ նեղինակութիւնը մեռեալներուն մասին, միւս կողմէն կրնդունի թէ մեռնողներու հոգիները ժամանակաւոր վլճակի մը մէջ կ'ապրին սպասելով «ահագին օրուան»: Այս է գոնէ քրիստոնէական հագոյն Եկեղեցւոյ վարդապետութիւնը, և մեր Եկեղեցւոյ բոլոր արարողութիւնները և երգերը զայդ կը հաստատեն: Մեր Եկեղեցին կը մերժէ մեծ գարուն կեղծիքը եղող յաւարանական վարկածը՝ որ, ինչպէս վերը բսինք, պարզապէս ընչաքաղցութեան իրեւ ազբիւր սահմանուած էր: Հըտովմէական Եկեղեցին առանց նկատելու թէ ՔԱՀԱՐՍՈՒՆԻ վարդապետութիւնը որքան ուղիղ կը նղովէ այն բոլոր Եկեղեցիները՝ որոնք իրեն համամիտ չեն գտնուիր ՔԱՀԱՐՍՈՒՆԻ մասին: Աւելորդ է հոս յիշատակել թէ ինչ նշանակութիւն կրնան ունենալ նղովքները, որոնք շահանդիր և պատոր ազբիւրներէ կը բգլիին, և որոնք նախատինքն են բուն իսկ իրենց հեղինակներուն: Փիրմիիսանոս Եպիսկոպոս ժամանակին իմանալով թէ հերետիկոսաց մկրտութեան խնդրոյն մէջ Սաեփաննոս Պապ սպանացեր է նղովէլ Ափրիկէի Եկեղեցիները, իրենց կարծակից չգանուելնուն համար սապէս գրած է անոր: «Գիտե՛ս, ի՞նչ հակառակութիւն և ի՞նչ վէճեր կը յարուցանես բովանդակ աշխարհի եկեղեցիներուն դէմ: Ի՞նչ ծանր մեղք կը գործես այնչափ հաւատացեալներուն միութիւնէն զատուելովդ, դուն ինքպինքդ կը սպաննես: մի խաբուիր, որովհետեւ ճշմարիտ հերձուածողը ան է որ Եկեղեցւոյ միութիւնը կը մերժէ: Ուրիշները քեզմէ զատուած կարծած միջոցիդ, դուն ես որ անսնցմէ կը զատուած կարծած միջոցիդ, Պիրմիլիանոսի այս պատասխանը ճշմարիտ զատուիս:» Փիրմիլիանոսի այս պատասխանը ընդունէ կը ապահուած կարծած միջոցիդ, զատուած կարծած միջոցիդն է արեւելեան Եկեղեցիներու բողոքին ընդունէմ Հռովմի Պապութեան:

ԵԿԵՂԵՑԻ

43. Ամէն կրօնք, որ իբր հաստատուած դրութիւն, իր ժողովուրդը ունեցած է, այդ ժողովուրդին իբրև միութեան տեղ հիմնած է կեղրոն մը՝ ուր կարող ըլլար կատարելու իր կրօնական ծէսերն ու պաշտամունքները: Պաշտամունքի և ժողովուրդական հաւաքումի այդ կեղրոնավայրը իւրաքանչիւր կրօնքի և դարերու համաձայն առած է տարբեր անուններ:

Ընդհանրապէս մեհեան կոչուած են այն շնչնքերը, ուր կուապաշտութիւնը իր ծէսերը և պաշտամունքները կատարած է: Տաճար կոչուած է Մոլսիսականութեան պաշտամունքին նուիրուած կեղրոնավայրը: Իսկ Եկեղեծի այն շնչնքերը՝ ուր Քրիստոնէական կրօնքի պաշտամունքները ի գործ կը դրուին: Եկեղեցին յունական բառ մըն է ('Էռալդուա') որ թէպէտ հասարակուրիշն և կամ ժողովուրդ կը նշանակէ, բայց այոր այդ բառը իր նախնական իմաստէն շատ աւելի յաճախ կը գործածուի նշանակելու այդ հասարակութեան կամ ժողովուրդին միութեան տեղը ուր անոնք իրենց հասարակաց պաշտամունքը կը կատարեն:

44. Եկեղեցի հիմնարկութիւնը և անոր արդի նշանակութիւնը Քրիստոնէական գործ մըն է բոլորսվին: Այսու հանդերձ երբ Աւետարաններու կը դիմնաք, կը տեմնենք որ Քրիստոս որ Գլուխն է Քրիստոնէական Եկեղեցիներուն, երբեք ո՛ւ և է բառ չէ արտասանած Եկեղեցոյ հիմնարկութեան և անոր կազմակերպութեանը մասին: Ընդհակառակը, Յիսուսի ըմբռնումով բաւական էր որ քանի մը մարդիկ հաւաքուէին իր անունով, հոգ չէր թէ ուր, ինք անոնց մէջ ներկայ պիտի գանուէր

շարունակ: Քրիստոսի այս լուռթիւնը Եկեղեցիի կազմակերպութեան և պաշտամունքի մասին, երբ մէկ կողմէն նկատողութեան կ'առնունք, միւս կողմէն կը տեմնենք որ իր անմիջական յաջորդներուն, այսինքն առաքեալուներուն օրով, հոս ու հոն, Քրիստոնէայ հասարակութիւնները կը բաժնուին իրենց նախկին հաւատալիքներէն, կրօնքի Եղբայրներէն, իրենց մեհեաններէն, պաշտամունքներէն, ծէսերէն, և կ'ակսին առաքեալներու շունչին տակ մասնաւոր Եկեղեցիներ հիմնել, հոն կատարելու համար իրենց ուսուցուած նոր կրօնքին, այսինքն Քրիստոնէութեան ծէսերը՝ որոնք կը ձեւուին ամենէն աւելի Մոլսիսական տաճարին կազմակերպութեան և ծէսերուն վրայ: Այս պատճառաւ է, ապահովաբար, որ Առաքելական կը կոչուի Եկեղեցին: «Առաքեալներուն ձեռքով հիմնուած» նշանակութեամբ:

Աւելի արդար ըլլալու համար պէտք է ըսել թէ Պօղոս առաքեալի երեւումով է որ դէպքերը անհրաժեշտ կ'ընեն Քրիստոնէական Եկեղեցին հիմնելու, քանի որ մենք Դործք Առաքելոցէն կը տեմնենք թէ Պօղոս Առաքեալի երեւումէն առաջ ու բաւական վերջը, նուրադարձները հակառակ իրենց Քրիստոնէութեան, պէտք չեն տեմներ նոր Եկեղեցի հիմնելու, և ըստ առաջնոյն կը շարունակեն յաճախել Հրէական տաճարը: Պօղոս Առաքեալ երբ իր հոգեկան փոփոխութիւնով կը ճեղքէ բուն առաքեալներուն կարողութեան յատկացուած հրէամբոտ անձուկ պատռարը, և կ'երթայ հեթանոս գետնի վրայ սերմանելու Աւետարանի հատիկները, որոնք Հրէաստանի մէջ այնքան ապերախտութեամբ սերմանուած էին, պէտք կը տեմնէ հիմնելու Եկեղեցին, պարզապէս հակազդելու համար Հրէական տաճարին և հեթանոսական մեհեաններուն՝ որոնցմէ կը բաժնուէր իր քարոզութեամբ դէպի ծամարտութեան կրօնքը դիմով ժողո-

վուրդը։ Պօղոս Սուաքեալ, իրբու հիմնադիր Քրիստոնէաւ կան Եկեղեցիներու, կատարելապէս կը յաջողէր իր ձեռունարկներուն մէջ, որովհետև ինքը, երբեմն օրինաց վարդապետ, շատ լաւ հմտութիւն ունէր Հրէական տաճարին կազմակերպութիւններուն, և ինքը շատ լաւ գիտէր կարդալ ժողովուրդներու հոգին, որ հակառակ իրեն մատակարարուած բոլոր կրօնական ու հոգեկան վսեմութիւններուն, տակաւին շօշափելի և տեսանելի գոյութեան մը կամ հաստատութեան մը պէտք ունէր։ Պօղոս Սուաքեալ իրենց մենեաններէն դատառող հեթանոսներուն և իրենց տաճարէն հեռացող Հրեաններուն կուտար եկեղեցի մը՝ որ ոչ մենեանին ագեղութիւնները՝ և ոչ տաճարին աւելորդապաշտութիւնը ունենար, և որ առաքեալին ըմբռնումով, իր մէջ պիտի խստացնէր Քրիստոսի աստուածային հոգին։

ԱՅ. Պօղոս Սուաքեալ իրմով հիմնուած Եկեղեցիին կարծես երկու որոշ երեւոյթ կ'ընծայէ։ Երբեմն Եկեղեցի ըսելով կ'իմանայ որոշ կապով մը իրարու հետ կապուած Քրիստոնէայ մասնաւոր հաւատացեալներու բազմութիւնը կամ հաւաքումը (Գաղ. Ա. 2. Ս. Կորնթ. Ճ. Զ. 1. Բ. Կորնթ. Բ. 1. Հռովմ. Ճ. Զ. 5), և երբեմն Եկեղեցի բառով կ'իմանայ Քրիստոսի խորհրդական մարմինը և կամ Քրիստոնէայ հաւատացեալներու ամբողջութիւնը։ (Եփես. Ա. 22. Ե. 23-32. Կող. Ա. 18 և 24)։ Սյդ երկու իմաստներէն մէկով կամ միւսով նկատուած տաեն Պօղոս Սուաքեալի համար Եկեղեցիին հիմնարկութեան մէջ մեծադոյն խէալը որ կայ, սա է թէ պէտք է սկզբամբ բոլոր անմաքրութիւններէ սրբուած Եկեղեցին ներկայացնէ Քրիստոսի մարմինը, որովհետև ինքն է որ կ'ըսէ էրիկներու խօսած ատենը «Երիկներ, սիրեցէք ձեր կիները, ինչպէս որ Քրիստոս ալ սիրեց Եկեղեցին, և իր անձը մատնեց անոր համար, որպէս զի զանիկա

սրբէ ու մաքրէ . . . փառաւոր ընէ Եկեղեցին՝ որ արատ մը կամ բիծ մը կամ ուրիշ ասոնց նման բան մը չունենայ, այլ որ սուրբ և անարատ ըլլայ» (Եփ. Ե. 23-27)։

ԱՅ. Սուաքեալներուն ձեռքով հիմուած Քրիստոնէական Սուաքելական Եկեղեցին, Քրիստոսի հետ իր ունեցած հոգեկան յարաբերութիւններուն մէջ բոլորովին զանազաններու համար հեթանոսական մենեաններէն և մովսիսական տաճարէն, հետզհետէ որոշ ձեւեր և մասնաւոր յատկութիւններ առաւ իր վրան, և Եկեղեցւոյ ներկայացուցիչներուն համար եղաւ մի, սուրբ և ընդհանրական։

Եկեղեցին Քրիստոնէական ըմբռնումով Մի է, որովհետև ինքն է աստուածային ձշմարտութեան յայտնութիւնը և աւանդապահը, ու մենք գիտէնք թէ ձըշմարտութեան հակառաղ ուրիշ ձշմարտութիւն մը գոյութիւն չի կրնար ունենալ, և որովհետև ձշմարտութիւնը քրիստոնէական դաւանութեան և վարդապետութեան նոյնութեան և միութեան մէջ կը կայանայ, հետեւաբար Եկեղեցին մի է ըսելով կը հասկնանք թէ Եկեղեցին կաղմուած է մէկ դաւանանքի պատկանող անդամներէ։ Ու մենք կը հաւատանք թէ քրիստոնէական բոլոր Եկեղեցիներու պատկանող բոլոր հաւատացեալները միեւնոյն դաւանութիւնը ունին հանդէպ Քրիստոսի և Երրորդութեան՝ որոնք քրիստոնէական կրօնքին էական դաւանութիւնը կը կազմեն ու ալ մենք չենք փնտուեր այն պատճառներն ու պարագաները՝ որոնք ծնունդ տուած են տեղական մասնաւոր և ազգային Եկեղեցիներու գոյութեան և որոնց ամբողջութիւնը կը կազմէ բուն իսկ քրիստոնէական Եկեղեցիին միութիւնը, ինչպէս որ առաքեալը կը գրէ. «Դուք այնպէս քալէք, ինչպէս որ կը վայլէ այն կոչման՝ որով դուք կանչուեցաք. բոլոր խոնարհութիւնով ու հեղութիւնով, երկայնամտութիւ-

նով, սիրով, իրարու ներողամիտ ըլլալով. չանալով Հոգւոյն Սրբոյ միաբանութիւնը խաղաղութեան կապով պահել մէկ մարմին և մէկ հոգի ինչպէս որ մէկ յօյսով կանչուեցաք ձեր կոչումին. Աստուած մէկ է և ամենուն հայր, որ ամենուն վրայ և ամենուն հետ և ձեր ամէնուն հետ է են» (Եփես. Դ. 1-16):

Եկեղեցին ՍՈՒԻՐԲ է. 1. — Որովհետեւ սուրբ է իր գերազոյն գլուխը Քրիստոս. 2. — Որովհետեւ սըրբութեան կոչուած են բոլոր անոնք, որոնք այդ եկեղեցին անդամ ըլլալու սահմանուած են, ըստ առաքեալին թէ «Զեզ կանչող սուրբին պէս դուք ալ սուրբ եղիք ձեր բոլոր վարմունքին մէջ» (Ա. Պետ. Ա. 15) կամ թէ «ինչպէս որ մեզ աշխարհի սկիզբէն առաջ ընտրեց որպէս զի մինք իր առջև սիրով սուրբ և անարատ ըլլանք» (Եփես. Ա. 4): 3. — Եկեղեցին սուրբ է իր ընդունած և քարոզած վարդապետութիւնովը, քանի որ ինք կը սորվեցնէ հաւատացելոց դաւանիլ ծամարտութեան Ա. հաւատաքը, ունենալ մաքուր սիրտ, ամբիծ վարք մեր բոլոր կեանքի օրերուն մէջ: Վերջապէս Եկեղեցին սուրբ է, որովհետեւ ան միանգամ ընդ միշտ սրբուած է աստուածային դառին, այսինքն Յիսուսի, Քրիստոսի արիւնովը: Եկեղեցին ԸՆԴՀԱՅՆԻ ՍՈՒԿԱՆ է. 4. — Սյսինքն կաթողիկէ, որովհետեւ հրէական տաճարին նման տեղի մը և ազգի մը յատուկ չէ միայն, այլ ընդհակառակը ամէն ազգեր, ամէն դարու մարդկութիւն կոչուած են հազորդակից ըլլալու իր քարոզած ծամարտութիւններուն, իր աւանդած սրբութեանը: Որովհետեւ Քրիստոնէական Եկեղեցին տիեզերապէս քարոզուելու կոչումը ունի, և եթէ կարելի է ըսել, ան յաւիտենապէս պիտի տեւէ մարդկութեան արատները սըրբելու համար:

Մասնաւոր Եկեղեցիներու գոյութիւնը բնաւ չի վեսաեր

Քրիստոնէական եկեղեցւոյ ընդհանրականութեան, քանի որ այդ մասնաւոր եկեղեցիներն են որ կը նպաստեն քրիստոնէական կրօնին ընդհանրացումին, և իրենք են որ կը կազմին եկեղեցին միութիւնը և անով եկեղեցին ընդհանրականութիւնը:

ԱՅ. Ի սկզբանէ անտի տեսակ մը վարդապետութիւն եղած է սա համոզումը թէ առաքելական սուրբ և ընդհանրական և մի եկեղեցին անսխալական է նաև: Անսխալութեան այս վարդապետութիւնը իրբեւ զէնք գործածուած է գրեթէ մեր թուականի երկրորդ դարէն սկսեալ, արդիկելու համար բուն իսկ Եկեղեցւոյ ծոցէն բումոնով հերետիկոսութիւնները որոնցմէ ոմանք տգիտութեան և ոմանք փիլիսոփայական մտածումներու արդիւնք էին: Այդ անսխալութիւնը կը հիմնուէր սա համոզումին վրայ թէ առաքեալները՝ քրիստոսէն ուսուցուած գրաւոր և բերանացի ծամարտութիւններ աւանդեցին իրենց հիմնած եկեղեցիներուն, և թէ այդ ճշշմարտապատում աւանդութիւնները անվթար և անփոփոխ սպահանուեցան Եկեղեցւոյ իրարու յաջորդող հայրապետներուն և ժողովուրդներուն միջոցաւ: Եկեղեցին ատով իրաւունք ունեցաւ յայտարարելու թէ առաքելական ուսուցման և քրիստոսաւանդ ծամարտութիւններուն միակ աւանդապահն է ինքը և թէ իրմէ դուրս և իրեն հակառակ ուրիշ ծամարտութիւն մը չկրնար գոյութիւն ունենալ: Ահա ասոր համար է որ Ոսկեբերան Հոգեգալստեան իր ճառին մէջ կ'ըսէ. «Եկեղեցին չի ծերանար, չի նուածուիր, և չի յաղթահարուիր իր հակառակ կորողներէն, որովհետեւ Քրիստոս անոր համար չարչարուեցաւ, և դժոխոց դռները անոր չպիտի կրնան յաղթահարել: (Տիես նաև Մատթ. Ժ. 18) և մեր Եկեղեցւոյ վարդապետներէն մին Ներսէս Լամբիրնացի իր պատարագի մեկնութեան մէջ կ'ըսէ. «Ո՛վ Եկեղեցի,

Սուրբ Հոգւոյն սիւնը կ'առաջնորդէ քեղի, և քու ուշ դեցոյց Աւետարանի վէմը Քրիստոն է:

48. Սրեւելեան Եկեղեցիները կ'ընդունին թէ Առաքելական Եկեղեցւոյ անսխալութիւնը Եկեղեցւոյ էութեանը մէջն է և թէ այդ անսխալ էութեան ճշմարիտ ձայնին արձագանգը կ'ըլլան տիեզերական ժողովները՝ զոր կազմեցին և կրնան կազմել ի պահանջել հարկին բոլոր տիեզերական Եկեղեցւոյ հայրապետներն ու վարդապետները և արդ տիեզերական ժողովներն են որ կը քննին և կ'որոշին Ս. Գրոց իմաստները, կը գծեն հաւատոյ կանոնները, Քրիստոնէական կեանքի բարոյական հրահանգութիւնները: Մեր Հայկական Ս. Եկեղեցւոյ համար տիեզերական ժողովները երեք են. Ա. Նիկոյոյ ժողով, Բ. Ս., Կ. Պոլսոյ ժողով և Գ. Եփեսոսի ժողով: Յունական Եկեղեցւոյ համար տիեզերական ժողովները եօթն են (Դ. Քաղկեդոնի Ե. Բ. Կ. Պոլսոյ, Զ. Գ. Կ. Պոլսոյ, Է. Բ. Նիկոյոյ) Իսկ Կաթոլիկ Եկեղեցին՝ որուն համար զեղծանիլը ամենէն դիւրին և հեշտ գործն է, անպայման կերպով շատցուցած է իր տիեզերական ժողովներու ցանկը: Երեք տիեզերական ժողովներուն տուած վճիռներուն պարտաւոր են հնագանդիլ բոլոր անոնք՝ որոնք յադրական և կամ զինուորեալ (*) Եկեղեցին կը պատկանին առանց դիրքի, ախտղոսի և աստիճանի բացառութեան: Անոնք՝ որոնք Քրիստոնեայ ըլլալով հանդերձ չեն ուզած հնազանդիլ տիեզերական

(*) Քրիստոնէական Եկեղեցին երկու մասի կը բաժնուի. անոնք՝ որոնք կը պատկանին Քրիստոնէական Եկեղեցին և որոնք տականին կենդանի են կը կազմեն զինուորեալ Եկեղեցին քանի որ իրներ տականին յաղելիք փորձութիւններ ունին կեանին ճամբանն վրայ. խակ ընդհակառակիր, անոնք՝ որոնք իրենց կեանիքի փորձութիւնները աւարտած և քրիստոնէավայել վախճան մը ունեցած են և մեկնած այս աշխարհէն կը կազմեն յաղթական Եկեղեցին:

ժողովներու կողմէ տրուած վճիռներուն. կոչուած են հերձուածող, հերեւիկոս, ուրացող և բանադրուած: Եկեղեցւոյ համար ուրացողը այն մարդն է որ պարզապէս և առանց այլ և այլի կ'ուրանայ Քրիստոնէութիւնը, որու մէջ ծնած և մեծցած էր ինքը: Կը կոչուի նաև հաւատուրաց: Հերձուածող անիկա է, որ չուզէր հնասազանդիլ Եկեղեցւոյ վարչական կառավարութեանը և անոր օրինաւոր հովիւներու իշխանութեանը և անոնցմէ կը բաժնուի, առանց իր Քրիստոնէական հաւատաքը ուրանալու: Հերեւիկոս կը կոչուի անիկա որ հաւատոյ և դաւանութեան մասին Եկեղեցւոյ կողմէն վճռուած ճշմարտութիւնը նոյնութեամբ չընդունիր, և իր կողմէն անկէ կը պահանջնէ և կամ անոր վրայ կաւելցնէ և կամ նոյն իսկ բոլորովին կ'ուրանայ ոչ թէ Քրիստոնէութիւնը այլ Քրիստոնէական այս կամ այն դաւանութիւնը: Տիեզերական ժողովներու կազմակերպութեան աւածին օրինակը առաքեալները տուին, երբ կազմեցին Երուսաղէմի մէջ առաքելական առաջն ժողովը, կարգադրելու համար իրենց ժամանակ երեւան եկող և վէճի նիւթ կազմող խնդիրները: (Տիե. Գործք. Առաք. Ա. 16 Զ. 1-7 ԺԱ. 2-18. ԺԵ. ԽԱ. 18-25 ԱԼՆ.:

49. Հոսովմէական Եկեղեցին, որ միշտ ջանաղիր եղած է խեղաթիւրելու ամէնէն տարրական ճշմարտութիւնները, Եկեղեցւոյ վարդապետութեան մասին եւս հետզէնեալ ինկաւ կարգ մը մոլութիւններու մէջ որոնք ապահովաբար պատիւ չեն կրնար բերել ոչ քրիստոնէութեան ընդհանրապէս և ոչ ալ նոյն իսկ կաթոլիկ Եկեղեցւոյ մասնաւորապէս: Թ. Պարէն սկսեալ հոռվմէական Եկեղեցին օգտուելով իր քաղաքական դիրքէն այնպիսի երկրի մը մէջ՝ ուր միահեծանութիւնը սուսապելական կազմութիւնի կը կոչուի անձնապէս քաղաքական անձնաւորու-

թիւններու համար, հոռվմէական եկեղեցին՝ որ հաճոյք չէր կրնար զգալ թերեւս բոլոր եկեղեցիներու դաւանած սա քիչ մը վերացական վարդապետութենէն թէ Քրիստոս է ընդհանուր եկեղեցւոյ գլուխը, ելաւ յայտարարելու թէ Հռովմի պատրիարքը կամ Պապն է քրիստոնէական եկեղեցւոյ տեսանելի գլուխը և թէ իր այդ երաւունքը Աստուծոյ կողմէն տրուած է իրեն, և թէ այդ իրաւունքը իրեն տրուած է միմիայն անոր համար որ ինքն է Պետրոսի յաջորդը, գլուխ է եկեղեցւոյ քանի որ Պետրոս ալ գլուխ էր առաքեալներուն։ Ահա այս է հոռվմէական եկեղեցւոյ ուսուցած վարդապետութիւնը Պապին գլխաւորութեանը մասին։ Մինք իրեւ քրիստոնէական ծշմարիտ եկեղեցւոյ զաւակ չենք կրնար երբեք ընդունիլ հոռվմէական եկեղեցւոյ այս սխալ ուսուցումները՝ որոնց մէջ ոչ հաւատք գոյութիւն ունի և ոչ ուղիղ և առողջ արամարանութիւն։ Պահ մը ընդունելով հանդերձ թէ Պետրոս գլուխը եղած ըլլայ միւս առաքեալներուն, ինչ որ աւետարանով երբեք չկրնար հաստատուիլ, այս չի նշանակեր թէ իր յաջորդներն ալ պիտի ունենան այն միեւնոյն իրաւունքը՝ որ իրեն անձին միայն պէտք էր տրուած ըլլալ։ Ոչ միայն Պետրոսի անձնական գլխաւորութիւնը չի կրնար հաստատուիլ աւետարանով, այլ և պատմութեամբ վաւերապէս չի կրնար հաստատուիլ թէ Պետրոս առաքեալ առաջին Եպիսկոպոսը եղած ըլլայ Հռովմայ աթուին։ Ընդհակառակը սա ստոյգ կ'երեւի թէ Պետրոս Հռովմ գնաց պարզապէս հոն նահասակուելու համար և թէ Հռովմայ առաջին Եպիսկոպոսը եղած է լինու, ըստ եկեղ. Պատմութեան վկայութեան։ Բաց աստի մենք ի հաւատոց գիտենք թէ Քրիստոնէական եկեղեցւոյ գլուխն է նոյն ինքն Քրիստոս, ինչպէս կը գրէ Պողոս առաքեալ իր խօսքը Եփեսացի ժողովուրդին ուղղելով։ «Ալ այսու-

հետեւ գուք օտար և պանդուխա չէք, այլ սուրբերուն քաղաքակիցները և Աստուծոյ ընտանիքը, առաքեալներուն և մարգարէներուն հիման վրայ շնուած, որուն անկիւնին գլուխն է Յիսուս Քրիստոս. (Եփես. Բ. 19-21)։ Եւ այդ Քրիստոսի զգալի գլխաւորութեան շուքին տակն է որ մասնաւոր եկեղեցիներու հայրապետները իրեւ նոյն և մի գլխոյ վարչական փոխանորդներ, հաւասար իրաւունքներով և հաւասար պարտաւորութիւններով կոչուած են հոլուելու իրենց յանձնուած մասնաւոր եկեղեցիները առանց մեծի և փոքրի հակաքրիստոնէական յաւակնութիւններու։

50. Պապական եկեղեցին չգոհանալով իր հայրապետներուն գլուխ եկեղեցւոյ կեղծ մակղիրը սեպհականելէն 1870-71ին նոր մոլորութիւն մըն ալ աւելցուցին իրենց առաջին մոլորութեանը վրայ Պապին անձին յատկացնելով եկեղեցւոյ և տիեզերական ժողովներու սեփականութիւնը եղող անսխալութիւնը։ Արդէն քիչ առաջ ըսինք թէ Եկեղեցւոյ անդամները ինչ դիրքի և ինչ տիտղոսի ալ տէր եղած ըլլան, Պատրիարք, Կարողիկոս, Պապ և այն պարտաւոր են հնազանդիլ տիեզերական ժողովներու վճիրներուն, քանի որ անոնք են միակ ծշմարիտ ու անսխալ։ Որովհետեւ անհատները միշտ հակամէտ են սխալելու։ Պետրոս անդամ իր առաքեալ եղած միջոցին իրեւ անհատ և իրեւ մարդ իր շեշտուած սխալները ունեցաւ և Զերոնիմոս, Լատին եկեղեցւոյ այդ հայրապետը, որ միեւնոյն ժամանակ իր եկեղեցւոյն Մետրապոլիտը եղաւ, իր ընդդիմ Պեղագեանց ճառին մէջ կը գրէ թէ «Նոյն իսկ Պետրոսի չտրուեցաւ անսխալութիւն»։ Բաց աստի եթէ Հռովմայ Եկեղեցին տակառին ուղէ պնդել իր պապերու անսխալութեան նկատմամբ, ամէնէն սխալ գաղափարը կազմել պիտի տայ իր մասին և այնուհետեւ այլ եւս չպիտի կրնայ նոյն իսկ

իր անկեղծութիւնը ապացուցանել, քանի որ լատին եկեղեցւոյ պատմութիւնը հազարաւոր անհերքելի ապացոյներ ունի թէ քրիստոնէական եկեղեցիներու հայրապետներէն Պապերը ամենէն աւելի սխալած են: Անաւասիկ քանի մը օրինակ պատմութենէն. էլէ վթէրիս Վիքտօր Պապը նախ Մօնղանեանց հերետիկոսութիւնը ընդունեց ու յետոյ դատապարտեց: Էլիքրիսո Պապ նախ արիոսականութիւնը ընդունեց, Աթանասի աքսորը ստորագրեց և արեւմտեան եպիսկոպոներէն նղովուելէն վերջ, իր նախորդ կարծիքները հերքեց: Փելիքս Պապ ալ իրեն նման ըրաւ: Զոսիմոս Պապ Պեղագիոսի և կեղեստիոսի մոլորութիւնները եկեղեցին ընդունել տալու համար ամէն ջանք ի գործ դրաւ, նոյն իսկ Ափրիկէի Եպիսկոպոներուն յորդորանաց գիրեր գրեց, բայց յետոյ թէ այդ հերետիկոսները և թէ իր գրած գիրերը նղովեց: Վիրգիլոս Պապ նախ Եւստիքականութիւնը ընդունեց, նղովեց Քաղկեդոնի ժողովը և զանի դաւանողները և յետոյ հակառակ յայտարարեց: Աղաթօն Պապ կ. Պոլաց Գ. ժողովին մէջ նղովեց և բանադրեց Ռնորիսս Ա. Պապը և Յովհաննէս Դ. Պապ Ռնորիսս պաշտպանեց, Ստեփանոս Զ. Պապ Փորմողոս Պապը գերեզմանէն հանեց և Տիքիր գետը նետել տուաւ իրեւ մոլորեալ, ու յետոյ Ռոմանոս և Թէոտորոս Բ. Պապերը այդ Ստեփաննոսը դատապարտեցին և Փորմողոսի մարմինը Տիքերիսէն հանելով նորէն թաղեցին: Մարկեղիանոս մեռնելէն վախճանալով կոոց խոնկ մատուցանել տուաւ և յետոյ 300 Եպիսկոպոներու ժողովի մը մէջ խոստովանեցաւ իր յանցանքը և ապաշխարութեան դատապարտուեցաւ: Զենք ուղեւ երկարել Պապերու կողմէն ցոյց տրուած աշխարհանոչակ սխալներուն ցանկը ու մանաւանդ լռութեամբ կուզենք անցնի Պօրծիաներու Պոնեփակիսս է. իւսլյանի նման մարդասպան, մնրարոյական, զօշաքաղ

հարստահարող Պապերու անլուր արարքները՝ որոնք ոչ միայն հանդիսաւոր հերքումն են Պապերու ձրիապէս ընծայուած անսխալականութեանը, այլ և հանդէպ Քրիստոնէութեան իրեւ պիղծ արատներ յաւիտենապէս պիտի մնան կրօնապատմական տարեգրութիւններու մէջ:

Ֆ 1. Մինչև հոս խօսեցանք եկեղեցւոյ առաքելական հիմնարկութեան, անոր նշանակութեանը, միութեանը, սրբութեանը և ընդհանրականութեան մասին: Յոյց տուինք թէ Քրիստոնէական եկեղեցւոյ գլուխը բուն ինքը Քրիստոս է, և թէ աւելորդ և անտեղի է Պապերուն այն յաւակնութիւնը որով ինքինքնին զլուխ եկեղեցւոյ կը հռչակեն, մինչդեռ իրաւամբ համահաւասար Պատրիարքներէն մէկն է պարզապէս: Յոյց տուինք թէ ինչ է եկեղեցւոյ ըմբռնած անսխալականութիւնը և թէ ինչպէս պապերը կրօնական աններելի դեղծում մը գործած են իրենց անձին սեփականելով եկեղեցւոյ յատուկ անսխալականութիւնը: Կ'ուզենք քանի մը խօսք ալ ընել Հայ եկեղեցւոյ հիմնարկութեան և անոր կաղմակերպութեանը մասին: Հայ եկեղեցին հիմնադիրները եղած են Քրիստոսի տասերկու առաքեալներէն Բարթուղիմէոս (*), և այդ իսկ պատճառաւ մին է առաքելական եկեղեցիներէն: Հայկական Քրիստոնէութիւնը, ինչպէս կը տեսնուի, շատ հին քարոզութիւն մըն է, բայց նոյն ժամանակի Հռովմէական պետութեան ի գործ գրած հալածանքը իր ազդեցութիւնը ունեցաւ նաև մինչեւ մեր սահմաններուն մէջ, անոր համար եկեղեցի և եկեղեցւոյ կազմակերպութիւն հալածանքի մէջ մնացին և զրեթէ գաղտնի քարոզութեան: Այդ ժամանակներուն Հայկական եկեղեցին ունեցաւ նոյն իսկ իր նահաւակները՝ որոնց արիսնը այնքան

(*) Ոմանք Թաղէոսը եօթամասուն երկու աշակերտներէն մին կը նկատնի

բեղմնաւոր եղաւ Քրիստոնէական հաւատքի տարածումին համար : Որովհետեւ կը մեսնենք որ մեր երկրին մէջ գրեթէ ամենէն կանուխ Քրիստոնէութիւնը պետական կրօն . Կ'ըլլայ և իր վրայէն կը սրբէ հալածանքի արիւն ները : Հայկական Եկեղեցին պաշտօնական հանգամանք ստանալուն՝ կաթողիկոսական Աթոռը կը բազմի Գրիգոր Լուսաւորիչ, որ կերպով մը երկրորդ հիմնադիրը կ'ըլլայ Հայ Քրիստոնէութեան, և ահա այդ պատճառաւ ումանք տղիտութեամբ և այլք չարամտութեամբ Հայկական Եկեղեցին կը կոչեն Գրիգորեան կամ Լուսաւորչական եւս : Կաթողիկ Եկեղեցւոյ վարդապետները Հայկական Եկեղեցին առաքելականութիւնը և անկախութիւնը կասկածի տակ ձգելու մարմածով կարգ մը առասպելներ հիւսեցին Գրիգոր Լուսաւորչի անձին շուրջ, փորձեր ըրին զանի մինչեւ Հռովմ զրկելու և այդ տեսակ առասպելական ճամբորդութիւնները վաւերացնելու համար Դաշնաց բուլղրի նման կեզծ ու սղայոդ գիրքերու վայսութիւնները ի մէջ բերին . Աւելորդ է ըսել թէ այդ առասպելները այսօր իրենց նշանակութիւնը կորսնցուցած են բոլորովին նոյն իսկ Հայ Կաթողիկներու համար և այսօր ձմարիս իրականութիւնը կուգայ պարզօրէն հաստատելու՝ պատմական փաստերով՝ թէ Հայ Եկեղեցին առաքելական է իր ծագումով, թէ միւս Եկեղեցիներէն առաջ այսինքն Դ. Պարու նախակիզրը պետական կրօն մը եղած է, թէ այդ նշանաւոր փոխինութեան միջոցին Ս. Գրիգոր Լուսաւորիչ ոչ թէ Քրիստոնէութիւնը նոր քարոզած ու Եկեղեցին նոր հիմնած, այլ իր օրով ձերբազատուած և կանուխէն գոյութիւն ունեցող Եկեղեցին կազմակերպած, բարեկաւած և զարդացուցած է, անկախ բոլորովին ինք իր սահմաններուն մէջ և թէ Հայ Եկեղեցին իր ծագման օրերէն սկսեալ մինչեւ այսօր պահած է իր տոնմային անկախութիւնը հակառակ շատ մը դժուարին կացութիւններու և դժբախտ պարագաներու՝ զորս զարերը ծնցուցին շարունակ :

ԽՈՐՃՈՒՐԴ

58. Եկեղեցին ունի ոչ միայն իր վարդապետութիւնները որոնցմէ ամենէն կարեւորները տեսանք արդէն, այլ և իր խորհուրդները (sacrament): Բայց քիչ մը տարօրինակ է տեսնելը որ Ս. Գրոց հին և նոր կտակարաններուն մէջ այդ խորհուրդներու մասին ոչ մէկ ակնարկութիւն և ոչ մէկ յայտնի բացատրութիւն կը գտնուի : Այս պատճառաւ թերեւս անտեղի ըլլար խորհուրդներու ծագումը վերագրել ոչ թէ աւետարաններուն և առաքելոց՝ այլ Եկեղեցւոյ հայրապետներուն : Միայն նոր կտակարանին մէջ քանի մը տեղեր յիշուած կան խորհուրդներ, խորհուրդ են . բառերը, և որոնք կը նշանակեն իրենց պարզագոյն իմաստով՝ « բան մը որ ծածկուած է, կամ որ մեր աչքերէն վարագուրուած ». (Խորհուրդ նշանակող Յունարէն բառն է միարի րիօն, Mystère, որ Յունարէն միին Գլոթել, ՓՍԿՈՒԻՒ, բայց արմատէն կ'ելլէ :) Պօղոս առաքեալ այդ խորհուրդ բառը կը գործածէ ցուցնելու համար անցեալին մէջ երկար ատեն անձանօր մնացած ու յետոյ Ս.Ի.Ե.Տ.Ա.Ր.Ա.Ն.Վ. յայտնուած ճշմարտութիւն մը, ինչպէս կը տեսնուի Կողոպացիներուն զրած սա կտորէն . « Որոնց ուղեց Աստուած զիացնել թէ ի՞նչ է այս խորհուրդին փառաւոր ճոխութիւնը հեթանոսներուն մէջ, թէ ան Քրիստոնէն է՝ ձեր մէջը փառքի յոյսը » : (Կող. Ա. 27 բաղդատէ նաև Եփես. Ա. 9) : Նոյն առաքեալը երբեմն այս բառը կը դործածէ մատնանշելու համար ապագային պատկանող ճմարտութեան մը թաքուն իմաստը . « Ահա ճեղի խոր-

հուրդ մը կ'ըսեմ. ամէնքս պիտի չննջենք, բայց ամէնքս ալ պիտի փոխութնք» (Ա. Կորնթ. ՃԵ. 51): Երբեմն ալ խորհուրդ բառը կը գործածէ մատնանշելու համար խորհրդանշամի մը թաքուն իմաստը. «Այս խորհուրդս մեծէ, բայց ես Քրիստոսի և եկեղեցին նկատմամբ կ'ըսեմ. (Թուղթ Եվկես. Ե. 32): Ահա զրեթէ այս իմաստներով միայն գործածուած է Ս. Գրոց մէջ խորհուրդ բառը և երբեք չի համապատասխաներ իր այսօրուան նշանակութեանը: Եկեղեցւոյ հայրերէն Տերտուղիանոս, խորհուրդ բառով կը հասկնայ խորհրդանշան մը՝ որուն ներքեւ կրօնական բարի կամ չամ գաղափար մը պահութաած է և իր այդ ըմբռնուումով Միզրայի պաշտամունքին առիւծները խորհուրդ կը նկատէ: Տերտուղիանոսի համար մկրտութիւնն ու հաղորդութիւնը խորհուրդներ են:

53. ԽՈՐՀՈՒՐԴ բառին իր նախկին պարզ նշանակութեանէն անջատ այսօրուան մեր ըմբռնած իմաստը տուողն եղաւ Օգոստինոս, երբ խորհուրդ բառը սապէս սահմանեց. «Տեսանելի նշան անտեսանելի չնորհքին»: Եւ այդ օրէն է որ «խորհուրդը» իր Քրիստոնէական մատնաւոր նշանակութիւնը ունեցաւ և գործածուեցաւ ցոյց տալու համար Քրիստոնէական այն արարողութիւնները, որոնց զգալի ձեւին խորը խորհրդաւոր ու նուիրական ներգործութիւնն մը կայ, և ահա այդ խորհրդաւորութեան միջոցաւ մարդիկ Ս.ստուածային չնորհներ կ'ընդունին: Մեր և բոլոր հին եկեղեցիներու համար եկեղեցւոյ խորհուրդները հետզհետէ եօթնի բարձրացան, 1. Մկրտուրիւն, 2. Դրոշմ, 3. Ապաշխարուրիւն, 4. Հաղորդուրիւն, 5. Պասկ կամ ամուսնուրիւն, 6. Օծուննիւանդաց, 7. Կարգ կամ ձեռնադրուրիւն բանանյութեան: Խորհուրդները կազմող մասերն են. Ա. Նիւրը. Բ. Զեւը: Խորհուրդներուն մէջ նիւրն է անոր մատակարարութեան ատեն գործածուած իրը կամ արարողու-

թիւնը, իսկ ձեւն է այն որոշուած աղօթքի այն բանաձեւը, որով խորհուրդները կը մատակարարուին:

Խորհուրդներու մատակարարութեան համար երեք տարրեր անհրաժեշտ են, եթէ կ'ուղենք որ Քրիստոնէական եկեղեցւոյ ըմբռնուումով խորհուրդը իր նշանակութիւնը և իր արդիւնքը ունենայ: Այդ երեք տարրերն են. 1.—Զգալի նշան մը, որով կարող ըլլանք խորհուրդին արտաքին մատակարարութիւնը տեսնել. 2.—Աղօրի որ պիտի սրբագործէ և նուիրականացնէ խորհուրդին զգալի նշանը. 3.—Օրինաւոր պաշտօնեայ, որ իրաւունք ունենայ խորհուրդը մատակարարելու, ի գործ գնելով զգալի նշանը և արտասանելով աղօթքը:

Մ Կ Ր Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն

54. Տերտուղիանոսի համաձայն մկրտութիւնը առաջինն է եկեղեցւոյ խորհուրդներուն, և հրամայուած է Քրիստոսի կողմէն Երկնից արքայութեան ժառանգործներուն իրեւ նախաքայլ: Ինքն էր որ երբ իր աշակերտներուն հրամայական կուտար երկինք համբառնալու համար, յանձնարարեց անոնց. «Գացէք այսուհետեւ, սորվեցուցէք բոլոր աղքերուն և զանոնք Ալրտեցիք յանուն ՀՕՐ և ՈՐԴԻՈՅՑ և ՀՈԴԻՈՅՑ ՍՐԲՈՅՑ» (Մատթ. Իլ. 19): Հին կտակարասնին մէջ մկրտութեան դրութիւնը երբեք գոյութիւն չունի, և անիկա չի կազմեր կրօնական արարողութեան մաս մը: Մկրտութիւնը առաջին անգամ Յովհաննէս Մկրտիչ ի գործ կը դնէ, այն ատեն ընդուած կրօնական սովորութիւններէն դարս պարզապէս ապաշխարութեան հրաւիրուած ժողովուրդը այդ արտա-

Քին սրբացման նշանով առաջնորդելու համար դէպի հոգեւոր սրբացումի այն կեանքը՝ զոր պիտի հիմնէր Քրիստոս : Յիսուս համակերպեցաւ Յովհաննէսի հրաւէրին ու ինք իր վրայ կատարել տուաւ այն արարողաթիւնը՝ զոր Յովհաննէս տաճարէն դուրս կը կատարէր Յորդանանու եղերքը, իբրև վերջին շառաւիզը Խրայէլի մարդարէներուն : Եւ այնուհետեւ մկրտութեան սրբարար խորհուրդը նկատուեցաւ իբրև յայտարար նշանը Քրիստոնեաներուն, որոնք պիտի կոչուէին անդամակցիլ Քրիստոսի հիմնած Եկեղեցին : Յիսուսի առ Նիկողիմոսսած աս խօսքը թէ «Թէ որ մարդ մը ջուրէն և հոգիէն չծնի չի կրնար Աստուծոյ թագաւորութիւնը մտնել» (Յովհ. Գ. 5) ամենէն որոշ յայտարարութիւնն է մկրտութեան կատարելիք դերի մասին :

Ֆֆ. Մկրտութեան նիւթն է ջուրը, որ շատ հին ժամանակներէ սկսեալ բոլոր ազգերու կողմէն նկատուած է ամենէն գերազանց մաքրիչ տարրը : Իսկ մկրտութեան կերպն է, կամ շնկղմամբ, կամ հեղիւամբ և կամ արակմամբ: Մեր Եկեղեցին առաքելական դարուն սովորութեանը համաձայն որդեգրած է շնկղմելու սովորութիւնը, և երախային մկրտութիւնը կը կատարէ զանի երեք անդամ ջուրին մէջ ընկղմելով և կ'արտասանէ սրբարար աղօթքին բանաձեւը, որ է «Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ» Սրեւելեան հին Եկեղեցին արակումով կամ հեղումով մկրտութիւն կը կատարէր միայն անոնց համար՝ որոնք հիւանդներ էին և չէին կրնար տարբեր կերպով մկրտութիւնը Ընկղմամբ մկրտելու սովորութիւնը գրեթէ բոլոր Քրիստոնեայ Եկեղեցիներու մէջ տեւեց մինչև ԺԴ. դար, ուրիէ վերջ անիկա զրեթէ դաղրեցաւ Կաթոլիկ Եկեղեցին մէջ, որ իրեն համար ընտրեց հեղիւամբ մկրտութիւնը: Կաթոլիկ պատմազիրներ անդամ կը խոստովանին թէ մկրտութեան հին սու

վորութիւնը ընկղմամբ էր միայն, քանի որ Պօղոս առաքեալ որոշ կերպով կը զրէ «Մկրտութիւնով Անոր հետ թաղուելով, նաև Անոր հետ յարութիւն առիք Աստուծոյ զօրութեանը թաղուիլ կարելի էր միայն այն ատեն երբ մկրտութիւնը շնկղմումով տեղի կ'ունենար: Իսկ յետոյ Բողոքականները որդեգրեցին արակմամբ մկրտութիւնը: Անգլիկան եկեղեցին իրեն համար որոշ ձեւ մը չունի մկրտութեան, տղայոց մկրտութիւնը շնկղմամբ կը կատարէ, չափահատներուն համար շնկղմամբ, հեղիւամբ, կամ արակմամբ: Մկրտութեան ձեւը իւրաքանչիւրին կամքին կը թողու:

Ֆֆ. Քրիստոնէական ըմբռնումով Ակրտուրիւնը ոչ միայն յայտարար նշանն է Քրիստոնէական եկեղեցոյ անդամակցութեան, այլ և միեւնոյն ժամանակ անիկա է միջոցը սկզբնական մեղին Քրիստոնէական Եկեղեցին համար սկզբնական մեղի կը կոչուի արդեւնքը այն անհնաղանդութեան, զոր Աղամ ցոյց տուաւ Աստուծոյ հանդէպ, և որուն հետեւանքով Աղամ, Եւա, Երկիրն ու մարդկութիւնը անիծուեցան: Որչափ որ Մննդոց գրքին աւանդածին համեմատ, մահը Աղամին անհնաղանդութեան հետեւանքով մուտ գտաւ աշխարհ, որչափ որ ուրիշ հասուածի մը մէջ Աստուծ հայրերուն գործած յանցանքին համար ինքզինքը վրէժինդիր ցոյց կուտայ նոյն իսկ թուներուն հանդէպ. բայց տակաւին և ոչ մէկ տեղ՝ Հին Կտակարանին մէջ կը հանդիպինք հասուածի մը որուն մէջէն կարելի ըլլայ սկզբնական մեղքի վարդապետութիւն մը առաջ բերել: Ծնդհակառակի Հրէական վարդապետութիւնը թէ Հին Կտակարանի և թէ Թալմուտներու մէջ որոշ ցոյց կուտայ սա իրութիւնը թէ մանուկները զերծ են ամէն արատէ և զութիւնը թէ մանուկները զերծ են ամէն արատէ և անոնց հոգին մաքուր ու ամբիծ է բոլորովին: Բաց աստի

Հին Կտակարանը շատ որոշ հասուածներ ունի որուն մէջ ցոյց կը տրուի թէ Աստուած պատասխանատու պիտի նկատէ մարդը միմիայն իր անձնական յանցանքին կամ թերութեանը համար և թէ երբեք զաւակ մը չպիտի պատժէ իր հօր գործած մեղքին համար։ Ահա քանի մը հասուածներ այդ օրինակ վարդապետութիւններուն։ «Տղայոց յանցանքին համար հայրերը թող չմեռցուին, և հայրերուն յանցանքին համար տղաքը թող չմեռցուին. ամէն մարդ իր յանցանքին համար պիտի մեռցուի» (Յ. օրէնք ԻՂ. 16)։ Օրէնքին այս հասուածը այնքան լայն տեղ գրաւած էր Հրէական մաքերուն մէջ, որ իրենց պատժական օրինագրքին կանոններէն մին եղաւ։ Խորայէլի ժողովրդեան պատմութեան մէջ եղաւ ժամանակ մը երբ անձնական պատասխանատութեան սկըզբունքը կամաց կամաց եղծուեցաւ, և սկզբնական մեղքի տեսակ մը գաղափար ծնաւ։ Այդ նորածին գաղափարին դէմ սկսան բողոքել մարդարէները, անսնցմէ մանաւանդ եղեկիէլ և երեմիա՝ ուր որոշ կերպով սա տողերը կը կարդանք. «Այն օրերը անդամ մըն ալ պիտի չըսեն. հայրերը աղոփս կերան և որդիներուն ակռաները առին, այլ ամէն մարդ իր անօրէնութեան համար պիտի մեռնի, ամէն մարդ որ աղոփս կ'ուտէ անոր ակռաները միայն պիտի առնեն» (Երեմիա Լ. 29-30 բաղդատէ եղեկ. Ժ. 2-30 և լ. 20 ԿԸ.)։ Սկզբնական մեղքի վարդապետութեան որոշ հանգամանք և ընդլայնում առողջ եղաւ Պոլսս առաքեալ։

53. Քրիստոնէական մկրտութեան լուացման բնական ջուրը չէ որ կը մաքրէ երախային սկզբնական մեղքը, այլ այն Աստուածային խօսքը որ կայ մկրտութեան խորհուրդին մէջ (Եփես. Ե. 26) և այն հաւատաքը, զոր ցոյց պիտի տայ մկրտուող՝ որ իրեր մեղքերէն մեռած կը թաղուի աւազանին մէջ և նոր ու հոգեւոր

կեանքով յարութիւն կ'առնէ Քրիստոսի հետ. «Զէք գիտեր թէ մէնք որ Յիսուս Քրիստոսով մկրտուեցանք անոր մահուանը մկրտուեցանք, անոր հետ թաղուեցանք մկրտութիւնով մահուան համար և ինչպէս Քրիստոս Հօրը փառքովը յարութիւն առաւ մեռելներէն, այնպէս ալ մենք կեանքի նորոգութեան համար պարտինք. ինչու որ եթէ մենք անկալից եղանք անոր մահուանը նմանութիւնով, նաև անոր յարութեանը նմանութիւնով ալ կցորդ պիտի ըլլանք» (Հոռվմ: Զ. 3-5)։ Սրդէն ըսկնք թէ մկրտութեան փրկարար բանաձեւն է երրորդութեան դաւանութիւնը՝ զոր Յիսուս սորվեցաւ. հետեւաբար մկրտութիւնը երբ մէկ կողմէն իրբև խորհուրդ զմեզ կը սրբէ մեր սկզբնական մեղքերէն, միւս կողմէն իրբև արտաքին նշան, կամ իրբև արարողական ձեւ, անիկա գործնական դաւանութիւնը կ'ըլլայ երրորդութեան վարդապետութեան հաւատալու, Քրիստոսի աշաւ կերտելու և եկեղեցւոյ անդամակցելու, ասով միայն կարելի է որոշ կերպով հասկնալ Յիսուսի այն խօսքը կամ կնքանօր բերնով նախ հաւատք, յոյս և սէր և յետոյ մկրտութիւն կը ինդրէ։ Սրդէն առաքեալներու ժամանակին անգամ երբ ամբոխը առաքեալներուն քարոզութեամբ կը հաւատաբ Քրիստոսի, իրենց այդ հոգերով փոփոխութիւնը նուիրագործելու համար, երբ միւսոր փոփոխութիւնը առաքեալները, իրենց խօսքը այդ ջոցներ կը փնտահն, առաքեալները, իրենց խօսքը այդ ամրոխին ուղղելով կ'ըսեն. «Ապաշխարհեցէք և ձեզմէ ամէն մէկը թող մկրտուի Յիսուս Քրիստոսի անունով ամէն մէկը թող մկրտուի Յիսուս Քրիստոսի անունով մեղաց թողութեան համար և Հոգւոյն սրբոյ պարգեւը պիտի ընդունիք (Գործք. Գ. 38 իԲ. 16 ԿԸ.):

54. Համնք թէ մկրտութեան բնական ջուրը չէ որ

մարդու իր սկզբնական մեղքերէն կը մաքրէ, այլ Աստուածային խօսքը և մկրտուողին կողմէն ցոյց տրուելիք հաւատքը։ Այս սկզբունքին վրայ հիմնուելով Բողոքական եկեղեցիներէն ոմանք կ'ուղեն վաւերական չնկատել մանկամկրտութեան սովորութիւնը՝ զոր ընդունած են արեւելեան եկեղեցիները, առարկելով թէ քանի որ երախան անչափահաս է և չկրնար անձնական դաւանութեան հաւասարիքը տալ, մկրտութիւնը անանկներուն վրայ չկրնար իր փրկարար ազդեցութիւնը ի գործ դնել Պէտք է ըսել թէ մանկամկրտութեան սովորութիւնը շատ հին է իր ծագումով և անիկա ի գործ կը դրուէր նոյն իսկ առաքեալներուն ժամանակ, որովհետեւ Գործք Առաքելոցին մէջ կը կարդանք թէ Պօղոսի քարոզութեամբ լիւդիացի ծիրանավաճառ կինը իր տունով կը մկրտուի (Ժ. 15)։ Կը տեսնենք որ Թիվատիր քաղաքին բանատապետը բոլոր իրեներով կը մկրտուի (Ժ. 33), Կրիպոս ժողովրդապետը իր բոլոր տունովը կը հաւատայ ու կը մկրտուի (Ժ. 8) Կուրնելիոս իր տունովը կը մկրտուի ևալին։ Այս և նման պատմութիւններ կը ցուցնեն թէ առաքեալները անխափիր կը մկրտէին տունին մէջ դանուող բոլոր մարդերը, մանուկներն ալ միասին, անշուշտ ծնողքներուն հուսափը բաւական սեպելով նաև իրենց զաւակներուն համար։ Մեր եկեղեցին ի գործ կը դնէ և երախայի մկրտութեանը իրբեւ երաշխաւորութիւն ծնողքին Քրիստոնէութիւնը Ընդունելով հանդերձ, երախային կու տայ նաև կնքահայր մը՝ որ նութիւնը տալով միեւնոյն ժամանակ յանձն կ'առնու իր մկրտած երախան մուծցնել իր յայտարարած դաւանութեան և Քրիստոնէական ուղղութեան մէջ։ Մանկամկրտութիւնը իր այս ձեւին մէջ սա առաւելութիւնն ալ

ունի որ մանուկները նոյն իսկ իրենց անգիտակից կեանքի օրերէն սկսեալ եկեղեցւոյ անդամակցութեան մէջ առնուելով, անոնք կը մեծնան ու կը դաստիարակուին Քրիստոնէական ուղղից հաւատաքին մէջ, և իրենց չափահասութեան ատեն երբ կրօնքի գիտակից ընտրութեան կուգայ կարգը, այլ եւս դժուարութիւն չեն կրեր ընտրութեան այդ գործին մէջ, որովհետեւ ինչպէս արեւելեան հին եկեղեցիներու, ինչպէս նաև Յողոքական բարեկարգիչներու համար, եթէ մկրտութիւնը մէկ կողմէն չափահամաներու համար Քրիստոնէական հաւատքի խոստովանութիւն մըն է, միւս կողմէն մանուկներու համար ալ վկայութիւն մըն է թէ անոնք ի ծնէ և իրաւամբ կը պատկանին Քրիստոնէական եկեղեցին։

59. Մկրտութիւնը իրբեւ խորհուրդ երբեմն կը մատակարարուէր զրեթէ ամէն մարդու ձեռքով երբ պարագան ստիպողական ըլլար, այսու հանդերձ սաստոյդ է թէ մկրտութիւնը մատակարարով պաշտօնեան եկեղեցական եղած է միշտ, քահանայ, վարդապետ և եպիսկոպոս, և այդ սովորութիւնը պահպանուած է և պահպանուի մինչև վերջ։ Մկրտութիւնը մէկ անգամ միայն կը կատարուի մարդուս վրայ, այսպէս որ օրինակի համար երբ ի ծնէ Յողոքական կամ Կաթոլիկ Հայ մը կը վերադառնայ միր եկեղեցին, մենք Կաթոլիկ կամ Յողովրադասային կը կատարուի մինչև յունին, Միայն Յունական եկեղեցին է կանները դրոշմը չունին։ Միայն Յունական եկեղեցին է առանց յարգելու միւս Քրիստոնեայ եկեղեցիներու որ առանց յարգելու միւս Քրիստոնեայ եկեղեցիներու կողմէն մատակարարուած մկրտութիւնը նորէն կը մկրտէ Յունական դաւանութիւնը Ընդունողները, մոռնալով թէ մկրտութիւնը ուր որ ալ մատակարարուած ըլլայ, Երրորդ մկրտութիւնը ուր որ ալ մատակարարուած դաւանութեան անունով միայն կատարուած է, հետեւաբար դութեան անունով միայն կատարուած է, հետեւաբար կարելի չէ ուրանաւ անոր արժէքն ու նշանակութիւնը ։

Դ Ր Ա Յ Մ

ՅՈ. Դրոշմը թէպէտ իրըև երկրորդ խորհուրդ նկատուած է եկեղեցւոյ կողմէն, բայց աւելի ճիշդ շառունակութիւնն է մկրտութեան և անոր կատարումը այսինքն կատարելութեան կնիքը: Դրոշմ կը նշանակէ կիսի կամ նշան, հետեւաբար անոնք որոնք մկրտութեամբ կը մտնեն եկեղեցւոյ ծոցը իրենց ընդունած դրոշմով կը գանազանուին այլ եւս աշխարհի միւս մարդերէն, և կը մտնեն բուն իսկ Սատուծոյ ծառայութեան մէջ: Դրոշմ՝ որ օծումով տեղի կ'ունենայ հաստատուած է Եկեղեցւոյ մէջ՝ հոգեւոր ըմբռնումով մը՝ Քրիստոնեայ ըլլալու կոչուած մարդուն տալու համար Ս. Հոգին, որովհետեւ Հոգւոյն մարդուն մէջ ծնցուցած զօրութեան և հոգեկան ուժին շնորհիւն է որ Քրիստոնեան պիտի կրնայ յաղթել մեղքերուն, և մաքառիլ բոլոր այն դժուարութիւններուն դէմ, որոնք պիտի պատահին իրեն իր կեանքի ճամբռւն մէջ: Անոր համար է որ երբ Յովհաննէս առաքեալ իր առաջին թուղթով կը խօսի այն ժամանակին վրայ, ուր նեռը մարդկային կործանման որոմը պիտի սփուէ, Քրիստոնեայ ժողովուրդին կը գրէ, և զի՞ւ և զորդորէ յարատեւելու Քրիստոնէական կեանքի և ճամբառութիւններուն մէջ: «Այս բաները ձեզի գրեցի, կ'ըսէ, ձեզ մոլորեցնողներու համար: Եւ այն օծուրիւնը զոր դուք իրմէն ընդունեցիք, ձեր մէջ մնայ և պէտք չէ որ ուրիշ մէկը ձեզի սորվեցնէ, այլ ինչպէս որ նոյն օծուրիւնը ձեզի սորվեցուց, անոր մէջը կեցէք որ երբ անիկա յայտնուի, մենք համարձակութիւն ունենանք և անկէ շամչնանք իր եկած ատենը:» (Ա. Յովհ. Բ. 26-

28) Այլ եւս դրոշմով կատարուած օծումը և Ս. Հոգիի տուչութիւնը և կամ ընդունելութիւնը Քրիստոնէական եկեղեցւոյ մէջ այնքան նոյնացած են իրարու հետ, որ ինչպէս Յովհաննէս առաքեալի կտորէն տեսանք վերը, Հոգւոյն Սրբոյ տուչութիւնը պարզապէս օծուրիւն կոչուած է. և արդէն այդ երկու բառերուն նոյնիմաստութիւնը ընդունած է նաև Պողոս առաքեալ, քանի որ սապէս կը գրէ. «Բայց ան որ մեզ ձեզի հետ մէկաեղ Քրիստոսով հաստատեց և մեզ օծեց, Աստուած է» (Բ. Կորնթ. Ա. 21-22): Առաքեալը այդ համարներուն մէջ ուրիշ բառ մըն ալ կը գործածէ օծել նշանակութեամբ որ է Կնքելի և այս պատճառաւ է որ մեր ժողովուրդը նոր մկրտուած երախաներու համար փոխանակ ըսելու «մկրտուած» կ'ըսէ «կնքուած», կենունի եղած, և այս բացարութիւնը ինքնին կը ցուցնէ թէ շատ հին ատենաներէ ի վեր դրոշմը մկրտութեան կնիքը և անոր լրումը եղած է:

ԸԼ. Առաքեալներու ատեն Հոգւոյն Սրբոյ տուչութիւնը ձեռնադրութեամբ տեղի կ'ունենար, այնպէս չութիւնը ձեռնադրութեամբ տեղի կ'ունենար, այնոր երբ նորադարձ Քրիստոնէաները կը մկրտուէին անմիջապէս առաքեալները անոնց վրայ ձեռք կը դնէին և Հոգին Սուրբ կը արուէր անոնց: Պողոս առաքեալ Եփեսոսի մէջ Յովհաննէս Մկրտիչի աշակերտները Յիսուսի անունով նորէն կը մկրտէ, և անմիջապէս անոնց վրայ ձեռք դնելով «Ս. Հոգին անոնց վրայ եկաւ» (Գործք Առաք. ՃԹ. 2-66): Եփեայեցւոց թուղթէն (Զ. 2) այնպէս կը տեսնուի թէ մկրտութիւնը և ձեռնադրութիւնը պիշտ միասին կատարուած են: Բաց աստի կը տեսնուի թէ մկրտութենէն անմիջապէս ետք կատարուած այդ ձեռնադրութիւնը միայն առաքեալները իրաւունք ու նէին կատարել հին ատեն, որովհետեւ երբ երուսաղէմի մէջ գտնուող առաքեալները կ'իմանան թէ Սամարացի-

ներէն ոմանք Քրիստոսի անունով մկրտուած են, Պետրոս և Յովհաննէս առաքեալները դրկեցին, երթալ անոնց համար աղօթք ընելու, որպէս զի Ս. Հոգին ընդունին, և առաքեալները երբոր անոնց վրայ ձեռք դրին այդ մկրտուող Սամարացիները Հոգին ընդունեցան (Գործք Առաք. Է. 14-17), որովհետեւ առաքեալները Հոգւոյն Սրբոյ տուչութիւնը ԶԵՌՆԱՌ.Դ.ՐՈՒԹԵՍՄԻ կը կատարէին: Այդ սովորութիւնը մինչև այսօր գոյութիւն ունի նաև մեր եկեղեցւոյ մէջ, այնպէս որ երբ քահանան տղու մը մկրտութիւնը կը կատարէ, իր ձեռքը երախային գլխուն վրայ դրած կը կարդայ մկրտութեան ինչ ինչ աղօթք ները: Գոնէ այդպէս ցոյց կու տան հին Մալթոցները:

Յ.2. Դրոշմի խորհուրդը կը կատարուի մասնաւոր անուշանոտ իւղով՝ զոր ՄԵԼԻՌՈՆ կը կոչենք, հետեւաբար ՄԵԼԻՌՈՆԸ դրոշմին նիւթն է, և անոր բանաձեւը՝ Ա.Ղ.ՕԹ.Բ.Բ.: Յոյն եկեղեցին և ուրիշներ դրոշմի խորհուրդը կատարած ատեննին, կ'օծեն միայն երախային սիրաը, ականջները, աչքերը, բերանը, ստքերը և ձեռքերուն վրայ, իսկ մեր եկեղեցին այս զգայարանքներուն վրայ կ'աւելցնէ նաև հոտոտելիքը և քամակը, բոլոր անդամներուն օծումը խաչանշանով աեղի կ'ունենայ, և իւրաքանչիւր անդամի համար մասնաւոր աղօթքի բանաձեւներ կան: Առաջին անգամ ճակատը կ'օծէ ըսելով սոյն աղօթքը. «Յանուն Յիսուսի Քրիստոսի, քու վրադ թափուած այս անուշ իւղը թող ըլլայ երկնաւոր անապաշկարգեւներու կնիքը»: Յետոյ աչքերը. «Յանուն Յիսուսի Քրիստոսի արուած այս կնիքը թող քու աչքերդ լուսաւորէ, որպէս զի երբեք մահուան քունը չքնանաս»: Յետոյ ականջները. «Այս սրբութեան օծումը կուտանք քեզի, ո՞չպէս զի Աստուածային պատուէրները լսես»: Յետոյ հոտոտելիքը. «Յանուն Յիսուսի Քրիստոսի, քեզի արուած այս կնիքը, քեզի համար կեանքէ

կեանք անուշահոտութիւն թող ըլլայ»: Յետոյ քերանք. «Յանուն Յիսուսի Քրիստոսի արուած այս կնիքը քու բերնիդ պահպանութիւն, և քու շրթներուդ ամուր դուռն ըլլայ»: Յետոյ ձեռքերը. «Յանուն Յիսուսի Քրիստոսի, այս կնիքը թող քեզի համար բարեգործութեան և առաքեալնի գործքերու ու վարքի պատճառ ըլլայ»: Յետոյ սիրաը «թող այս աստուածային կնիքը քու մէջդ մաքուր սիրո հաստատէ, և քու կուրծքիդ տակ ուղիղ հոգի նորոգէ», Յետոյ քամակը «Յանուն Յիսուսի Քրիստոսի այս կնիքը թող քեզի համար ամուր վահան մը ըլլայ, որպէսզի անով կարող ըլլաս չարին արձակած նետերը թօթափել»: Յետոյ սոտքերը «Այս տաստուածային կնիքը թող քու գնացքդ ուղիէ դէպի յաւիտենական կեանք, որպէսզի չսասանիս»: Եւ երբ քահանան դրոշմի խորհուրդը կ'աւարտէ ու կ'ամբողջացնէ, այն ատեն մկրտող քահանան իր խօսքը նորակնունք երախային ուղղելով կ'ըսէ. «Խաղաղութիւնը թող քեզի հետ ըլլայ, ով Աստուծոյ վրկածը խաղաղութիւնը թող քեզի հետ ըլլայ, ով Աստուծոյ Օծեալը»:

Յ.Յ.3. Ինչպէս զերը աեսանք առաքեալները Մկրտութիւնը և Հոգւոյն տուչութեան ձեռնադրութիւնը միասին կը կատարէին թէ չափահամներու և թէ երախաներու վրայ: Այդ սովորութեան հետեւանքով Քրիստոնէական բոլոր եկեղեցիները անխափի երախայից մկրտութիւնը և դրոշմը միեւնոյն ժամանակ կը կատարէին: Կաթոլիկ եկեղեցին մինչև ժ. դար տեւող քրիստոնէական այս ընդհանուր սովորութեան մէջ քամահաճ փոփոխութիւն մը մտցուց, և մկրտութեանէն բաժնեց դրոշմը, և զանիկա վերապահեց արգունքի համող աղաքներուն, և դրոշմը կատարելու իրաւունքը տուալ միայն եպիսկոպոսին: Բայց որչափ որ դրոշմը մկրտութեանէն բաժնած և անոր տուչութիւնը միայն եպիսկո-

պոսին վերապահած է, այսուհանդերձ լատին եկեղեցին մկրտութեան կից կատարել կուտայ՝ քահանային ձեռքով՝ արարողութիւն մը, Օծումն անունով, որ յարեւնման է դրոշմին և որուն սակայն դրոշմ անունը տալ չուզեր: Ինչ որ ալ ըլլայ, սակայն, իրենց օծումին և իրենց դրոշմին հանգամանքը, սա ստոյգ է թէ քահանային տուած օծումին վերջ լատին եպիսկոպոսներու ձեռքով կատարուած դրոշմի խորհուրդը շատ աւելորդ բան մըն է, և թէ կարելի չէ դրոշմը մկրտութիւնէն դատել, քանի որ այդ է առաքելական հնագոյն սովորութիւնը:

Անկիքան եկեղեցին դրոշմի մէջէն խափանած է Օծումը և այդ խորհուրդը կը կատարէ միայն ձեռնադրութիւն ընելով: Բաց աստի ինքն ալ կը հետեւի հոռով մէական եկեղեցւոյ վերջամուտ սովորութիւններուն և ոչ միայն դրոշմը կամ դրոշմի ձեռնադրութիւնը բաժնած է մկրտութիւնն, այլ և եպիսկոպոսին միայն վերապահած է դրոշմի խորհուրդին մատակարարութիւնը:

Բողոքականները բնաւ դրոշմի խորհուրդ չունին:

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ

64. Ապաշխարութիւնը մարդկային զգացումի տեսակէտով շատ կանուխ ժամանակներէ սկսեալ անհրաժեշտ պէտք մը նկատուած է, և կրօնքն անկախորէն ալ անիկա գրեթէ պարտաւորիչ հանգամանք մը ստացած է, իբրև կամաւոր և մերթ հարկադրուած պատիք կամ հատուցում, գործուած յանցանքի մը կամ վաւերացուած անիկա գաղափարութիւնը:

և նուիրագործած է մարդկային ընկերութեան այդ բարոյական պէտքը, այնպէս որ ապաշխարութիւնը կրօնական կալուածին մէջ անդամ այլեւ շատ կանուխէն նշանակեց իրական զգջումով դարձ մը դէպի այն կեանքը՝ զոր ունէր յանցանքը կամ անիրաւութիւնը գործելէն առաջ: Այս իմաստով է որ Աստուծմէն հեռացող և ատով իսկ Աստուծոյ դէմ յանցանք գործող իսրայէլի ժողովուրդին կ'ազդարուուի. «Ինձի դարձէք Ձեր բոլոր սըրտով ծոմապահութեամբ, լալով և սգալով, և ձեր սիրտերը պատուեցէք ոչ թէ ձեր հանդերձները, և ձեր տէր Աստուծոյն դարձէք, որովհետեւ անիկա ողորմած, գըթած, երկայնամիտ, բազումողորմ է. (Յովել Բ. 12-13)

Հին կտակարանի մարգարէններէն վերջ, ապաշխարութեան կենդանի քարոզը եղաւ Յովհաննէս Մկրտիչ որ իր ձայնը լսեցուց Յորդանանու եղերքը, մեղքերու մէջ թաթխուած ժողովուրդը Աստուծոյ արքայութեան հրաւերին պատրաստելու համար:

65. Քրիստոնէութեան հիմնադիրը Յիսուս Քրիստոս աւելի մեծ նշանակութիւն մը տուաւ ապաշխարութեան անոր պէտքին և անոր նշանակութեանը և զանիկա պարտաւորիչ ըրաւ գիտակցաբար ու կամաւ կատարուած մեղքերու, յանցանքներու և թերութիւններու անհրաժեշտ դարմանումին, և մեր մէջ հոգեւոր կեանքը աւելի ևս շեշտելու և զօրացնելու համար. «Ապաշխարեցէք, որովհետեւ Աստուծոյ արքայութիւնը մօտեցած է» և «Եթէ չապաշխարէք ամէնքնիդ ալ պիտի կորսուիք» (Մատթ. Դ. 17, Մարկ. Ա. 15, Ղուկ. ԺԳ. 3-5): Անա ասոնք են ապաշխարութեան մասին Յիսուսի բացորոշ և յայտնի պատուէրները քրիստոնէից ուղղուած: Ասորոշ և յայտնի պատուէրները կարեւորութիւնը պահպահեալները ապաշխարութեան կարեւորութիւնը պահպահուցին մինչեւ վերջ և զայն ժողովուրդին պարտադրեցին, զանի մաքուր կեանքի մը առաջնորդելու համար:

Պետրոս առաքեալ տաճարի գրան տուշե հաւաքուած իսրայէլի ժողովութիւն խօսած յորդորին մէջ կ'ըսէ. «Ապաշխարեցէք և դարձի եկէք, որ մեղքերնիդ ջնջուի և որպէսդի սփոփանքի ժամանակները գան Տիրոջը երեսէն. (Գործ. Դ. 19-20): Ուրիշ տեղ կը յիշուի թէ Աստուած հեթանոսներուն կեանք պարզեւելու համար ապաշխարութիւն տուած է, և թէ Անիկա մոռնալով մեր տգիտութեան ժամանակի պարագաները կը փափաքի որ ամէն մարդ ապաշխարէ մաքուր կեանքի մը տէրը դառնալու համար (Գործ. Ժ. 18, Ժ. 30):

Եւ որովհետեւ ապաշխարութիւն, ապաշխարել կը նշանակեն, արտմիլ, ողբալ, ցաւիլ և զգածուիլ, և ասոնց ամէնքը իբրև ապաշխարութեան պտուղ տրտմութիւն կը բերեն իրենց հետ, Պօղոս առաքեալ աշխարհիկ արտմութեան և ապաշխարութեան արտադրած տրտմութեան միջև բաղդատութիւն մը դնելով կը գրէ. «Աստուծոյ ուզածին պէս եղած տրտմութիւնը փրկութեան համար ապաշխարութիւն կը գործէ, որուն համար մարդ չի զղար, մինչ աշխարհի արտմութիւնը մահ կը գործէ» (Բ. Կորնթ. Է. 10): Ապաշխարութեան ընծայուած կարեւորութիւնը նկատողութեան առնելով Եկեղեցւոյ հայրերը մկրտութենէն և դրոշմէն վերջն ալ ապաշխարութիւնը խորհուրդի կարգը անցուցին:

ԵՅ. Ապաշխարութիւնը իբրև խորհուրդ նկատուած ատեն կը տեսնենք թէ իբր նիւթ անիկա երեք մասեր ունի. Ա. ԶՂԶՈՒՄ, Բ. ԽՈՍԽՎԱՆՈՒԹԻՒՆ, Գ. ԱՊՇԵԽԱՐԱՆՔ, որուն կրնանք հատուցում կամ դարձնելու անուններն ալ տալ: Զղջում կը նշանակէ իր գործած մեղքին անիրաւութեան և կամ թերութեան վրայ զղուանքով նայիլ, և զգալ թէ ինք իր մարդկայն կրօնական և բարոյական պարագաները իր ամուսնութիւնուն մէմ գործած է: Որպէս զի մարդ կարող ըլլայ ճշմարիտ

ապաշխարով մ'ըլլալ, պէտք է նախ և առաջ իրական զղջումի զգացումը ունենայ, որովհետեւ առանց իրական զղջումի ապաշխարութիւնը կեղծիք մըն է միայն, և չի կրնար երբէք վրկարար ըլլալ մարդուն համար: Իրական և ներքին ինքնարեր զղջումով է որ մէկը իրմէն կը մերկանայ հին մարդը, «Արդարութիւնով և ճշմարիտ որբութիւնով Աստուծոյ պատկերին պէս ստեղծուած նոր մարդը» հագնելու համար (Եփես. Դ. 22-24): Բաց ասաի մարդ անուանարկութեան և այլ երկիւղով չէ որ պէտք է զղջայ իր գործած թերութեանը վրայ, այլ պարզապէս հաւատքէ գրուած, որովհետեւ միայն հաւատքէն ներչնչուած զղջումն է, որ փրկարար կրնայ ըլլալ մարդուս և այն է միայն կրօնական քրիստոնէական զղջումը: Այդ զղջումն հետեւանքով է որ զղջումի եկող յանցաւորը կ'ամնայ իր մեղապարտ վիճակէն և կը մտադրէ այդօրինակ ընթացքի մը մէջ նորէն չգըսմուուիլ, և Աստուծոյ արդարութիւնը և անոր ըրած երախտիքը աչքի առջև բերելով կը մտադրէ աւելի անոր մօտենալ բարի գործքերով արժանանալու համար անոր ձրի չնորհքին:

ԵՅ. Ապաշխարանքը զղջումին կը յաջորդէ իբրև անոր գործնական ապացոյցը կամ բնական հետեւանքը: Ապաշխարանքով յանցաւորը կը ջանայ գոհացնել իր գէմ գատախաղ եղող խիղճը և ինքնակամ, առանց ուրիշէ մը հարկադրուած ըլլալու, ինքինքը կերպով մը կը պատճէ մինչեւ որ ներքին համոզում մը կամ կեանքի պատախաղ եղող խիղճը և ինքնակամ, առանց բարուգ փոփօխութիւն մը իրեն համոզում կազմել տան, թէ ըստ բաւականին հատուցուած է իր անիրաւութիւնը: Եթէ իր գործած անիրաւութիւնը իր նմաններուն հանելով անիրաւութիւնը իր ամուսնութիւնը մէմ գէպ է, պէտք է դարմանել զայն փոխարինութեամբ մը գէպ է: Ապաշխարանքը մէջ ապաշխարանքը իր հետ կը բերէ և այս պարագային մէջ ապաշխարանքը իր հետ կը բերէ ոչ միայն գործուած նիւթական անիրաւութեան մը նիւթական հատուցումը, այլ և բարոյական սէրի ջանք մը,

որուն արդիւնքը ըլլայ բարոյական կեանքի վերանորութեան հաստատ մտադրութիւնը : Բայց երբ յանցանքը կամ մեղքը Աստուծոյ դէմ գործուած է , այդ անիրաւութիւնը կամ մեղքը նիւթական հասուցումով կարելի չէ դարձանել : Այս պարագային միայն Աստուծոյ ձրի շնորհքն է որ զմեղ կրնայ փրկել կամ պարտազերծել և այդ շնորհքին արժանանալու միակ միջոցն է ճանչնալ իր յանցանքը , զղալ սրտով , ներողութիւն խնդրել անկեղծութեամբ , և ջանալ մեղքերով մեր վատնած ժամանակին փոխարէն մեր կեանքի մնացեալ օրերուն մէջ աւելի փութով աւելի ջերմեռանդութեամբ և աւելի քրիստոնէաբար կատարել իր հոգեւոր պարտականութիւնները , և եթէ կարելի է՝ ժամանակը ծախու առնել , աւելի բարեգործութիւններ և աստուածահաճոյ գործեր կարենալ կատարելու համար :

68. Զղումի և ապաշխարանքի պարտականութիւններուն զոյտ կընթանայ նաև խոստովանութիւնը , որ ապաշխարութեան խորհուրդը կ'ամբողջացնէ , որովհետեւ թողութիւն կարենալ գտնելու համար պէտք է նախ համարը տալ մեղքերուն . «նախ քու անօրէնութիւններուդ հաշիւը տուր , որպէս զի արդարանաս .» Մովսիսական օրէնքին մէջ խոստովանութիւնը հրապարակային և առանձնական ծեւերուն մէջ գոյութիւն ունէր (Թիւք . Ե . 67 Դեւտ . Ե . 4-10 . Իբ . 18-21 Յովլ Ա . 33-34 Աւայլն) : Մովսիսական օրէնքին մէջ , գոյութիւն ունեցող այս խոստովանութիւնը Քրիստոս բարեփոխեց բոլորովին և աւելի հոգեկանացուց . բաց ասաի որովհետեւ ինք իբրև աստուածային էակ իրաւունք ունէր ներելու մեղքերը , իր այդ իշխանութիւնը փոխանցեց առաքեալներուն և անոնց յաջորդներուն ըսկով . «Որոնց որ մեղքերը թողուք , թողուած ըլլայ աննաց , և որոնց որ մեղքերը կապէք , կապուած ըլլայ երկրի , ինչպէս երկնքի

մէջ :» (Մատթ . ԺՂ . 18 Յովլ . Ի . 22-23) : Առաքելական և քահանայական այս իրաւունքը ի գործ կարենալ դնելու համար խոստովանութիւնը անհրաժեշտ էր , և եկեղեցին ապաշխարութեան էական մասերէն մէկը նկատեց զանի առանց մեծ կարեւորութիւն ընծայելու անոր արտաքին ձեւերուն : Էականը այս էր որ պէտք էր խոստովանէին և այդ խոստովանութիւնը և անոր արդիւնքը եղող ներումը հաշուրիւն կը կոչէ առաքեալը և հաւատութիւն քրիստոնէական կեանքին մէջ (Ա . Տիմ . 14 . Բ . Կորնթ . Ե . 18-20 . Գալ . Զ . 1) : Իսկ Յակոբոս առաքեալ յայտնապէս կը յորդորէ «Մեղքերը մէկ մէկու խոստովանիլ » (Ե . Կորնթ . Ե . 15-16) և իրօք առաքեալներու ժամանակ «հաւատաց» եալներէն շատեր կուգային և կը խոստովանուէին և իրենց գործերը կը պատմէին (Գործք ԺԹ . 18) :

69. Քրիստոնէական եկեղեցւոյ առաջին երեք դարերուն մէջ խոստովանութիւնը հրապարակային էր , և եպիսկոպոսները կամ քահանաները հրապարակաւ կը անօրինէին իրենց գըրած ապաշխարանքները իւրաքանչիւրին անցուցած գայթակղական կեանքին համաձայն , չամէն անոնք , անոնք իրենց կանոնական ապաշխառութիւնը տակաւին չէին աւարտած , և կը գտնուէին իրենց ապաշխարանքի օրերուն մէջ , կը զրկուէին ոչ իրենց հաղորդութենէն այլ և հաղորդութեան խորհուրդին համար կատարուած արարողութենէն , ինչպէս ցարդ կը տեսնուի մեր պատարագի խորհուրդի սա՛ երգեցողութենէն . «Մի՛ ոք յերախայից խորհուրդի սա՛ երգեցողութենէն . մի՛ ոք յապաշխարողաց և յանմաքրից մերձեսցին և յաստուածային խորհուրդն» . և «առ դրունս ելէք և յաստուածային իւրաքանչիւրուն ազդարարութիւն մըն ազօթեցէք» երգը այնպիսիներուն իր հետ կը բերէ կարգ պարակային խոստովանութիւնը իր հետ կը պարէ կարգ մը պարագաներ , որոնք ոչ միայն հոգեւոր շինութեան

պատճառ չէին կրնար ըլլալ, այլ ընդհակառակը բարքերու ապականութեան և վրէժինզրութեան առիթ կուտային։ Անոր համար եկեղեցին չափաւորեց հրապարակային խոստովանութիւններու մասին իր սովորութիւնները և նախընտրեց առանձնական խոստովանութիւնը, որ մինչև այսօր գոյութիւն ունի բոլոր հին եկեղեցիններու մէջ։ Խոստովանութեան պաշտօնեան է եպիսկոպոսը և բոլոր ամբասիր և առաքինի եկեղեցականները։ Մեր եկեղեցւոյ վարդապետներէն մին Բարոնեղ ձօն կը պահանջէ որ շատ առաջինի անձնաւորութիւն մ'ըլլայ խոստովանութիւնը կատարողը. «Որովհետեւ, կ'ըսէ, պէտք չէ ամէն քահանայի խոստովանիլ»։

ՅՊ. Ապաշխարութեան մաս կազմող զզջումի, ապաշխարանքի, խոստովանութեան և Ս. Հոգւոյն ձրի չնորհքը եղող ներումի մասին կարգ մը տարբերութիւններ կամ արեւելեան և կաթոլիկ հին եկեղեցիններու միջև։ Բողոքականները զզջումի մէջէն վերցուցած են գրեթէ արտաքին մասերը, որոնք ապաշխարանքի կը վերաբերին, և բաւական կը համարեն միայն ներքին զզջումը։ Քահանային եղած խոստովանութիւնը չ'ընդուն գրեջերս բողոքականներէն ոմանք առանձնական խոստովանութեան տեղ ընդունեցին հրապարակային խոստովանութիւնը, բայց այս սովորութիւնը ընդհանուրացած չէ իրենց մէջ։ Անկլիքան եկեղեցին գաղտնի խոստովանութիւնը և անոր մաս կազմող քահանայական արձակումը կ'ընդունի սկզբունքով առանց որդեգրելու ձեւը, և որովհետեւ Անկլիքան եկեղեցին ապաշխարութիւնը իրեւ եկեղեցւոյ խորհուրդներէն մէկը չընդունիր, հետեւաբար ապաշխարութիւնը և խոստովանութիւնը կանոնապէս պարտաւորիչ չէ ըրած իր անդամներուն, իսկ ապաշխարութիւնը կը կատարէ մասնաւոր օրերու մէջ։ Քալով կաթոլիկ եկեղեցւոյ, այս վերջինը զզջումին

կը բայցնէ խոստովանութիւնը, և այս վերջինն ալ երկու մասի բաժնելով, առաջընը կ'անուանէ սորջանի (contrition) և միւսը՝ հասուցմանք (satisfaction)։

ՑԱ. Ապաշխարութեան խորհուրդին մէջ կաթոլիկ եկեղեցւոյ կողմէն մտցուած մեծապոյն և անօրինակ մոլորութիւնը ներողութեանց (indulgenec) մասին նորամուտ վարդապետութիւնն է։ Հին եկեղեցին մէջ երբ մէկուն վրայ հրապարակային ապաշխարութիւն մը դըրուած ըլլար, և այդ ապաշխարողը մարտիրոսութեան դիմողի և կամ նահատակութեան պատրաստուղի մը կողմէն իրեն ապաշխարութիւնը թեթեւցնելու համար յանձնարագիր մը բերէր եկեղեցական իշխանութեան, այս վերջինը մարտիրոսին կողմէն եղած միջնորդութեան սիրոյն ապաշխարողին վրայ դրուած պատիմը կը թեթեւցնէր և կամ զինքը ուղղակի հաղորդութեան կ'ընդունէր։

Առաջին գարերու եկեղեցին մէջ գոյութիւն ունեցող սոյն անմեղ սովորութիւնը բացարձակ գեղծումի մը փոխեց կաթոլիկ եկեղեցին, երբ Պապը ելաւ յայտարարելու թէ ինք ատէրն է Քրիստոսի և Աստուածածինի առատացած արժանիքներուն, որոնք գանձ մըն են իր ձեռքը, և թէ ինքը իշխանութիւն ունի այդ արժանիքին չնորհիւ ներողութիւն տալու ոչ միայն երկրի վրայ ապրողներուն, այլև քաւարանի մէջ գտնուող հոգիներու մեղքերուն, և կամ պակսեցնելու անոնց տանջանքներու չափն ու աստիճանը։ Հռովմայ Պապերը առաջին անգամ ներուաստիճանը։ Հռովմայ Պապերը առաջին անգամ ներուաստիճանը հրատարակեցին բոլոր անոնց համար, որոնք զութիւն հրատարակեցին բոլոր անոնց համար, որոնք կաչակրութեան մէջ մասն։ Զեղծումը ատոր մէջ չսահմանափակուեցաւ միայն, դրամի անյագ տենչը զօրաւոր պատճառ մը եղաւ որ Պապական Աթոռը շահագործէ միամիտ ժողովրդեան խիզն ու հաւատքը, և այդ չարաշահութեան հետեւանքով դրամով ներողութիւն վարաշահութեան հետեւանքով դրամով ներողութիւն վա-

Ճառելու սկզբունքը շարունակ ի գործ դրսւեցաւ, և Սիմօնականութեան այդ դրութիւնը դրեթէ գլխաւոր պատճառներէն մէկը եղաւ Բողոքականութեան ծագումին: Կաթոլիկ եկեղեցւոյ այս ստորին չարաշահութիւնը և անոր արդիւնք եղող կրօնական ստորնացումը չեն կրնար ուրանալ նոյնիսկ Կաթոլիկ պատմիչները, և եթէ երբէք Բողոքականութեան ծագման պատմութիւնը աչքէ անցունենք, պիտի տեսնենք թէ դրամով ներողութիւն վաճառելու աղտոտ սկզբունքը ինչ ասաֆիձան յառաջ տարուած էր Կաթոլիկ կղերին կողմէն, որ ժողովրդեան դրամը շորթելու համար ներողութեան թուղթերու անագին վաճառք մը հանած էր մէջտեղ, և այդ ներողութեան թուղթերը, որոնք ժողովրդեան հոգիին մէջ սպաննեցին տւետարանի առողջ սկզբունքները, յաւիտենական նախատինքը պիտի մնան Քրիստոնէութեան:

Յօ. Իբրև տեղեկութիւն ըսենք թէ Կաթոլիկ եկեղեցին ունի իր մասնաւոր խոստովանարանները, որոնց մէջ մանողը յաճախ տեղի ապականուած դուրս կուգայ քան հոգեւորապէս շնուած, որովհետեւ Կաթոլիկ խոստովանութիւնը փոխանակ ապաշխարութեան փրկարար խորհուրդին մէկ մասը կազմելու, տեսակ մը հակաբարյական արուեստ եղած է, քանի որ միայն մահացու մեղքերը խոստովանելու անհրաժեշտութեան պատրուակին տակ, մահացու մեղքերու այն տեսակ սղագրութիւններ ունին, որոնց պատմուածքն անգամ անվայել պիտի ըլլար ամենէն յետին Քրիստոնէին համար: Մեր եկեղեցին ոչ խոստովանարան ունի և ոչ մահացու մեղքերու ցուցակ, ընդհակառակը մեր մէջ խոստովանութիւնը կը կատարուի եկեղեցւոյ մէջ կամ բացառաբար տունը և խոստովանողը պարտաւոր է իր կեանքին բոլոր դիպուածները կամ իր խիզճը խորվող պարա-

գաները պատմել Քրիստոնէավայել լեզուով մը, ուրիէ վերջ եկեղեցւոյ կողմէն պաշտօնապէս ընդունուած արծակման աղօթքը կը կարդայ քահանան իր ձեռքը խոստովանողին գլխուն վրայ դնելով:

ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

ՅՅ. Հաղորդութեան խորհուրդը, որ ամենէինն է խորհուրդներուն, հաստատուած է Յիսուսի կողմէն: Յիսուս հրէական սովորութեան համեմատ Զատկի նախընթաց գիշերը իր աշակերտներուն հետ Զատկական ընթարքը ընելէն վերջ, իր մօտալուած մահուան յիշատակին՝ մասնաւոր նշանակութիւն մը տալ ուղեց ընթրիքէն վերջ իր աշակերտներուն հրամցուցած հացին և գինին, զոր, իբր իր մարմինը և իր արիւնը տուաւ անոնց: Քրիստոս իբր իր մարմինը և արիւնը տուաւ անոնց: Քրիստոս իր ցին և գինին արարողութիւնը, իբրև յիշատակը իր մահուան, տեղի սերս և տեղի հոգեկան կապերով իրեն մահուան, տեղի սերս և տեղի հոգեկան կապերով իրեն մահուան միանալու համար: Թէպէտ Ղուկաս (Ի. հ. հետ կարենալ միանալու համար: Մահարութիւնը կը պատմնամարդուած այդ արարողութիւնը կը պատմնամարդուած այդին պատմուած այդի բայց ամենէն տեղի կարծես Պօղոս առաքեալ է մեզի, բայց ամենէն տեղի կարծես Պօղոս առաքեալ է որ այդ յուշարձանական յանձնարարութեան նշանակուու այդ յուշարձանական յանձնարարութեան նշանակուու այն, զոր ձեզ ալ աւանդեցի, թէ Տիրոջմէն ընդունեցի այն, զոր ձեզ ալ աւանդեցի, թէ Տէր Յիսուս իր մահուած գիշերը հաց առաւ, և գուշին կարեց և ըստաւ, առէք և կերէք, այս է իմ հանալով կարեց և ըստաւ.

մարմինս որ ձեզի համար կը կարուի . ասիկա ըրէք վիտ յիշելու համար : Նոյնպէս ընթրիքէն վերջ գաւաթը առաւ և ըստ, այս գաւաթը նոր ուլստէ է իմ արիւնովս . ասիկա ըրէք քանի անգամ որ խմէք՝ դիս յիշելու համար, վասնղի քանի անգամ որ այս հացը ուտէք և այս գաւաթը խմէք, Տիրոջ մահը կը պատմէք, մինչև որ ինքը գայ » (Ա. Կորնթ. ԺԱ. 23-26) : Տակաւին մանրամասնութեանց չմտած հոս ըսենք թէ Քրիստոս իր այս յանձնարարութեան մէջ կը խտացնէ այն բոլոր վարդապետութիւնները և գաղափարները, զոր ինք քարոզչական կեանքին մէջ հաղորդեց զինքը ունկնդրող ժողովուրդին : Քրիստոսի քարոզած կեանքը և անոր յարատեւութիւնն ու փրկութիւնը կախումն ունէր, Յիսուսի այսինքն իր անձին հետ հաւատացեալին ունենալիք հոգեւոր հանգիտութիւնէն կամ միութենէն, քանի որ Յիսուսինքին իրեւ յաւիտենական կեանքի մնունդը և հացը կը ներկայացնէր, և յայտնապէս կ'ըսէր «թէ որ մարդուն որդիին մարմինը չուտէք, և արիւնը չխմէք, ձեր անձերուն մէջ կեանք չէք ունենար : Ով որ իմ մարմինս ուտէ և արիւնս խմէ, յաւիտենական կեանք կ'ունենայ, և ես անոր յարութիւն առնել պիտի տամ վերջին օրը : Ինչու որ իմ մարմինս ձմարիտ կերակուրէ է, և իմ արիւնը ձմարիտ ըմպելիք է : Այս որ իմ մարմինս կուտէ և իմ արիւնս կը խմէ, անիկա իմ ներսիդիս կը բնակի, և ես անոր ներսիդինս» : (Յովհ. է. 25-26) : Քրիստոսով և անոր հոգիով մնանելու, անհրաժեշտութիւնը ցուցնելու համար, ո՞չ աւետարանը և ո՞չ ալ ընդհանուր կրօնքը ասկէ աւելի Աստուածային, ասկէ աւելի վսեմ և ասկէ աւելի խորունկ բառեր պիտի չգտնէին ապահովաբար, որոնք այսքան ուժով արտայայտել կարենային ձմարտութեան և արդարութեան հետ միանալու, մէկ խօսքով անոնց մով մարմնաւորելու անհրաժեշտութիւնը : Եւ արդէն

առաքեալին և մեր գործածած հաղորդութիւն բառը կը նշանակէ, մասնակցութիւն, միաւորութիւն Յիսուսի մարմինին և արիւնին հետ . որովհետեւ ամենքս մէկ հաց, մէկ մարմին ենք, քանի որ ամենքնիս այն միեւնոյն հացէն կը վայելենք» (Ա. Կորնթ. Ժ. 16-17) :

ՑԱ. Յիսուսի պատուէը զրեթէ բառ առ բառ գործադրուեցաւ իր առաքեալներուն և աշակերտներուն կողմէն, որովհետեւ Նոր Ուխտի պատմութենէն կը տեսնենք, թէ առաքեալները նորադարձ քրիստոնեաներուն հետ, իրենց տուներուն մէջ եղբայրական համախմբումներով հացի բեկանումը կը կատարէին իրեւ յիշատակ իրենց երկնքաւոր վարդապետին մահուան (Գործ. Բ. 42. 46) : Այդ համախմբումներուն մէջ սովորական ճաշը և Սուրբ գրոց բառով բեկանումն հացի բառերով կոչուած հաղորդութեան խորհուրդը զոյգ կ'ընթանալին ճիշդ այնպէս, ինչպէս տեղի ունեցած էր վերնատան մէջ, վերջին ընթրիքի պահուն : Բայց այդ սովորութիւնը չկրցաւ երկար ատեն տեւել : Այդ նախկին սովորութիւնը չկարելի էր անվնաս կերպով ի գործ դնել այն ատեն միայն, երբ Քրիստոնեաները շատ փոքրաթիւ մաս մը միայն կը կազմէին, և որոնք Քրիստոսի անմիջական ներշնչումին տակ արթնցով ուժով հաւատքի մը յենած իրենցմէ դուրս վտարած էին զեղծումի որ և է գաղափար և զգացում : Հաւատացեալներու թիւը որքան սկսու բազմանալ այնչափ զեղծումը կամ կրօնական իրերով զեղծանելու սկզբունքը սկսաւ ծայր տալ : Ճիշդ այսպէս պատահեցաւ նաև Քրիստոսի մահուան իրեւ յիշատակ սահմանուած հաղորդութեան խորհուրդին մատակարարութեան տաեն : Այս պատճառաւ Պողոս առաքեալ երբ ակնարկութիւն կընէ Կորնթացիներուն այդ եղբայրական սեղանի համար կատարած համախմբումներուն, անոնց մէջ տեսնուած զեղծումները կը պախարակէ, և

առաքելական նախկին սովորութիւնը ջնջելով անոնց
առջև նոր ուղղութիւն մը կը գծէ . «բայց զայս պատ-
ուիրելով ձեզ չեմ գովեր, ինչու որ ձեր ժողվիլը չէ
թէ աղէլ, այլ գէշ արդիւնք կ'ունենայ: Որովհետեւ
նախ երբ եկեղեցին մէջ մէկտեղ կը ժողովիք, կը լսեմ
թէ ձեր մէջ հերձուածներ կան և մասսամբ կը հաւատամ: Որովհետեւ պէտք է ձեր մէջ հերձուածները ըլլան, որ-
պէս զի ձեր մէջ եղող ընտիրները երեւին: Ուստի դուք
որ մէկտեղ կը ժողովիք . ատիկա Տերութեական ընթրիչը
ուտել չէ, ինչու որ ուտելու ատենը ամէն մէկը իր ընթ-
րիքը կ'առնու, ու մէկը անօթի կը մնայ ու միւսը կը
գինովնայ: Միթէ ուտելու և խմելու համար տուն չու-
նի՞ք, կամ թէ Աստուծոյ եկեղեցին կ'անարգէք և ամօ-
թով կը թողուք չքաւորները» (Ա. Կորնթ. ԺԱ. 17-22):

Պօղոս առաքեալ Տէրունական ընթրիքի անունին
տակ գործուած այդ գինովութիւնները և աղքատներու
հանդէպ ցոյց արուած զրկումները արգիլելու համար,
պարզ ընթրիչը կը բաժնէ ՏէրՈՒՆԱԿԱՆ ԸՆԹՐԻՅԲԵՆ,
այսինքն Հաղորդութենէն, ապահովաբար այս վերջինին
պատկառանքն ու սրբութիւնը պահպանելու համար, և
այդ թուականէն սկսեալ Հաղորդութեան պատրաստու-
թիւնը և մատակարարութիւնը հետզհետէ կ'ըզգինու
եկեղեցական արարողութեան մը մասնաւոր հանգա-
մանքը, և վերջապէս կը յանգի մեր այժմու ՊԱ.ՍԱ.
ՌԱ.Դին, ի սկզբան շատ պարզ էր և շատ համառօտ, և
տեղի կունենար պարզ գոհութիւնով մը կամ աղօթ-
քով մը:

Յն. Պատարագ կ'ըսուի այն արարողութիւն, որ
ի գործ կը դրուի հաղորդութեան խորհուրդը սրբագոր-
ծելու համար: Պատարագ իբրև սովորական բառ կը
նշանակէ զոհ և որովհետեւ հաղորդութեան խորհուրդն
ալ նկատուած է զոհը մեր երկնաւոր տիրոջ, հետեւաբար

զոհերու ամենէն փրկարարին և ամենէն վսեմին պատ-
րաստութեան արարողութեան ալ ՊԱ.ՍԱ.ՐԱ.Գ. անունը
տուած են: Ի սկզբան պատարագ բառը իր այսօրուան
ո՛չ խսրհրդաւոր իմաստը ունէր, և ո՛չ ալ այսօրուան
հանդիսաւորութիւնը, այդ բառով պարզապէս կը հաս-
կնային այն նուէրները զոր հաւատացեալները կը բրեէին
սիրոյ հացին և հաղորդութեան պատրաստութեան հա-
մար . հետեւաբար ժողովրդեան կողմէն բերուած այդ
նուէրները (հաց, գինի, ձէթ ևայլն) կը կոչուին ընծայ ,
պատարագին ևայլն :

Զոհի գաղափարը շատ հին է մարդկութեան պատ-
մութեան մէջ, ոչ միայն հին կտակարանի բոլոր էջերուն
մէջ կը հանդիպինք զոհն և անոր արարողութիւններուն ,
այլ նոյնիսկ հնութեան բոլոր հեթանոս կոչուած ժողո-
վուրդներու մօտ՝ որոնք կրօնք մ'ունին և այդ կրօնքին
յատուկ արարողութիւնները, կը տեսնենք զոհերն ու
ընծաները որոնք կը նուիրուին ոչ միայն իրենց Աստ-
ուծաներուն այլ և իրենց նախնիքներուն որոնք իրենց
աստուածները կըլլային: Պէտք է սակայն խոստովանիլ
թէ քրիստոնէութեան մէջ պատարագը շատ աւելի աշ-
քառու և շատ աւելի կարեւոր տեղ մը բռնած է քան
մովսիսականութեան և միւս հին աղգերուն մէջ, որով-
հետեւ Քրիստոնէական դաւանական ըմբռնումով Գողդո-
թայի զոհը մարդկային փրկութեան համար կտարուած
Աստուածային զոհ մըն է պարզապէս, և որուն յիշա-
տակը կատարել կը յանձնարարուի նոյնիսկ Քրիստոսէն .
(Ղուկ. ԻԲ. 19 եւայլն): Պատարագ բառին քրիստոնէա-
կան այս խմաստով գործածութիւնը գրեթէ Բ. դարուն
սկիզբները տեղի կունենայ և որչափ որ բողոքականներէ
ոմանք կ'ուզեն պատմել թէ հաղորդութեան խորհուրդին
ալ նկատուած է զոհը մեր երկնաւոր տիրոջ, հետեւաբար

զապէս տգիառութիւն մը կ'ենթաղրէ Եկեղեցւոյ Ա. դարու պատմութեան հանդէպ: Որովհետեւ կը տեսնենք որ Յուսափինոս վկայ Հքէոյ Տրիփանի հետ իր վիճաբանութեան մէջ հաղորդութեան խորհուրդը պատարագ (sacrifice) կը կոչէ, և զանի կը պատշաճեցնէ Մաղաքիայի այն մարդարէութեան ուր կ'ըսուի թէ այսուհետեւ ամէն տեղ խունկ և Սուրբ ընծայ պիտի մատուցուի յանուն Աստուծոյ (Մաղաք. Ա. 11): Գիտենք նմանապէս թէ պատարագը նոյն իմաստը ունէր նաև Երանոսի և Եւսեբիոսի համար, և թէ Զմիւռնացիները պատարագ կը մատուցանէին Պօղիկարպոսի գերեզմանին վրայ: Լատին Եկեղեցւոյ մէջ պատարագի այդ արարողութիւնը կը կոչուի messe, որ իր բառական իմաստովը բոլորովին կը հեռանայ մեր պատարագ բառի իմաստէն: Լատինական պատարագին համեմատ գործածուող այդ բառը գոյականնէ, mittere բային, որ կը նշանակէ դրկել, արձակել և այդ messe բառը իր այս գործածութեան մէջ ցոյց կուտայ այն հին սովորութիւնը, ըստ որում քրիստոնէական նախնական Եկեղեցին բուն իսկ հաղորդութեան խորհուրդին սկսուած ժամանակ Եկեղեցին դուրս կը հանէր բոլոր երախաները և ապաշխարութեան տակ գտնուողները որոնք անարժան էին հաղորդութեան խորհուրդին մասնակցելու, սովորութիւն որուն գործածութիւնը թէ և պակսած է մեր և ընդհանուր Եկեղեցիներուն մէջ բայց տակաւին պատարագի արարողութեան մասին մէջ անոր հետքը մնացած է երբ պատարագիչ քահանային սպասաւորող սարկաւագը երախաներուն, թերահաւասաներուն, ապաշխարողներուն և անմաքուրներուն դուրս ելլալու հրաւէր կարդալէն վերջ դռներուն վրայ ուշագրութիւն կը հրաւիրէ որպէս զի մի գուցէ այդ արտաքսուածներէն մէկը յանդգնի ներս մանել:

ՏԵ. Հաղորդութեան խորհուրդը մատակարարելու

համար իբրեւ նիւթ կը գործածուին հացը և գինին. Հայկական Եկեղեցին ԱնևՄՈՐ ՀԱՅ կը գործածէ ու այս մեր սովորութեան նման լատին Եկեղեցին ալ անխմբոր հացով կը կատարէ իր պատարագը: Մեզմէն զատ արեւելեան միւս բոլոր Եկեղեցիները գրեթէ խմորուն հացով կը կատարեն հաղորդութիւնը, առարկելով թէ Քրիստոս իր կատարած վերջին ընթրիքին մէջ խմորուն հաց գործածած ըլլայ: Արեւելեան Եկեղեցիներուն այս ենթագրութիւնը զկրնար յարմարի հրէական այն սովորութեան, ըստ որում Զատկի օրերուն արգիլուած էր խմորուն հացը, և անոնք իրենց ճաշերը կ'ընէին անխմբոր կամ բաղարց հացով: Երկրորդ նիւթն է ԳԻՆԻ: Հայ եկեղեցին գրեթէ միակն է որ հակառակ միւս բոլոր Քրիստոնեայ Եկեղեցիներու, անապակ այսինքն անջուր գինիով կը պատարագէ: Եւ այս մեր Եկեղեցական սովորութիւնը մեղի իբրեւ յանցանք կը վերագրուի ուրիշներու կողմանէ: Որովհետեւ Աւետարանին մէջ Քրիստոս յայնապէս կ'ըսէ թէ «Այլ եւս որթին բերքէն ընաւ պիտի չխմեն» (Մարկ. Ժ. 25), և որովհետեւ որթին բերքը անապակ գինի է, հետեւաբար Հայ եկեղին առանց կարեւորութիւն տալու դուրսէն եղած սագտանքներու, կը շարունակէ անապակ զինի գործածելու իր վաղեմի սովորութիւնը, որ հաստատուած է Ա. Գրոց և եկեղեցական Ա. Դարու հայրապետներու ուսուցումին վրայ: Եկեղեցական պատմութիւնը ամենաձիւած վկան է մեր ըսածին: Երուսաղէմի Մակար հայութիւնը († 334). իր Եօթներորդ կանոնով կը պատուիրէ բապելու զի հաղորդութեան խորհուրդը կատարենք, գործածելով Առաքելոց համաձայն «Տաք հաց և անապակ զինի»: Եւ որովհետեւ Բ. Դարուն Հռովմի Աղեքսանդր Եպիսկոպոսը ուզեց հաղորդութեան զինին մէջ ջուր խառնել, առարկելով թէ Քրիստոսի կողէն ջուր և արիւն

միանգամայն բղխած են, Եբրեմ, Գրիգոր Նիւսացի և ուրիշ հայրապետներ իրենց ժամանակներուն, հակառակեցան այդ նորամուտ սովորութեամ դէմ, և ասոնցմէ Յովհան Ոսկեբերան այս առթիւ գրեց «Բրիտանոսի կողերէն հոսող երկու աղբիւներէն շինուեցաւ եկեղեցին, որովհետեւ ջրով աւազանէն նորէն կը ծնինք, և արիւնով կը մնանինք զանի ճաշակելով»: Եւ Ոսկեբերան կը յանդիմանէ զամնն անոնք, որոնք հազորդութեան բաժակին մէջ ջուր կը խառնեն: Մեր հայրապետներէն ամենքն ալ Ոսկեբերանի գաղափարովը ապրած են: Եւ Օձնեցի հայրապետը իր կանոններով կը պատուիրէ «Պէտք է հայր անխմոր և գինին անապակ հանել սեղան, ինչպէս մեղ աւանդած է Ս. Գրիգոր»: Հայ Եկեղեցին հանդէպ որչափ որ սկսան մաքուիլ յոյն և լատին եկեղեցիները, այս վաղեմի սովորութիւնը փոխել տալու համար, բայց Հայերը չ'ուղեցին խզձի խնդիր մը զոհել ո և է պատահականութեան: Միայն Ներսէս Շնորհալի Յունական վէճերուն միջացին, Բիւզանդեան կայսրութեան դէմ հայկական այս սովորութիւնը պաշտպանելով հանդերձ, հայկական եկեղեցւոյ ողջմտութիւնը ցուցնելու համար, Մանուէլ կայսեր գրած նամակին մէջ ըստ «Այսպէս թէ այսպէս միայն պէտք է մաքուր հոգիով սպասաւորել Աստուածային խորհուրդին, և այն ատեն ամեն ինչ ՚ի հաճոյ Աստուածոյ պիտի կատարուի. Իսկ անմաքուր և պիղծ մարդը թէ անապական զինիով պատարագէ և թէ ջուր խառնելով, պատարագը ընդունող Աստուածը կը բարկացնէ փոխանակ հաշտեցնելու:»

33. Հաղորդութեան խորհուրդին չուրջ ամենէն աւելի յարուցուած խնդիրները կը վերաբերին սա հարցումին թէ պատարագի ատեն Սրբածործուած հայր և գինին իրենց գոյացութիւնը կը փոխին թէ ոչ: Ահա այն կնճռու հարցը որ ամրոջ դարեր և ամրոջ ժողո-

վուրդներ զբաղեցուցած է, առանց երբէք ընդհանուր քրիստոնէութիւնը և ուրոյն եկեղեցիները համաձայնութեան մը բերելու: Այդ խնդիրները յուզուած են միմիայն անոր համար որ վերջին ընթրիքի ատեն Յիսուս իր առաքեալներուն տուած հացին «այս է մարմին իմ» և գինիին «Այս է արիւն իմ» ըստած է: Քրիստոսի գործածած այդ մարմին և արիւն բառերը իրենց մէջ վարդապետական ո՛ւ է ոյժ չ'ունին, նոյնիսկ Առաքեալներուն գրչին տակ, և աւելի Քրիստոսով մնանելու, անորոգիէն ներհնչուելու, և անոր մահովը արիանալու գաղափարն է, որ կ'այտայան և կամ Քրիստոսով աշխարհ Յերուած փրկութեան համար արտայայտուելիք Գոհութիւն մը (Eucharistie) զոր պարտաւոր պիտի ըլլային Աստուածոյ մատուցանել այն բոլոր մարդերը, որոնք Քրիստոսով փրկանաւորուած էին: Առաքեալներէն վերջ Եկեղեցւոյ Հայերն ալ տակաւին որոյ քաղափար մը չ'են կրնար կազմել հաղորդութեան խորհրդոյն մատակարարութեան ատեն գործածուած նիւթերուն նկատմամբ, և, վարդապետական տարտամութիւնը կը շարունակէ աղվարդապետական առաջարկութիւն մէջ առաջարկութիւնը կը շարունակէ աղվարդու վրայ, մինչև որ անոնցմէ ոմանք հոգեպել մտքերու վրայ, մինչև որ անոնցմէ ոմանք հոգեպաշտական, այլք նիւթապաշտ մեկնութեան, և ուրիշներ միսթիք մեկնաբանութեան տուած ինքզինքնին կը սկսին բացատրել Յիսուսի բառերը այն տեսակ ձախուզական գովազդ մը որ վերջոյ տեղի կուտայ կուսակցազանքով մը որ վերջի վերջոյ տեղի կուտայ կուսակցական ոգիին, կ'ենթարկուի փիլիսոփայական գործութիւններու աղդեցութեան, և կը հասնի մինչև այն ծայրահեղութեան ուր Եկեղեցիներէ ոմանք հաղորդութեան հացին և գինիին մէջ Քրիստոսի իրական մարմինը և հացին և գինիին մէջ Քրիստոսի իրական մարմինը և իրական արիւնը կը փորձուին տեսնել, և, ուրիշներ իրական պիտի յութեալու ներկայութիւնը պատարագէս կ'ուրանան Քրիստոսի հոգեւոր ներկայութիւնը պատարագով խորհրդաւորուած այդ նիւթերուն մէջ, Միայն սա ըսենք թէ Եկեղեցւոյ հին Հայերը վար-

գապետական ու է կայուն բանաձևեւ չգործածելով հանգերձ հաղորդութեան այդ նիւթերուն համար, գրեթէ անխափի գործածած են զոնուրիշն, մարմին, արիւն, օրինակ, նշանակ, յիշատակ ևն . բառերը : Եւ եթէ երբէք առանց եկեղեցական կուսակցականութեան հայրապետներուն կարծիքները վերլուծենք, գրեթէ սա բառերով պիտի կրնանք ամփոփել անոնց միտքը . « Հաղորդութեան տարրերը Աստուածային զօրութիւն մը կ'ընդունին՝ Երկնային բանի մը կը փոխարկուին», և « Նիւթէն, հոգիէն, Աստուածայինէն, յիշատակէն, օրինակէն », կը կազմին « Համազանգուած կենդանի պատկեր մը, վերաբերմասիր Յիսուսի անձին, կեանքին, գործին, վախճանին »:

Յ8. Միջն դարը որ ծանօթ է պատմութեան մէջ իր կրօնական մոլեռանդութեամբ և արտառոցութիւններովը, աւելի շատ զբաղեցաւ հաղորդութեան խնդրով և ուղեց վարդապետական բանաձև մը պատրաստել, և այդ բանաձեւով ըմբռնել տալ այն թագուն և խորհրդաւոր ներգործութիւնը, որուն կ'ենթարկուին պատարգին հացը և գինին, իրենց սրբադրումէն վերջ : Այդ դարուն սկսվաստիկ ներչնչումներով առկեփի միտքերը հաղորդութեան խորհուրդը կարենալ բացարեկու համար գրեթէ փոխառին նիւրի և ձեւի Արիստոտէլեան ստորոգութիւնները (catégories), ըսելով թէ հաղորդութեան խորհուրդին նիւթերը սոսկ իրենց արտաքին երեւոյը կը պահեն, կը կորսնցնեն իրենց զոյացուրիշները և կ'ըլլան իրապէս հշմարիս մարմին եւ հշմարիս արիւն Քրիստոսի : Այս գաղափարին համանման գաղափար մը յլացողը եղաւ յունական եկեղեցին, երբ սկսաւ տեսակ մը հոգեկան համազոյացութիւն (consubstantion) գաւանիլ : Է . դարուն, առաջին անգամ ըլլալով Յովհաննէս Դամասկացին գոյացափոխութեան վարդապետութիւնը մէջտեղ նետեց : Գոյացափոխութիւն (trans-

substantiation) բառով կ'իմացուի գոյացութիւն (substance) մը ուրիշ գոյացութեան մը փոխուիլը : Գոյացափոխութեան վարդապետութիւնը ընդունող եկեղեցիները կը վարդապետէն, թէ հաղորդութեան խորհուրդին մէջ հացը և գինին իրապէս կ'ըլլան մարմին և արիւն ՚Բրիստոսի, պահելով հանդերձ իրենց տեսակը կամ ձեւը, գոյնը և համը : 787ին Նիկիոյ Բ. Ժողովը բաւական զրադացաւ հաղորդութեան սոյն խնդրով : Թ. Դարուն արեղաներէն մին Պատկաս Ռաֆ, գրեթէ այս բառերով բանաձևեց հաղորդութեան խորհուրդը, և զոր իրմէ առաջ Դամասկոսիցին և ուրիշներ յլացած էին : Վերջապէս 1225ին լատերանու մէջ գումարուած ժողովով, որուն նախագահեց իննովկենախանոս Գ. Պապ . Լատին եկեղեցին համար նուրիադործեց ԳՈՅԱՅԱՓՈՒԽՈՒԹԵԱՆ յին իրեն համար նուրիադործեց գոյացափոխուրիշն նոր և արշուոյ հետ թէպէտ մերժեց զոյացափոխուրիշն սառավովը բառը բայց ինքն ալ միջին դարու պրատր հասասով բառը բայց այս ալ միջին դարու պրատր հասասով մերժելով մանաւանդ Ժէ . Դարուն, ընդունեց սանքէն մղուելով մանաւանդ Ժէ . Դարուն, ընդունեց սակաւ տակ ծածկուած վարդապետութիւնը :

Յ9. Կրօնական բարեկարկութեան հեղինակները առիթ ունեցան հաղորդութեան խորհուրդով ալ երկարութէն զրագելու : Լուտեր, իր « Բարեկոնի գերութիւն »ը բարքին մէջ մերժելով հանդերձ կաթոլիկ Եկեղեցւոյ զոգրքին մէջ մերժելով հանդերձ կաթոլիկ Եկեղեցւոյ զոյացափոխուրեան վարդապետութիւնը, կ'ընդունի թէ յացափոխուրեան մէջ և ներկայ և հաղորդուրեան մէջ . Քրիստոս մարմնապէս ներկայ և հաղորդուրեան մէջ . « Սեղանին խորհուրդը, կ'ըսէ Լուտեր, տիրոջ մարմինն ու արիւնն է, ի մէջ և ընդմէջ հացին և գինիին, որոնք Յիսուսի խօսքերով կը մատուցուին հաւատացեալները Յիսուսի խօսքերով կը մատուցուին հաւատացեալները Յիսուսի իրական մարմինին միասնաւոր ներհացին և Յիսուսի իրական մարմինին միասնաւոր ներհացին կը կոչուած է խորհրդական կայութիւնը լուտերականներէն կոչուած է խորհրդական

միուրիւն (union sacramentelle) կամ համագոյացուրիւն (consubstantiation) : Կաթոլիկները լուսերականներու այս համագոյացութեան վարդապետութիւնը ծաղրելու համար իրենց կողմէն հացեղուրիւն (impanation) անունը տուած են անոր : Թեպէտ լուսերի այս ըմբռնումը չ'էր վնասեր քրիստոնէական հին եկեղեցւոյ այս մասին ուսնեցած իմացումին, «այսու հանդերձ այդ գաղափարին մէջ կը նշանակուէր տեսակ մը իրապաշտութիւն որ համաստուածեան նկարագիր կուտար հաղորդութեան» :

Զուինկլ, այդ Հելուետիացի բարենորոգիչը, լուսերի բոլորովին հակառակ ուղղութիւնը մը բանեց հաղորդութեան խորհրդոյն մէջ, և ըստ թէ «Հաղորդութեան ճաշակումը հոգեկան է բոլորովին, և չկրնար ուրիշ բան մ'ըլլալ, հակառակ ըմբռնումով դիսուած ատեն այլ եւս հաւատքը տեղ չպիտի ունենար հաղորդութեան խնդրոյն մէջ: «Ուրեմն հացը և զինին Փրկչին մարմինին և արիւնին նշանակն է միայն, և միեւնոյն ժամանակ անոր գործին յուշարարը: Գալով Յիսուսի Քրիստոսի մարմինն, անիկայ բազմած է Աստուծոյ մօս, անոր փառքին մէջ և չկրնար իրապէս ներկայ ըլլայ երկրի վրայ»: Եթէ, կը գրէ Պօղօն, նկատողութեան առնունք լուսերի և Զուինկլի հաղորդութեան մասին պարզած գաղափարները, հետեւեալ հակադրութիւնը պիտի գտնենք.» առաջինին համեմատ հաղորդութեան տարրերը ոչ թէ նշանը այլ իրականուրիւնն են՝ իրբեւ Աստուծացին սնունդ հաւատացեալին արուած Յիսուսի Քրիստոնի փառուրեալ մարմինին: Զուինչերիացի բարեկարգիչին համեմատ ընդհակառակն հացը և զինին խորհրդանշան են և ոչ թէ իրականուրիւնը այդ երկնային սնունդին, որուն մէջ պէտք չէ ուրիշ բան տեսնել բայց եթէ հաւատքով ճանչցուած ու ըմբռնուած փրկիչին անձը»:

Կալվին ուղեց վերոյիշեալ երկու բարեկարգիչներուն

հակառակ տեսութիւնները հաշտեցնել իրարու հետ, և զանոնք միացնելով հասաւաել թէ հաղորդութիւնը թէ խորհրդանշան է և թէ իրականուրիւն միեւնոյն ժամանակ: Կալվին կը պնդէ թէ հաղորդութեան հացը կամ զինին նշան մը չէ պարզապէս այլ և միեւնոյն ժամանակ գրաւական մը և Աստուծածային չնորհներու կնիք մը որ հաւատացեալներուն կը արուի. «Քրիստոսի մարմինը, կ'ըսէր Կալվին, թէպէտ երկինքն է Աստուծոյ մօս, բայց անիկա ուժական զօրութեամբ (dynamitement) կը գորնէ հաւատացեալին վրայ իր կեանքին գոյացութիւնը անոր հաղորդելու համար:» Որչափ ալ գեղեցիկ տողեր նուիրած ըլլայ Կալվին, իր այս վարդապետութեան հաստատութեանը համար, այսու հանդերձ պէտք է ըսել թէ իրրե վարդապետական բանաձև կարելի չէ ընդունիլ զանի, քանի որ Կալվինի վարդապետութիւնն ալ այնքան անհեթեթ է որքան գոյացափոխութեան վարդապետութիւնը: Մինչեւ ցարդ տեսանք չորս վարդապետութիւններ. Կաթոլիկ գոյացափոխութիւնը, լուսերի խորհրդաւոր նիւթապաշտութիւնը, Զուինկլի բարոյականութիւնը (moralisme) և Կալվինի խորհրդանշանական ուժականութիւնը (dynamisme):

80. Կը մնայ զիսնալ թէ այս մասին ի՞նչ է Հայեկեղեցւոյ ըմբռնումը: Մեր եկեղեցին ինչպէս հաղորդութեան նմանապէս ուրիշ խորհրդական ինսդիբներու որոշման մէջ միշտ զգուշացած է բացարձակ սահման մը ըծել անոնց, որովհետեւ կ'զգար թէ այդ օրինակ իսլամիներու մէջ վերջնական լուծման մը յանգելու համար, ոչ փիլիսոփայական և ոչ ալ զիտական մեթոսներու ընտրական կիրարկումը բաւական էր որոշ լուծում մը ընտրական կիրարկումը բաւական մը որոշ անոնց, որոնց մեծագոյն մասը վարագուրուած է Աստուծածային խորհրդաւորութիւնով մը, և քրիստոնէական հին եկեղեցւոյ յատուկ հաւատացեալի մը լայնախո-

հութիւնով կը նախընտրէր հաւատալու պէտքը միայն և
մասնաւորապէս հաղորդութեան խորհրդոյն հանդէպ
գտնուած միջոցին, սրբագործուած հացն ու գինին Յի-
սուսի Մարմինեն և արիւնին համազօր նկատելով հան-
դերց, չէր մոռնար թէ այդ խորհուրդին կատարումը
գերազանց յուշարաւէ էր Քրիստոսի մահուան և դէպի
մարդկութիւնը անոր ցոյց տուած սիրոյն և աշխարհ բե-
րած փրկութեանը։ Մեր եկեղեցւոյ հայրերուն մէջ եր-
բեք չէ գտնուած մէկը, որ լատին եկեղեցւոյ և բողո-
քականութեան աստուածաբաններուն նման որոշ բանա-
ձև մը տուած ըլլայ հաղորդութեան նիւթերու մասին։
Հին եկեղեցւոյ Հայրերէն Տէրառողիանոս, Խրենիոս, Թէո-
սորիտ են, հաղորդութեան խորհուրդն ու գերը օրի-
նակ կամ նշանակ բառերով կը բացատրեն։ Ճիշդ միեւ-
նոյն իմաստով մեր եկեղեցւոյ վարդապետներէն Սահակ
Պարթև օրինակ և Գրիգոր Նարեկացի պատիեր բառերը
կը գործածեն։ Ասոնցմէ զւրս Յովհան Մանդակունի
հաղորդութեան խորհրդոյն մէջ գրեթէ Յիսուսի հոգե-
կան ներկայութիւնը կ'ընդունի հաղորդութեան հացին
և գինիին մէջ. միեւնոյն գաղափարին կը ծառայէ նաև
Խոսրով Սնանեւացի իր ժամագրքի մեկնութեանը մէջ։
Ներսէս Շնորհալի իր բանաստեղծական տաղերուն մէջ
հաղորդութեան խորհուրդը իրք յիշատակ նկատելով
հանդերձ չմռնար Յիսուսի երկնաւոր մարմինին եւ ար-
իւնին ներկայութիւնը այսինքն հոգեւոր ներկայութիւնը.
Լամբրոնացի սրբագործուած հացն ու գինին կը նկատէ-
ոչ թէ իսկ և իսկ Յիսուսի մարմինն ու արիւնը այսինքն
ոչ իբր համբուն, այլ իբրեւ անոնց համազօր. ուրիշ
աել մը կը գործածէ համեկուրիւն բառը որ թերեւս
կրնայ նոյնանալ յոյն և լուտերական համագոյացութեան
(consubstantiation) հետ։ Խնչ որ որոշ գիտենք սա է թէ
հայկական եկեղեցին մերժած է գոյացափոխութեան վար-

դապետութիւնը. և թէպէտ ատոր փոխարէն մեր պատա-
րագամատոյցին հաղորդութեան սրբագործութեան ա-
զօթքին մէջ փոխարկումն բառ մը գործածուած կայ,
բայց պէտք է ըստել թէ անիկա վերջամուտ է, կ. Պո-
լսոյ պատարագներէն փոխ առնուած և պատուաստուած
մեր պատարագամատոյցներուն վրայ։ Եւ արդէն եթէ
երբեք ամբողջ պատարագամատոյցը նկատողութեան
առնենք պիտի տեմնենք այդ աղօթքներուն մէջ ցու-
ցակի յիշատակի նման բառեր և բայեր, որոնք սիս և
օրինակ բառերուն իմաստը կընդգրկեն և կը հաստատեն.
և հաց, զինի, մարմին, արիւն, յիշատակ փոխարերաբար
և փոխադարձաբար կը գործածուին ճիշդ այն իմաստով
որով Քրիստոս ինքինքը և իր յայտնած ճշմարտութիւ-
նը իրք կինդանի հաց կը ներկայացնէր (Յոլհ. Զ.)։ Այս
ամենը կը ցուցնեն թէ հաղորդութեան խորհուրդը Հայ
եկեղեցւոյ համար աւելի յիշատակ մ'է քան գոյացափո-
խութիւն։ Ապա ուրնմն պիտի կընանք ըստել թէ Հայ-
կական եկեղեցին Օգոստինոսի նման հաղորդութեան հա-
կամար կամ նկատած է սուրբ յուրիդանշաններ կամ
պատկերներ, որոնց մէջ կը գաւանի հոգեկան զօրութիւնը։
Եւ թէպէտ միւշեւ հիմա հրատարակուած և, հայ եկե-
ղեցւոյ վարդապետութեան վերաբերող դասագրքերու մէջ
գոյացափոխութիւն բառը մերժուած բայց Կաթոլիկ աղ-
քեցութեամբ մը գրեթէ անոր վարդապետութիւնը քիչ ու-
տապ տարբերութեամբ հաստատուած է, այսու հանդերձ
շատ տարբերութեամբ հաստատուած է աղքական մէջ
պատմական վաղափարը հաստատելու համար պատ-
մական փաստեր կը պակսին մեղի։ Հայկական եկեղեցւոյ
պատմական ու վաւերական աղքիւրները քննած ժամա-
նակին սա եղրակացութեան կը յանդինք. «Հա-
յանկիս գոնէ սա եղրակացութեան կը յանդինք. Հայ-
կական կամ ինչ անգիտ անգիտ անալի անալի անալի
միջ. և Քրիստոսի հոգեկան պիտի այդ եկեղեցի անոնց

այդ նշանակները համազօր կ'ըլլան (Լամբրոնացիի բառով) Քրիստոսի նշանարկութեան մարմինները և արիւնին»:

Տ1. Հին ժամանակներ ամեն անգամ որ պատառագ կը մատուցուէր բոլոր աշխարհականները և եկեղեցականները ներկայ կը գտնուէին պատարագին և ամենքն ալ անխափիր կը հաղորդուէին պատարագիչ քահանայէն, հաղորդութիւնը երկու տեսակով կը տրուէր, այսինքն հաղորդութեան հացէն և գինիէն միանգամայն կը տրուէր ժողովրդեան: Նախ կը հաղորդուէին եկեղեցականները յետոյ աշխարհական այրերը և յետոյ կիները: Պատարագիչը կամ սարկաւագը աշխարհականներու աջձեռքին կամ ափին վրայ կը դնէր հաղորդութեան հացը խակ կիներն ու աղջիկները լաշակով զլուխնին և ափերնին սպիտակ կտաւով կամ շլարշով ծածկած կը մօտենային հաղորդութեան. և յետոյ ամենքն ալ կարգաւ հաղորդութեան գինիէն կը խմէին կամ սկիհը ուղղակի շրթունքներուն տանելով կամ դգալով և կամ սոկի եղեգով: Կերեւի թէ մեր եկեղեցին սկիզբէն մինչեւ հիմա հաղորդութեան մարմինը արիւնին մէջ թաթիւնելով տուած է հաւատացեալներուն: Հին տաեն սովորութիւն կար նաև պատարագին չկրցող մասնակցող հիւանդներուն հաղորդութիւնը իրենց տուները տասնիւ: Կաթոլիկ եկեղեցին իր խոսորումի անօրինակ ոդիսով սկսաւ հաղորդութեան բաշխումին մէջ ալ նորութիւններ մտցնել և ո՛չ միայն մերժեց տասներկու տասներեք դարերէ ի վեր գոյութիւն ունեցող եկեղեցական սովորութիւնը այլ այդ խոտորումով Հոռվմայ եկեղեցին ԺՊ. դարուն հաղորդուող հաւատացեալները զրկեց բաժակի գինիէն և իբրև հաղորդութիւն միմիայն հաց տուած անոնց: Ասիկայ նորութիւն մէր կը գանոնք մասնակից ընել ապահովելու համար պէտք էր զանոնք մասնակից ընել ապահովելու համար սովորութիւնը կ'ընէին

և իբրև ճշմարիտ ըմպելի, և քանի որ ըսուած է թէ «Եթէ ոչ կերիչիք զմարմին Որդւոյ Մարդոյ և արբախք զարիւն նորա ոչ ունիք կեանս հանձինս» (Յովհ. լ. 54: 57). Լատին եկեղեցւոյ պետերը իրենց կողմէն շեշտեցին, երկար տաեն, երկու տեսակով, հաղորդութեան պէտքը, և զանազան ժողովներով անոր կարեւորութիւնը պնդեցին, մինչեւ որ Տրիտէնդեան ժողովը որոշեց մոռնալ բոլոր հին սովորութիւնը, և ժողովուրդը հաղորդել մէկ տեսակով: Այդ նորամուտ կանոնին դէմ Պահեմիոյ կաթոլիկ եկեղեցիներն ընդդիմացան և նոյն խակ եղան պապեր, ինչպէս Պիոս Դ. Լեռն Ա. և Պաղիլիոյ ժողովը որմնք հակառակ մէկ տեսակով եղած հակաքրիստոնէական նորութեան, պնդեցին և պահանձեցին որ ժողովուրդը հաղորդուի նաև հաղորդութեան բաժակէն:

Այսօր բացի լատին եկեղեցիէն միւս քրիստոնէական բոլոր եկեղեցիները ժողովուրդը երկու տեսակով ալ հաղորդելու հնաւանդ սովորութիւնը պահած են:

Տ2. Քրիստոնէական բոլոր եկեղեցիները մանուկները չ'են զրկեր հաղորդութիւնէ և զանոնք մասնակից կ'ընեն այդ սուրբ խորհուրդին կամ հաղորդութեան հակընին զինեխտուն փշանքները տալով անոնց և կամ այդ զին զինեխտուն փշանքները տալով անոնց շրթներուն քսելով: Մանկանց այդ տեսակ հաղորդութիւն տալուն կ'ըսուի շրթնանդորդ ընել: Կ'երեւի մանուկներու մատակարարուած այդ հաղորդութեան դէմ նույն առաջ ստիպուեցան պաշտպանել այդ հին սովորութիւնը, և պնդել թէ մանուկներուն փրկութիւնն ալ ապահովելու համար պէտք էր զանոնք մասնակից ընել ապահովելու համար սովորութիւնը կ'ընէին զութիւն տալ կը մերժէին սա առարկութիւնը կ'ընէին

թէ քանի որ մանուկները դեռ հաւատք չ'ունին, չ'են կրնար հաղորդութեան մասնակցիլ: Այս առարկութիւն ընողները կը մոռնան թէ ատով իսկ շատ ձախող վիճակի մը կ'ենթարկեն ինքինքնին, որովհետեւ երբ հաւատքը իբրև մկրտութեան պայման նկատելով հանդերձ մանուկները կը մկրտենք առանց անոնցմէ անձնական հաւատք սպասելու, նմանապէս պարտաւոր ենք Աստուծոյ Արքայութեան ժառանգորդ եղող մանուկներուն չզլամալ հաղորդութիւնը: Նոյնիսկ կաթողիկ պատմիչները կ'ընդունին թէ մինչեւ Ժ. գար բոլոր Քրիստոնեայ եկեղեցիները ընդունած էին և՛ի գործ կը դնէին մանուկները հաղորդելու սովորութիւնը, բայց Լատին եկեղեցին հակառակ ինսովիկինտիոս Ա. և Գիւլասիոս պապերուն այս մասին առած վճրուներուն, 1255 թուին Փորթուկալի ժողովին Երդ կանոնովը արգիլեց մանուկներուն հառդութիւն առլու վաղեմի սովորութիւնը:

ՊՍԱԿ ԿԱՄ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Ց. Ա. Ամուսնութիւնը հին է մարդկութեան չոփի: Եւ կարելի չէ ճշդել, թէ ե՞րբ կ'սկսի այդ սովորութիւնը: Աստուածաշունչի նկարագրութեան համաձայն, Ադամին, այսինքն Մարդկութեան ծագումին զոյգ կը քալէ այն: Պատմական ժամանակներու մէջ ամուսնութիւնը միշտ նկատուած է մէկը մարդկային կեանքի կարեւորագոյն երեւոյթներէն, եւ անոր մասնաւոր նշանակութիւն մը տրուած է: Երբ բոլոր հին և նոր ազգերու ամուսնական սովորութիւնները նկատի առնունք և զանոնք վերալուծնք, կը աեսնենք, թէ ամուսնութիւնը

երեք ձեւերսւ տակ կը ներկայանայ մեղի, իբրեւ թնական դաշինի, կնքուած այր և կնոջ միջև, տեւական կամ ժամանակաւոր հանգամանքով. իբրեւ բաղայական դաշինի, որուն համեմատ կազմուած միութիւններուն բաղայական ամուսնութիւն անունը կը տրուի. իբրեւ սրբադան կրօնական արարողութիւնն, երբ ամուսնութիւնը տեղի կունենայ կրօնական ծէսով, ու եկեղեցին մը հովանաւորութեամբ: Հնութեան մէջ ամենէն ցիի մը հովանաւորութեամբ: Հնութեան մէջ ամենէն ցւելի ծանօթ էին և գործածական, ամուսնութեան վերոյիշեալ առաջին և երրորդ ձեւերը, վերջինը մանաւանդ նոյն իսկ հեթանոսութեան օրերուն տարածուն ւանդ նոյն իսկ հեթանոսութեան օրերուն, Զրեայ ժողովութղին մէջ ստացաւ, և ամուսնութիւնն բառին համանգամանք մը ստացաւ, և ամուսնութիւնն բառին համանշանակէ «Մրբազան արարողութիւն»:

Ց. Ա. Զրեայ ժողովուրդի կեանքին մէջ աւելի եւս շեշտուեցաւ ամուսնութեան արբազան արարողութիւնն ըմբռուումը, քանի որ անոնք ամուսնութեան հրահանգութեան ծագումը նոյնիսկ Աստուծոյ վերագրեցին՝ (Ծննդ. Բ. 18-24): Նահապետական օրերուն, Զրեայ ժողովութղին մէջ ամուսնութիւնները աստուածային նուիրագործումով մը (sanc-tio) սրբագործուեցան, ինչպէս ցոյց կուտայ Խասհակի պարագան, երբ Աստուած է, որ կ'ուզդէ անոր կին մը գտնելու ձեռնարկը (Ծննդ. Ճ.Դ.) : Ամուսնութիւնը իբրև արբազան արարողութիւն նկատուելով հանդերձ, հին ժողովուրդները՝ ամուսնութիւնները կը կատարէին, աղջիկները կամ զնելով, կամ յախշակելով: Զրէաներուն մէջ ալ զնումով ամուսնութիւնը յաճախակի գործադրուած իրողութիւններու կարգէն է (Ծննդ. Լ.Ա. 15. Լ.Դ. 12. Ելք. ԻԲ. 16, 17. Ա. Թագ. Ժ.Բ. 23 եւն.): Ինչպէս բազմայրութիւնը գոյութիւն ունէր երեխն կինջապէս բազմայրենի ժողովուրդներու մէջ, նմանապէս բազմասպալայրենի ժողովուրդներու մէջ, նմանապէս բազմա-

իսրայէլացիք ալ բազմակին էին, և անոնք իրենց օրիւնաւոր կինէն զատ հարձեր ալ պահելու իրաւունքը կը վայելէին։ Մոլոէս նուիրագործեց այս սովորութիւնը (Ելք. ԻԱ. 7-11), ջանալով միեւնոյն ատեն, սահմանաշփակել զայն, կարգ մը արգելքներ դնելով բազմակին ամուսնութեան սովորութեան մէջ (Ղեւտ. Ժ. 18. Բ. Օրէնք. ԻՅ. 15, 17)։

ՏՅ. Հին ժամանակներու ընտանեկան կեանքին մէջ, կինը շատ ստորին դիրք մը միայն կը վայելէր։ Երիկմարդուն ընկերը չէր կինը, այլ զերին, աղախինը։ Եւ իրեւ այդ նկատուած կինը, բնականաբար, ընտանեկան բարւոք կազմակերպութեան մը գործին մէջ չէր կրնար լայն բաժին մը ունենալ։ Եւ արդէն բազմակը նութիւնը ինքնին, ինչպէս նաև բազմայրութիւնը զօրաւոր խոչընդոտներ են լաւ հաւկցուած կամ ըմբռնուած ընտանիքի մը կաղմութեան համար։ Հրէական միտքը հետզետէ կ'ըմբռնէ ԸՆՏԱՆԻՔի այդ թերին և միավութեան գաղափարը, իրեւ ամենամաքուր իտէալ, երեւան գալ կ'սկսի մարդաբէական օրերուն, երբ Ենովային իր ժողովուրդին հետ ունեցած յարաբերութիւնը կը բազդատուի այր և կնոջ յարաբերութեան հետ (Եզեկ. Ժ. 8 եւն.)։ Մարդաբէական այս ըմբռնումը կը հիմնուի այն սկզբունքին վրայ, թէ կինը օգնական մըն է էրկանը, և ո՛չ աղախին մը (Ծննդ. Բ. 18-24)։ Քրիստոնէութեան վերապահուած էր մաքրագործել ընտանիքն ու ընտանեկան կեանքը, և տալով անոր այս բնադրոչմը, որ յասուկ է Քրիստոնէական ընտանիքին։ Քրիստոս ամուսնութեան սրբազն նկարացիցը կը մատնանչէ (Մատթ. ԺԹ. 3-6)։ Պօղոս առաքեալ աւելի եւս կընդալայնէ ամուսնութեան մասին Յիսուսի ըմբռնումները (Եփես. Ե. 25-33)։ Բազմակնութեան ու հարձ պահելու սովորութիւնները կ'արտաքսուին, և կինը սկզբանը

և իրապէս ընտանեկան յարկին տակ իրեն արժանաւոր տեղը բանելու կը հրաւիրուի, իբրեւ օժանդակը, ընկերը, գործակիցը իր ամուսինին։

ՏՅ. Քրիստոնէական հնագոյն եկեղեցիները չ'ըաւականացան ամուսնութիւնը՝ ըստ հին և նոր ըմբռնուամի, սրբազն արարողուրիւն մը նկատելէ, և զայն դասեցին Խորհուրդներու կարգը։ Ամուսնութեան Խորհուրդը մը նկատուելուն հիմ ծառայեց, Ս. Պօղոսի սա հասուածը. «Խորհուրդս այս մեծ է» (Եփես. Ե. 32)։ Բայց ինչպէս տեսանք ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐՈՒ մասին խօսած ատենանիս, Պօղոս առաքեալ հոս Խորհուրդ բառը կը գործածէ պարզապէս «Ամասնանշելու համար Խորհրդանշանի մը թաքուն իմաստը», և ո՛չ թէ այն իմաստով, որով Տէրտուղիանոս կամ Օգոստինոս կը հասկնային Խորհուրդ (sacrament) բառը։ Եւ ինչպէս զիտել կուտայ Պոլոն, Խորհուրդը (sacrament) կը նշանակէ դաշինք մը, որ հաստատուած է մարդուն և Աստուծոյ միջեւ, մինչ ամուսնութիւնը այդ հանգամանքէն զուրկ, պարզապէս դաշինք մըն է, կամ ըսենք սրբազն դաշինք մը, առն և կնոջ միջեւ։ Սյս ըմբռնումով էր անշուշտ, որ մեր եկեղեցին, երկար ժամանակ ամուսնութիւնը կամ պատութիւնը մեր եկեղեցին համար ալ մէկն է եկեղեցւոյ եօթն խորհուրդներէն, անիկա պարզապէս արդեւոյ եօթն խորհուրդներէն, անիկա պարզապէս արդեւոյ է օտար աղղեցութեան և ընկալեալ սովորութեան։

ՏՅ. Ամուսնութեան օրինաւորութիւնը կը պահանջէ, որ ամուսնացողները ունենան նախ չափահաս տարիք, յետոյ իրարու հետ ամուսնանալու համար կամք յօժարութիւն։ Երբ երկուքին մէկը կը պակսի, ամուսնութիւնը կը դարդի օրինաւոր ըլլալէ, և եկեղեցական օրէնքը պատիմի կ'ենթարկէ բռնի և անչափահաներու

պսակադիր քահանան : Այս պարագան դժբախտաբար պէտք եղածին պէս դեռ չէ ըմբռնուած մեր մէջ . ու գաւառները մանաւանդ ոչ միայն անշափահամներու պսակներ կը կատարուին , այլ և դեռ ծնողը իրենց աղջիկներն ու մանջերը կ'ամուսնացնեն , առանց կանխաւ հասկցած ըլլալու անոնց արամագրութիւնները : Պէտք է ընդունիլ , թէ մեր ընտանեկան յուռութիւններուն մեծագոյն մասը այդ հակամարդկային ու հակաքիստոնէկան սովորութիւններուն արդիւնքն են : Արեւելեան ու արեւմտեան եկեղեցիներուն համար ամուսնութեան օրինաւորութեան պայմաններէն մէկն ալ է պսակադիր քահանայիններկայութիւնը , և անոով՝ պսակի կրօնական արարողութիւնը : Պսակադիր քահանան Հոռվամէական Եկեղեցին ըմբռնումով ամուսնութեան անհրաժեշտ վկան է : Կալվինականք՝ ամուսնութիւնը կը նկատեն քաղաքական պայմանագրութեան հանգամանք ունեցող արարողութիւն մը , և ոչ թէ սրբազն արարողութիւն մը : Անգլիքան Եկեղեցին ու միւս բողոքականներն ալ գրեթէ միեւնոյն ըմբռնումն ունին ամուսնութեան մասին , և որոնք ամուսնութիւնը պարզ դաշնադրութիւն մը ընդունելով հանդերձ , կը պահանջեն , որ հոգեւոր պաշտօնէին ներկայութեան և անոր աղօթքովը կնքուի : Մեր և միւս արեւելեան Եկեղեցիները , ամուսնութիւնը նկատելով հանդերձ թնական դաշինի մը , իրեւ սրբազն արարողութեան կը նային անոր , և պսակադիր քահանան կնկատին ոչ միայն իրեւ վկայ ամուսնութեան , այլ և իրեւ պաշօնեայ , որ իրաւոնք ունի ամուսնութեան բնական դաշինքը նուիրագործելու , լսելով ամուսնացողներուն ազատ կամեցողութիւնն ու ամուսնանալու համահածութիւնը , և Պօղոս առաքեալի բառերով , ամուսնութեան պատուականութիւնը , և ամուսնացողներու անկողնին սրբութիւնը կրկնելով :

§§ . Անոնք , որ ինքզինքնին ձերբագատուած կը զգան կրօնական ո՛ւ և է գաւանանքի պատկանելէ , և չեն հանդուրժեր կրօնական արարողութեան մը ենթարկելու ինքզինքնին , իրենց կենակցութիւններուն օրինաւորութեան դրոշմը տալու համար , ուղղակի թէ ամուղղակի կերպով ծնունդ տուին ամուսնութեան բաղաժաղակի կամ բաղաժաղին ամուսնութեան այս տեսակը , պարզապէս բնական դաշինք մընէ , կոնչ մը և էրիկ մարդու մը միջեւ կնքուած , որոնց յօժարութեան և յանձնաւութիւններուն ունկնդիր քաղաքապետութիւնը , ամուսնացողներու վկաներու ներկայութեան , կը վաւերացնէ արձանագրութեան պաշտոնական գործողութեամբ : Այս աշխարհականացած քանական ամուսնութիւնը . ուրիշն , այն պայմանագագային ամուսնութիւնը . ուրիշն , ամուսնացողները իրարու կը միացնէ գրութիւնն է , որ ամուսնացողները իրենց ժողովուրդներուն պահապահանութեանը տակո : Եւշընկերական մարմնոյն պաշտամանութեանը տակո : Եւշընկերական երկիրներէ շատեր այսօր քաղաքային ամուսնութիւնը պարտաւորիչ ըրած են իրենց ժողովուրդներուն : Անոնք , որ արդէն խզուած են կրօնքին ու եկեղեցիին հետ , կը բաւականանան պետութեան կողմէ պարագրուած այդ քաղաքային ամուսնութեամբ , իսկ անոնք , որոնք իրենց հաւատացեալի խիզճը գոհացած չեն զգար այդ պարզ պայմանագրութեամբ , հպատակած ըլլալու համար երկրին օրէնքին , իրեւ քաղաքացի , ամուսնութեան սրբազնան արարողութիւնն ալ կուգան ընդունիլ Եկեղեցիր հովանիին տակ , քաղաքային ամուսնութիւնը կնքելէ առաջ կամ յետոյ :

§§ . Ամուսնութեան կամ պսակի կատարման գործողութիւններու միջոցին , ընկերական օրէնքն ու եկեղեցական կամ կրօնական հրահանգութիւնը կարեւ որուղեցական կամ կրօնական հրահանգութիւնը կարեւ որութիւն ընծայած են , առաւել կամ նուած չափով , պորտիթիւնը ընծայած միջէ որոշ աստիճան մը մերկամ ճիւղահամարի , և մինչեւ որոշ աստիճան

ձաւոր ազգականներու ամուսնութիւնները արգիլուած են։ Այդ արգելքը հիմնուած է բարոյական և առողջապահական տեսակէտներու վրայ։ Մովսէսի օրէնքը մօտաւոր ազգականներու կամ արենակիցներու ամուսնութիւնը արգելեց (Ղեւտ. Ժ. 1.), ինչ ինչ պարագաներու մէջ միայն բացառաբար թոյլատրելով (Ծննդ. Հ. Թիւք. ԼԶ. Բ. Օր. ԻԵ. 5-10)։ Մեր եկեղեցոյ կրօնական սովորութեանը համաձայն ճիւղահամարը երեք աստիճանի վրայ ձեւուած է. ազգայնական կամ արենական, խնամէական և կնքահայրական։ Առաջինին համար այսօր եօթներորդ, երկրորդին համար չորրորդ կամ հինգերորդ, իսկ երրորդին համար երրորդ սերունդները միայն կրնան իրարու հետ ամուսնանալ։ Բայց պէտք է խոստովանիլ, թէ նախնական եկեղեցին ճիւղահամարի գործողութիւններու մէջ այդքան խստութիւններ ի գործ չէր գրած։ Բնդունուած էր և գործադրուած գրէթէ Հրէական օրէնքը, այնպէս որ կարդ մը արտաքին և ազգային ժողովներ բաւական հումարեցին արգելել մօր, քրոջ, մօրաքրոջ, կամ հօրաքրոջ հետ ամուսնութիւնը^(*)։ Հետզհետեւ խստացող արգելքներուն նպատակը եղած է քրիստոնէական ընտանիքի նոյն իսկ հեռաւոր անդամներուն մէջ անաղաբտ

(*) Զեռազիր եկեղեցական կանոնազիրքն մէջ մուծուած Ա. Առաքելական կանոններուն ՅՅրը կ'ըսէ. «Մովսէսի դրած պատուելները պիտի պահենք ամուսնութեան խնդրոյն մէջ, կարելի չէ ամուսնանալ քրոջ, աղջկայ, հօրաքրոջ մօրաքրոջ, հօր կնոջ, որդիի քրոջ հետո։ Նէուեսարփայլ Զրդ, Խարազի 23, 78, 87րդ, Տիմոթէոսի Արդ կանոնները զբէթէ միւնոյն արգելքը կը շեշտահն Պարոսափ ժողովը (771) իր 16րդ յօդուածով կ'արգիլէ չորրորդ ճիւղի ամուսնութիւնը, Սիսի ժողովը (1204) իր 7րդ յօդուածով հինգերորդ ճիւղը կ'արգիլէ, իսկ Ներաէս Շնորհալի յանկարծ 10րդ ճիւղերուն միայն կ'արտօնէ ամուսնութիւնը, զիկլով։ «Մի որ համազգեաց . . . պասկ օրինութեան դիցէ, այլ մինչև ի յերկուց կողմանցն զարրորդ ազգին զլիսաւորութիւն կատարեալ ունիցին» (Յօհ. 30)

պահպաննել բարոյականի մաքրութիւնը, յետոյ, զգուշանալ վատառողջ ու ֆիզիքապէս ցաւագար սերնդագործութենէ մը, որ արդիւնք է, կ'ըսէն բժիշկներէ ոմանք, մօտաւոր ազգայիններու միջև կնքուած ամուսնութիւններու։ Փորձերը ցոյց տուած են, սակայն, թէ այս սեղմումներու չափազանցութիւնը վնասած է մեր ազգային գոյութեան, և մէկն եղած է այն պատճառներէն, որոնք կրօնափոխներու կամ դաւանափոխներու թիւը շատցուցած են։

ՓՈ. Ամուսնութեան խնդրոյն մէջ ամենէն աւելի վիճուած նիւթը եղած է ամուսնալուծումի հարցը, վրիստոնէական տեսակէտով։ Հեթանոսներուն մէջ ամուսնութիւնը թէպէտ սրբազնն արարողութիւն, բայց ամուսնալուծումը սովորական դարձած իրողութիւն մը եղած էր։ Ամուսինի մը քմահանցյքը բաւական էր ամուսնական կցորդութիւնը խորտակելու, ջնջելու իրենց կընքած բնական դաշինքը։ Մովսիսականութիւնն ալ իր կողմէն կը գործադրէր ամուսնալուծում, ապահարզան կամ արձակումի րուղթ տալով երկու կողմերուն։ Ամուսնալուծումի հարցը Քրիստոսի ալ բերուեցաւ Հրէաներուն կողմէն։ Յիսուս հիմնաւելով Ս. գրոց այն հատւածին վրայ, թէ. «Ամուսնացողները այլ եւս երկու չեն, այլ մէկ մարմին» կը հաստատէ անգամ մըն ալ, թէ «Աստուծոյ միաւորածը պէտք չէ որ մէկը բաժնէ»։ Մովսէսի օրէնքին ապահարզանի դրութիւնը Հրէական բարքերու թուլութեան արդիւնք կը համարի, և կ'ըսէ։ «Ով որ առանց պոռնկութեան պատճառի իր կինը կ'արձակէ, շնութիւն կ'ընէ, և ով որ արձակուածը առնէ, շնութիւն կ'ընէ» (Մատթ. Ժ. 3-9. Մատթ. Ե. 31, 32. Մարկ. Ժ. 2-12)։ Պողոս առաքեալ վախնական սունդուածութեան դիցէ, այլ մինչև ի յերկուց կողմանցն զագմ Քրիստոնէութեան անդամներուն հետ եկեղեցին

ներս մտնելով կրնայ բարոյական վատթարացում մը տալ անոնց, հակառակ իրենց ջանքերուն, չատ խիստ վերաբերում մը կ'ունենայ ամուսնալուծումի սկզբունքին դէմ, և հիմնուելով Քրիստոսի խօսքերուն վրայ կը գրէ. «Ամուսնացածներուն կը պատուիրեմ ոչ թէ ես, այլ՝ Տէրը, որ կնիկը Երկինչ չզատուի, իսկ եթէ զատուի, առանց ամուսնանալու մնայ, կամ իր Երկանը հետ հաշտուի, ու Երիկը իր կինը թող չ'ձգէ» (Ա. Կորնթ. է. 3. 10. 11): Պօղոս ուրեմն, կընդունի միայն մարմինի բաժանումը (séparation de corps) կամ առժամեայ բաժանումը, առանց մէկ կամ միւս կողմին ամուսնութեան արտօնութիւն ապլու։ Լատին եկեղեցին տառական օրէնքը իր բովանդակ խսութեամբ կը պահպանէ ցարդ, առանց նկատի առնելու նոր կտակարանի ողին և դարուն պէտքերը։ Եկեղեցիի հին հայրերէն ումանք ամուսնութեան կամ պսակի անքակալելիութիւնը ա՛յնքան յառաջ կը տանէին, որ նոյն իսկ ամուսնացողներէն մէ կուն կամ միւսին մահը անգամ բաւական պատճառ մը չէին նկատէր ամուսնութեան կապի ջնջումին, և երկրորդ կամ երրորդ ամուսնութիւները չնութիւն կամ պոռնկութիւն կը համարէին (*)։

Փ 1. Միանգամ ընդ միշտ պէտք է ըսել, թէ Քրիստոնէական ամուսնութիւնը սկզբամբ ԱնլութԱնելի է, իրեն հիմ ունենալով ընտանեկան պարկելառութիւնը, սրբութիւնը, և լծակցական (conjugale) խիստ հաւատարմութիւնը։ Սակայն ամեն պատճառ իրեն անհրաժեշտ արդիւնքները կ'ունենայ. և ամեն արդիւնք կը

(*) Նէոկեսարիայի ժողովին (314—315) 7րդ կանոնը ապաշխարութեան կ'ենթարկէ երրորդ անգամ պսակուողները, նմանապէս Լաւողիկի ժողովը (365—յօդ. 4): Այս պատճառաւ էր որ երկու անգամ ամուսնացողները չէին ընդունուիր եկեղեցականութեան շարքին մէջ. (Կանոնիք Բարսղի. Յօդ. 42):

դատուի ու կը վճռուի իր պատճառին համաձայն։ Միեւնոյն օրէնքը կը կիրարկուի ամուսնութեան և ամուսնալուծումի խնդիրներուն մէջ։ Ուստի որչափ ատեն ամուսնացողներէ երկուքին մէջ ալ Քրիստոնէական ընտանեկան սկզբունքը զեղծուած չէ, որչափ ատեն քրիստոնէական պարկելառութիւնն ու սրբութիւնը ուսնակոխուած չեն, անհար է երեւակայել ամուսնալուծումի պարագայ, թէ իսկ երկու կողմանը համահաճութեամբը պահանջուի այն։ Քրիստոս և Առաքեալը քմահաճօրէն պատարուելիք ամուսնալուծումի դէմ կը ցցուին, կատարուելիք ամուսնալուծումի զէջ կամ պատժել նաև անմեղը, և չ'թողուլ որ ան իր համար պատժել նաև անմեղը, և պահանձեկանուած քրիստուած ընտանեկան երջանկութիւնը վերակազմէ։ Քայլքյուած ընտանեկան պահանկութիւնը վերակազմէ։ Քաց աստի նոր կտակարանի մէջ ամուսնալուծումի մասին գրուած քանի մը տողերը պատահական գրուածքներ են միայն, և կատարեալ օրէնքի մը զօրութիւնը չ'ունին։ Աւետարանական պատուէրներ կամ, որոնք համայնական և տեւական ոյժ չ'ունին, և կը վերաբերին առաքեալներուն կամ առաջին քրիստոնէաներուն միայն (օրինակ, Մատթ. Ե. 39. 40), և որոնց ընդհանրականութիւնը հիմնապէս պիտի վտանգէր աշխարհի ընկերական կարգ ու սարգը, քաջալերելով չարիքը։ Միեւնոյնն է նաև ամուսնալուծման ինդրոյին մէջ։ Ոչ մէկ քրիստոնէական ներողամիտ ոգի պիտի հանդուրժէր ամուսնացողներէն մէկուն կամ միւսին բարոյական յօռութիւններուն, և թողուլ որ անիրաւուածը, անմեղը չարչարուէր ու տանջուէր զեղծանողին հետ մինչև վերջ կապուած մնալով։ Ուրեմն ըսենք, թէ այսօրուան ընկապուած մնալով ըսենք, թէ այսօրուան ընկապուած քրիստոնէական ամուսնալուծումը անհրաժեշտ դուռուած քրիստոնէական պահանձութեան։ Եկեղեցին կողմէն կատարուած ամուսնալուծումները, ու-

բեմն, եթէ մէկ կողմէն էապէս կը հակառակին աւետարանական ոզիին, միւս կողմէն անոնք դժբախտ, բայց անհրաժեշտ արդիւնքներն են բարոյական զգացումի վատասեռումին: Սնհրաժեշտ է ընտանիքին մէջ վերապրենել Քրիստոնէական մաքուր ոգին, և միաւորութեան աստուածային ըմբունումը, որոնք միակ պայմաններն են ու միջոցները ամուսնալուծումը մերժելու համար: Յոյն եկեղեցին ամուսնալուծումի իր մասնաւոր օրինագիրքն ունի, որուն մէջ ճշգուած են ամուսնալուծումի շարժառիթները, որոնք են. իշխանութեան դէմ դաւագրութիւն, մէկին կամ միւսին կողմէն անհաւատարմութիւն, դաւաձանութիւն իրարու անձի դէմ. կասկածելի մեղապարտ յարաբերութիւն, յիմարութիւն, կրօնափոխութիւն, չնութեամբ դատապարտութիւն, անկարողութիւն, լքում, գանակոծում, լուսնոտութիւն, հակարնական մերձեցում և այլն: Մեր եկեղեցին հարկադրուած ըլլալով սկզբամբ ընդունի ամուսնալուծումը, դժբախտաբար այդ մասին դեռ ո՛ւ է օրէնք և հրահանգութիւն չունինք, որոշապէս ճշգող թէ որո՞նք են ամուսնալուծում յառաջ բերող պարագաները, և որո՞նք են այն մարմինները որոնք պիտի վճռեն ամուսնալուծումը: Լծակցական անհաւատարմութիւն, կրօնափխութիւն, խելագարութիւն և ընտանեկան յարկի լըքում, անիարողութիւն, քրէական յանցանքով դատապարտութիւն ամուսնալուծման պատճառներ նկատուած են մեր մէջ: Շահապիվանի աղգային ժողովը չնութեան հետ ամլութիւնն ալ պատճառ կը նկատէ ամուսնալուծումի (Յօդ. 4 և 5): Իսկ Հարց Հետեւողաց կանոններուն համաձայն (Յօդ. 7) ամուսնալուծումի պատճառներն են «բորոտութիւն, դիւահարութիւն, պիսակութիւն, գիճութիւն և մշտական պոռնկութիւն»:

ՕԾՈՒՄ ՀԻՒԱՆԴԱՑ

Գ2. Զենք գիտեր, թէ և ըլլայ ինչպէս և ի՞նչ իրաւունքով խորհուրդներու կարգը դասուած է «Օծումն հիւանդաց»ը, որ պարզապէս հիւանդներու տրուած այցելութիւն մըն է, աղօթքով բժշկելու կամ միսիթարելու համար զանոնք: Սրեւելեան ժողովուրդներու բժշկականութեան ամենատարրական ու ամենագործնական միջոցներն են եղած աղօթքը, ձէթն ու գինին: Աղօթքոյններն են եղած աղօթքը, ձէթն ու գինին: Աղօթքի պահանջման դերը այնքան նշանակական եղած է քին ու հաւատաքին դերը այնքան նշանակական եղած է ամանաւանդ ջղային և իստերի հիւանդութիւններու համար, որ հիները ստէպ դիմում կ'ընէին անոնց: Այսօրմար, որ հիները ստէպ դիմում մէջ ճեռք բերուած բժշկուուներուն ալ արդիւնքն են այդ աղօթքին, և ենթականերու տածած հաւատաքին: Այսօրուան ամենանիւթապաշտ գիտութիւնն անգամ կը հաստատէ աղօթքին ու պաշտ հաւատաքին կարեւոր դերը այդօրինակ հիւանդութիւններու հաւատաքին կարեւոր դերը այդօրինակ հիւանդութիւններուն համար (>): Ու ալ չենք զարմանար, երբ բուժումին համար (): Ու ալ չենք զարմանար, երբ կը տեսնենք որ Հրէաներն ալ միւնչնոյն նիւթերը կը գործածեն հիւանդներու բժշկութեան համար:

Գ3. Իւղով օծումը, ըլլայ թագաւորներու, քահանաներու, հիւրերու թէ հիւանդներու համար սովորական դարձած էր Սրեւելեան ժողովուրդներու, Յոյներու և Հռովմաէցիններու համար: Օծումը տեղի կունենար մաղերու, մօրուքի և գլուխին վրայ (Սաղմ. ձԴ. 15. ձԼԳ. 2): Օծումը ուրախութեան արտայատութեան յայտարար նշան մը եղած (Սաղմ. ԻԳ. 5. Մատթ. Զ. 17. Յովհ. ԺԲ. 3), անոր համար տրտմութեան և սու-

(*) Բրոֆ. Շարք, իր վախտարուժ, շատ ուժով կը շեշտէ հաւատքին կատարած դերը այդ օրինակ հիւանդութեանց մէջ, իր «La foi qui guérit» յօդուածով, հրատարակուած կանոնի Նիու Ռըվիւ հանդէսին մէջ:

գի օրերուն՝ օծումները կը դադրէին (Ես. կԱ. 3): Երբ բեմն Հրէաները մեռելներն ալ կ'օծէին անոնց մարմինին փառոթիւնը ուշացնելու համար (Մարկ. Ժ. 8 Ժ. 1. Ղուկ. Ի. 56): Իսկ հիւանդներու օծումը սովորական արարողոթիւն մըն էր, բժշկական տեսակէտով (Մարկ. Ջ. 13. Յակ. Ե. 14): Յիսուս չ'մերժեց հիւանդներու վրայ աղօթելու Հրէական սովորոթիւնը. երբեմն խօսքով, երբեմն հպումով, և երբեմն ալ ձեռնալրութեամբ ինքն ալ հիւանդներ բժշկեց (Մատթ. Է. 8-13. Ժ. 35. 36. Ղուկ. Դ. 41): Այդ բժշկոթիւններու պարագային հիւանդին հաւատալլ, և մեղքէ հրաժարելու մասդրոթիւնը էական պայմաններ էին (Մատթ. Թ. 28. 29. Մարկ. Ե. 34. Ժ. 52): Առաքեալները շարունակեցին Յիսուսի գործը հիւանդներու հանդէպ, անոնց վրայ մերթ աղօթելով (Գործք. Ի. 8-9), մերթ աղօթքին կցելով ձեռնալրութիւնը, այսինքն հիւանդին գլխուն վրայ ձեռք դնելը (Գործք. Թ. 12-18), և երբեմն ալ խւզով օծելով (Մարկ. Ջ. 13): Յակոբոս առաքեալ, իր թուղթին մէջ կը պատուիրէ. «Եթէ ձենէ մէջ հիւանդանայ, թող եկեղեցին երեցները կանչէ, անոր վրայ աղօթք թող ընեն, թող տիրոջ անունով խւզով օծեն, և աղօթքը հաւատքով պիտի փրկէ հիւանդը (յոդնածը). ... որովհետեւ արդարներուն օգնութեան կանչուած աղօթքը դօրաւոր է» (Ե. 14-16):

Պ4. Կաթոլիկ եկեղեցին հիմնուելով Յակոբոս առաքեալի այս հասուածին վրայ, հիւանդներու վրայ ըլլալիք ձեռնալրութիւնն ու կարդացուելիք աղօթքը վերածեց խորհուրդի մը, որ ծանօթ է, Վերջին Օծում անունով առանց խորհուրդ, թէ ո և է բանաւոր պատճառ գոյութիւն չ'ունէր այդ անօքէնութիւնը ընելու համար: Անհուն տարբերութիւնը որ կայ ընդ մէջ առաքեալներու կատարած օծումին և կաթոլիկներու «վեր-

ջին օծում»ին միջեւ, սա է, որ առաքեալները այդ օծումը կը կատարէին հիւանդները բժշկելու համար, մինչ Պապական հեկեղեցին «վերջին օծում» կը կատարէ կեանքէ անյոյս, մահամերձ հիւանդներու վրայ: Կարծես թէ իր «վերջին օծում»ը հիւանդներու բժշկութեան համար կատարուած օծում մը ըլլալէ աւելի, մեռելներու յատուկ օծում մը ըլլար, անոնց մարմինին փառութեան տարբաղադրութիւնը ուշացնելու սահմանուած:

Պ5. Հայ եկեղեցին չ'ունի և չ' ունեցած հիւանդներու վրայ օծում կատարելու սպորութիւնը, անոր համար այդ խորհուրդը մեր մէջ կոչուած է «կարգ կամ այցելութիւն հիւանդաց», կամ «կանոն զիշերային ժամուաղօթից», և դարձրալ անոր համար որ հիւանդներու բժշկութեան համար օծումը իբրև անհրաժեշտ պայման չ' հրամայուած: Յիսուս իւղ չգործածեց բնաւ իր բուժումներու միջոցին. առաքեալները հաղուաղէպ բայցառութենէ դատ, հիւանդներու բուժում կը կատարէին միմիայն աղօթքով ու ձեռնալրութեամբ: Հայ եկեղեցին Քրիստոնէական այսօրինակ սովորութիւններու կարգէն միայն անհրաժեշտն ու եականը գործադրեց, անահեւ հրահանգութիւններ, որոնց կիրարկումը կամ զանցառումը ու և է աղօթքութիւն պիտի չ'ընէին կատարուելիք արարողութեան վրայ: Հիւանդաց բուժումի գործին մէջ, ինչպէս կը տեսնուի առաքելական հրահանգութիւններէ, և Յակոբոս առաքեալի վերոյիշեալ խօսքերէն, աղօթքն ու հիւանդին կողմէն յայտնուած հաւատքն է որ պիտի տան բժշկութիւնը: -Աղջային քաւատքն է պիտի փառնապալի վայրկեաններուն, երբ լատին լաքական տապնապալի վայրկեաններուն, և Յամին աշխարհ Յային եկեղեցիի պետեր, Օրթոսոքս և Լատին աշխարհ հիւանդապատճեան մը խնդիրքը ներկայացուէր իրենց, հի օժանդակութեան մը խնդիրքը ներկայացուէր իրենց, անմիջապէս մէջ տեղ կը դնէին՝ անոնք՝ կրօնական-

ծիսական տարբերութիւններու հարցը, և մեզի կը պարագրէին վարդապետական կամ արարողական ձեւեր, որոնք օտար էին Հայկական սովորոյթներուն և ըմբռոնումներուն։ Այսպէս եղած է վերջին օծումի իւղին համար, մեր հայրապետներէն ոմանք ուղելով՝ կամայ ակամայ՝ պակսեցնել վէճի առարկաները, ուղած են հիւանդաց իւղին օրհնութիւնն ու գործածութիւնը արտօնել քահանաներուն իրբե ո՞չ-անհրաժեշտ, ու միեւնոյն ժամանակ ո՞չ-վենասակար նիւթ, բայց միշտ տևականութիւն չէ կրցած ունենալ այն։ Կ'երեւի թէ այդ իւղին գործածութեան միտումը աւելի շեշտուեցաւ ոմանց կողմէ, և կամ թ. դարերուն, բայց որովհետեւ առ հասարակ չգործադրուեցաւ, Խոսրով Անձեւացի, իր ժամակարգութեան մեկնութեան մէջ (Եջ. 172-173) կը գրէ. «Աղօթքը զօրութիւն կուտայ իւղին, անոր համար եթէ երկուքն ալ կատարուին լաւ է, և եթէ ծուլութեան կամ ուրիշ պատճառով իւղով օծում չ'կատարուի, պէտք է աղօթքը ընել, որովհետեւ անհրաժեշտէ»։ Իսկ Սարգիս Շնորհալի կ'ըսէ. «Հիւանդին առողջութիւն տուողը իւղը չէ, այլ Տիրոջ անունը» (Մեկն. Թղթ. Կաթ. ճառ Ժ.Ա.) Այսպէսով հիւանդներու բուժումի գործին մէջ մեր քահանան կրօնքին բաժինը կը կատարէ աղօրելով, թողլով որ բժիշկը իր իւղով կամ գեղերով օժանդակէ իրեն, հիւանդին բժշկութեանը համար։ Այս հրահանգութեան մէջ, բողոքական բոլոր եկեղեցիները, ինչպէս նաև Անդղիական եկեղեցին, համաձայն են մեզի հետ։ Օրթոսոքս Եկեղեցին ընդհակառակն, կ'ընդունի հիւանդաց օծում, միայն թէ չ'նկատեր զայն իրբե վերջին օծում, ըստ լատինականին, և մինչդեռ Լատին եկեղեցին հիւանդներու օծման իւղին օրհնութիւնը կը վերապահէ միայն եպիսկոպոսին, Օրթոսոքս եկեղեցին քահանային տուած է իւղօրհնութեան իրաւունքը։

ԿԱՐԳ ԵՒ ԶԵՐՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՔԱՅԱՆԱՅՈՒԹԵԱՆ

Փ. Աշխարհի գրէթէ բոլոր կրօններուն մէջ քահանայութիւնը մասնաւոր դասակարգ մը կազմած է։ Քահանան կամ կրօնի պաշտօնեան ընտրեալ մըն է, ժողովուրդէն զատուած մը, և հանդէպ իր ժողովուրդին ունի կարգ մը պարտականութիւններ, որոնք իրեն յատուկ են։ Գրէթէ միշտ քահանայութիւնը սրբագործուած է կամ միմիայն ընտրութեամբ, կամ ընտրութեամբ և ձեռնադութեամբ, և կամ ընտրութեամբ, ձեռնադրութեամբ և օծումով։ Նախ ըսենք, թէ արբել, արբացնել, արբագործել, սուրբ ընել, կը նշանակէ իրը կամ անհատը զատել նմաններէն, և նուիրական կոչումի մը ծառայեցնել։ Զօրօրինակ, եկեղեցիի մը չէնքը, ուրիշ չէնքերէ տարբերութիւն չ'ունի նիւթապէս, երբ զայն կ'օծենական մասնաւոր, նուիրական նպատակի մը համար, սրբացուցած, այսինքն անջատած կ'ըլլանք զայն ուրիշ շնորհէ, և յատկացուցած միմիայն աստուածալին պաշտամունքի նուիրական գործին։ Քահանան ի սկզբան անհատ մըն է, նման ուրիշ անհամաներու, երբ զայն կ'ընտրենք, կը ձեռնադրենք ու կ'օծենք, անջատած կ'ըլլանք իր նմաններէն, և յատկացուցած աստուածակ'ըլլանք իւղութիւնը ապասաւորութեան։ Այս ընտրութիւնն ու յին բանին սպասաւորութեան։ Այս ընտրութիւնն ու նուիրագործումը ապահովաբար կ'ենթաղրէ՝ եթէ անհատի մը վրայ է խնդիրը, ենթակային վրայ ըարոյական, մտաւոր, հոգեկան արժանիք, և անձնական առական կը կոչուի։

Պ. Մոլսիսական կրօնի քահանայական կարգե-

բու նմանողութեամբ, Քրիստոնէական եկեղեցին ալ ու նեցաւ իր քահանայութիւնը, Քրիստոս իբրև ձշմարիտ Քահանայապետ «ըստ կարգին Մելքիսեդեկի» (Եբր. 6. 6), ընտրեց իր առաքեալներն ու աշակերտները, և անոնց յանձնեց Աւետարանի քարոզութեան նուիրական գործը: Աւետարանի Քրիստոսընտիր պաշտօնեաները Ս. Հոգիին հոգեւոր օծութիւնն ստացան վերնատան մէջ (Գործք. Բ. 4): Երբ Քրիստոնէական եկեղեցին, Աւետարանին քարոզութեամբ սկսաւ սփռուիլ Հռոմէական պետութեան հեռաւոր կէտերուն վրայ, առաքեալները, այդ եկեղեցիներու հոգեւոր մատակարարութեան գործը յանձնեցին իրենց կողմէ ընտրուած և ձեռնադրուած հպիսկոպոսներու և երէցներու (Գործք. Զ. 6. ԺԴ. 3. ԺԴ. 22. Ի. 28. Ա. Տիմ. Դ. 14. Եփես. Դ. 11. Ա. Պետր. Ե. 1 և լն.) և անոնց պատուիրեցին, որպէս զի ի պահանջել հարկին իրենք ալ երէցներ ձեռնադրեն եկեղեցիի սպասաւորութեան համար, պատուիրելով միեւնոյն ժամանակ, ամէկուն վրայ շուտով ձեռք չդնել» (Ա. Տիմ. Ե. 22). որպէս զի անարժաններ չ'սպրդին եկեղեցւոյ պաշտօնէութեան մէջ: Քահանայական ձեռնադրութեան այս կարգը Քրիստոսին ու առաքեալներէն շարունակաբար և անընդհատորէն աւանդուեցաւ սերունդէ սերունդ, և շարունակեց մինչեւ մեր օրերը առաքելական եկեղեցներու մէջ:

Փ8. Քահանայական կարգը կարելի էր ստանալ՝ ի հումքն, աստիճանաբար, սկսելով եկեղեցւոյ դռնապանութեան խոնարհ աստիճանէն: Եօթն են այդ աստիճանները. 1. Դռնապանութիւն, 2. Դպրութիւն կամ Ծննդեցողութիւն, 3. Երդմնեցուցչութիւն, 4. ջակնկալութիւն, 5. Կիսասարկաւագութիւն. 6. Սարկաւագութիւն, 7. Քահանայութիւն: Բուն ձեռնադրութիւնը կ'սկսի հինգերորդ աստիճանէն: Թէպէտ այսօր եկեղեց-

ւոյ մէջ այդ աստիճաններէն առաջին չորսը կորսնցուցած են իրենց գոյութեան իրաւունքը, բայց քահանայական ձեռնադրութեան ատեն ընծայցուն պարտաւորէ այդ աստիճաններէն անցնիլ քահանայական իշխանութեան ու աստիճաննին համեմելու հոմար: Այս պատճառաւէ, որ այսօր եկեղեցւոյ մէջ երաժշտութիւն և ընթերցողութիւն ընողներէն ամենքն ալ ո՛չ քահանայացուներ են, և ո՛չ իսկ ստացած են դպրութեան չորս աստիճանները: Քահանայական ձեռնադրութեան և օծման պաշտօնեաներն են եպիսկոպոսներն ու հայրապետները, որոնք իրենց առաքելաւանդ իշխանութեամբ քահանայութեան չնորհը կը փոխանցեն արքանաւորներու, պահելով առաքեալներու կողմէն գործադրուած ձեռնադրութեան ձեւը, և Ս. Հոգիին հոգեւոր օծման իրեր յայտարար նշան գործածելով Ս. Միւռոնը: Քահանայական զանազան աստիճաններն են, որ նուիրապետութիւնը (hiérarchie) կը կազմեն բոլոր եկեղեցիներու մէջ:

Փ9. Հայկական առաքելական եկեղեցւոյ մէջ նուիրապետութեան գլուխը կը գտնուի Հայրապետը կամ կաթողիկոսը, որ կը կոչուի նաև Եպիսկոպոսապետ և Ծայրագոյն Պատրիարք, և որ կ'ընարուի բարձրագոյն հոգեւորականութեան մէջէն, թէպէտ մեր եկեղեցական պատմութիւնէն զիտենք, թէ աշխարհականներէ ալ ուղղակի կաթողիկոսութեան ընտրուեցան Մեծն Ներսէս և Զաքարիա: Կաթողիկոսէն յետոյ կուգան Եպիսկոպոսները (արքութիւնը պարզ տիտղոս մըն է միայն), Վարդապետները (ծայրագունութիւնը ուսումնականի տիտղոս մըն է, եկեղեցական կարգով վկայագրութիւն մըն է, քահանաները ու արեղաները, յետոյ սարկաւագները, ու ամենէն խոնարհ աստիճանին վրայ՝ դպիրները: Ն հան արեւելեան եկեղեցիներու սովորութեան մեր քահանայութիւնն ալ երկու դասակարգի կը բաժնուի.

ամուսնացեալ ևամուրի: Աբեղան ամուրի քահանայ մընէ պարզապէս: Եւ այդ երկու որոշ գասակարգերն են, որ իրենց իրաւասութեան սահմաններուն մէջ, իրեց պաշտօնը կը կատարեն, ուսուցանելով Աւետարանի բարոյականն ու վարդապետութիւնը, մատակարարելով եկեղեցւոյ խորհուրդները հաւատացեալներուն փրկութեանը համար, միխթարելով, քաջակերելով, և հաւատացեալներու սրտին մէջ վառ պահելով Աստուծոյ սէրն ու երկուղը, և առաջնորդելով զանոնք դէպի յաւլտենական կեանքը:


100. Առաքելական թուղթերու մէջ մասնաւորապէս կը շեշտուի, որ ուշադրութիւնը ըլլայ, ինչպէս տեսանք (96) երէցներու ընտրութեան միջոցին. և Պօղոս մասնաւորապէս Տիմոթէոսի (Ա. Տիմ. Գ. 2-10) և Տիրոսի (Ա.) գրած միջոցին կը պահանջէ, որ անոնց կողմէ կարգուած եպիսկոպոսներն ու երէցները ըլլան «Անարատ, միակին, հեղ, խոնարհ, պարկեցտ, հիւրասէր, ուսուցիչ»: Կը պահանջէ, որ անոնք թշնամանող, հարկանող, զօշաքաղ չըլլան, լաւ վերակացու եղած ըլլան իրենց տունին, ամեն կերպով փորձուած, և նոյն իսկ ուրիշներու կողմէն բարի վկայուած: Եւ կը յանձնարարէ, որ երէցներն ու եպիսկոպոսները շատ երիտասարդ. «յատաղատունկ» չ'ըլլան, որպէս զի հպարտանալով չ'մուրին: Առաքելական պատուէրներու վրայ հիւմնուելով Նիկիոյ ժողովն ալ կանոնեց «Երիտասարդները, մտքով խակերը, տիմարներն ու տգէտները, դինեմոլներն ու օրէնքէ կարգէ ու կանոնէ անտեղիակները» չձեռնադրել բնաւ: Եւ մեր ձեռնադրութեան մաշտոցը ձեռնադրող եպիսկոպոսնին կը պատուիրէ քահանայ չձեռնադրել մէկը որ տգէտ է, «Որորվհեաեւ, կ'ըսէ, տգիտութիւնը անսասուննրուն յատուկ է, և անբան մը քահանայ չ'կրնար ըլլալ»:

101. Հայ եկեղեցին ձեռնադրութեան խորհուրծը կատարելու համար, պահելով հանդերձ վերոյիշեալ առաքելական և ժողովական պատուէրները, քահանայայկան ընծայցուին ձեռնադրութեան համար կը պահանջէ, որ 1. ընծայցուն կատարեալ ըլլայ ֆիզիքապէս, և հասուն տարիքով, 2. ըլլայ օրինաւոր ամուսնութեան մը հարազատ զաւակը, 3. Ունենայ բարոյական արժանիք, մտաւոր զարգացում, անսայթաք կրօնաւորելու երաշխիք. 4. քահանայութեան նուիրուելու ներքին կոչում (Բ. Կորնթ. Ժ. 18. Եթր. Ե. 4). 5. Ժողովրդական ընտրութիւն և բարի վկայութիւն ընծայցուին համար: Այս պատճառով է որ առանց ժողովրդական հաւանաւութեան կուսակրօն մը քահանայանալէ յետոյ, մասնաւոր պաշտօնի կը կոչուի միմիայն ժողովրդային և ժողովական ընտրութեամբ: Ձեռնադրուած քահանային կամ եկեղեցականին պարտականութիւնն է ամբողջովին նուիրուել ա'յն ժողովուրդին, որուն կողմէն կ'ընտրուի, եկեղեցին՝ որուն սպասաւորելու կոչւած է, և իր ապրած կեանքին մէջ ցոլացնել Աւետարանին բարոյականը, որուն քարոզիչը ըլլալ կոչուած է: Անձնուրացութիւնն ու անշահասիրութիւնը պէտք է եկեղեցականին նկարագիրը կազմեն, քանի որ իրենց՝ ինչպէս և բոլոր հաւատացեալներու նախատիպը Քրիստոս է: «Ինծի նմանողներ եղէք, ինչպէս ես Քրիստոսին» կ'ըսէ առաքեալը (Ա. Կորնթ. Դ. 16. ԺԱ. 1. Փիլիպ. Գ. 17): Երբ քահանան իր այս պարտականութեան մէջ կը թերանայ արդեամբ և գործքով, կարծես այլ ևս իրաւունք չ'ունենար իր վրայ կրելու քահանայութեան կոչումը: Ներսէս չնորհալի, հակառակասէր ու ատեցող կոչումը: Ներսէս չնորհալի, հակառակասէր ու ատեցող կոչումը: Եկեղեցականներու մասին կը գրէ: «Եթէ ընկերոջ հետ խոռված քահանաններէն մէկը սէրէն աւելի ատելութիւն, նը կը սիրէ, և խաղաղութենէն աւելի խոռվութիւնը,

և արտմութեան պատճառը մէջաեղէն չ'վերցներ, և չը հաշտուիր խոնարհող և հաշտուիլ ուզող ընկերին հետ, անիկա պէտք չէ քահանայագործութիւն ընէ, որչափ ատեն արտմութեան և բարկութեան դեւը իր մէջ կը բնակի» :

102. Օրթօսոքս եկեղեցւոյ եկեղեցական նուիրապետութիւնը գրէթէ յար և նման է մերինին։ Յոյն եկեղեցականութիւնն ալ կազմուած է ամուրի և ամուսնացեալ անդամներէ։ Կաթոլիկ եկեղեցին Դ. դարէն ի վեր աշխատեցաւ ամուսնացեալ կղերականութիւնը ջնջել, որպէս զի կարելի ըլլար պատրաստել Պապերու աշխարհական փառասիրութիւններուն մեքենայօրէն ծառայող ամուրիներու բանակ մը։ Այս նպատակին համանելու համար Գրիգոր է։ Պապ ամուսնութիւնը պոռնկութիւն անուանեց։ և ամուսնացած կղերի ջնջումը վճռեց։ Թէպէտ ժԴ. դարուն Թովլմաս Գգուինացի ամուսնացած քահանայութեան պէտքը մատնանշեց Լատին եկեղեցւոյ մէջ, բայց Գրիգոր է.րդի քմահամ անօրէնութիւնը շարունակեց իր գոյութիւնը բովանդակ խստութեամբ։ Միայն վերջերս արեւելեան երկիրներու համար գործող կրօնաւորներու ամուսնութիւնը հազուադիպօրէն ու բացառաբար արտօնուած կը թուի ըլլալ, Զեռնադրութեան խնդրոյն մէջ Հռովմի եկեղեցւոյն կարգ մը կամայականութիւնները տեսնելով Լուտեր, մերժեց, ձեռնադրութեան կարեւորութիւնը, և իր հիմնած եկեղեցիներուն աշխարհական քարոզիչներ կարգեց։ Հետեւաբար պիտի կրնանք ըսել, թէ բոլոքական եկեղեցւոյ մէջ, եկեղեցականութիւնը գոյութիւն չ'ունի այն խմաստով, որով մենք կ'ըմբռնենք զայն, իրբեւ Քրիստոսաւանդ սովորութիւն։ Արեւելեան երկիրներու մէջ, սակայն ուրեք ուրեք ձեռնադրութիւններ աեղի կունենան, Առաքելական սովորութեան վերընկալ նմանողութեամբ մը։

Անգլիքան եկեղեցին, թէպէտ ձեռնադրութիւն ունի, բայց զայն խորհուրդ չնկատեր։ Լատին եկեղեցին, իր չափազանցուած ծայրայեղութիւնով, պահ մը ուզեց անվաւեր հոչակիել Անգլիքան եկեղեցւոյ ձեռնադրութիւնը, առանց յաջողելու, սակայն Այդ ձախող փորձերէն վերջն է, որ ձօն Լէնկարդ անգլիացի Լատին քահանան, իր Պատմութիւն Անգլիոյ գործին մէջ կ'ըսէ։ «Յարքէր (անգլիքան) եպիսկոպոսին ձեռնադրութիւնը կատարուեցաւ՝ թէպէտ թեթև տարրերութեամբ մը, եղուարդ Զ.ի ձեռնադրութեան ծիսարանին համեմատ։ Երկու ձեռնադրողները, Պարլով և Օտոգէնս, Հռովմէական քահանայապետութենէն կարգեալ եպիսկոպոսներ էին, երկու ուրիշներն ալ վերանորոգութեան ծիսարանին համեմատ ձեռնադրուածներ»։ Լատին քահանայի մը այս վկայութիւնը գնահատելի նշանակութիւն մ'ունի անշուշտ ինպաստ Անգլիքան ձեռնադրութեան վաւերականութեանը։



ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ

	Հատուած	Էջ
Տեղեկագիր թնհանութեան Յառաջաբան		է—լ թ—ժ
ՔՐԻՍՏ. ԵԿԵՂԵՑԻՈՅ		
ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ	1— 5	11— 14
ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ	6— 10	15— 18
ՓՐՂԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ	11— 16	18— 26
Ա . Հոգին	17— 21	26— 31
Հայր	22— 23	31— 33
Ա . ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ	24— 26	33— 38
ԱՐԱՐՀԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ	27— 34	38— 47
ԱՆՄԱՆՈՒԹԻՒՆ հոգւոյ	35— 42	48— 55
ԵԿԵՂԵցի	43— 51	56— 68
ԽՈՐՀՈՒԹԻԴ	52— 53	69— 71
ՄԿՐտութիւն	54— 59	71— 77
Դրոշմ	60— 63	78— 82
Ապաշխարութիւն	64— 72	82— 91
Հաղորդութիւն	73— 82	91— 108
Պատկ կամ Ամուսնութիւն	83— 91	108— 118
Օծումն հիւանդաց	92— 95	119— 122
Կարգ կամ Զեռնադրութիւն	96— 102	123— 129

ՀՀ Ազգային գրադարան



NL0161311

ԳՐԱՎԱՃԱՌ - ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Յ. ԳՐԱՆԵԱՆ

Թիւ 25, Զագմազձրլար, Կ. Պողիս

ՀԵՂԻՆԱԿԻՆ ՄԻՒԾ ԵՐԿԵՐԸ

Թուղթ Հովուական Բ. Տիպ	5 դր
Պատկերներ	5 »
Դրուազներ (սպառած)	15 »
Հովիւին Խրատները	10 »
Չոպաններ Նէսախին	10 »
Հովիւին Խրատները Եւ Չոպաններ Նէսախին (միասին)	15 »
Քրիստոնէական Բարոյականը	5 »
Հին Աւետիք Պատմութիւն (ընդ մամլով)	
Նոր Աւետիք Պատմութիւն (ընդ մամլով)	

Բոլոր այս գրեները լաւագոյն պայմաններով կը ծախուի

մեր գրատան մէջ :

Դրատանս հասցեն է՝

كتبهانه او حانس قيلجيان

در سعادت چاقا قيلر نوسرو ۲۵

LIBRAIRIE-EDITEUR

H. KILIDJIAN

Rue Tchakmakdjilar No. 25

Constantinople.